

# Լիսանոնա

## Միայն Նա կարող էր դառնալ մեր Փրկիչը, էջ 8

Հարությունը մեզ ի՞նչ  
ճշմարտություններ է սովորեցնում  
մարմնի մասին, էջ 14

Ազատվել սեռական չարաշահումների  
բեռից, էջ 22

ճանաչիր քո թշնամուն. Ինչպես  
դիմակայել սատանայի չորս  
մարտավարություններին, էջ 30





Աշխատողները մի սշան էին դրել Բեռն Շվեյցարիա Տաճարի շինհրապարակում:  
Տաճարը նվիրագործվել է 1955թ. սեպտեմբերին Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի  
կողմից: Դա առաջին տաճարն էր, որ կառուցվեց Հյուսիսային Ամերիկայից դուրս,  
և առաջինը, որտեղ արարողություններ էին կատարվում անգլերենից բացի նաև  
այլ լեզուներով:

Լուսանկարը տրամադրել է Եկեղեցու  
Պատմության Գրադարանը



**ՈՒՂԵՐՁՆԵՐ**

- 4 Առաջին Նախագահության Ուղերձ: Արդարները կապրեն հավատքով**  
Նախագահ Դիտեր Ֆ. Ուլսդորֆ
- 7 Այցելող ուսուցիչների ուղերձ: Քահանայության երդումը և ուխտը**



**ՎԱՏԻ ՎՐԱ**  
Երեք Մարիամները զերեզմանում, Ուիլիամ-Ադոլֆ Բուգերո

**ԸՆՏՐՎԱԾ ՆՈՂՎԱԾՆԵՐ**

- 8 Փրկիչի Քավությունը՝ ճշմարիտ քրիստոնեության հիմքը**  
Երեց Ռոբերտ Դ. Շեյլս  
*Քանի որ Նա սպրտում է, մենք բողոքս կրկին կապրենք:*
- 14 Հիսուս Քրիստոսի հարությունը և ճշմարտություններ մարմնի մասին**  
Դեյվիդ Ա. Էդվարդս  
*Հիսուս Քրիստոսի հարությունը ուսուցանում է մեզ առանցքային ճշմարտություններ մարմնի հավերժական և սուրբ բնույթի մասին:*
- 22 Հույսի և ապաքինման կամուրջ**  
Նանոն Թալլի  
*Ինչպե՞ս կարող եք դուք կամ ձեր սիրելիին գտնել խաղաղություն, հույս և ապաքինում այնպիսի դաժան ու ցնցունաչին իրադարձությունից հետո, ինչպիսին սեռական բռնությունն է:*

- 28 Հին ընտանեկան ալբոմ. ընտանեկան պատմությունների գորությունը**  
Ամներիս Պուսկասու  
*Իմ նախնիների պատմությունները և կյանքը շարունակում են անբացնել ինձ:*
- 30 Պատերազմը շարունակվում է**  
Երեց Լարի Ռ. Լորենս  
*Երեց Լորենսը կիսվում է սատանայի չորս ռազմավարություններով և թե ինչպես դիմակայել դրանց:*


**ԲԱԺԻՆՆԵՐ**

- 20 Երգ: Եկ, եկ Նրա մոտ**  
Սթիվեն Զ. Ջոնս և Մայքլ Ֆ. Մուդի
- 38 Նկարներ հավատի թեմայով: Սկադրիթ Բոկումա**
- 40 Վերջին Օրերի Սրբերի ձայները**
- 80 Մինչև նոր հանդիպում: Աստծո գորությունը**  
Երեց Բոյուս Ռ. Մակքոնկի



**44** Հասկանալ հայրապետական օրհնությունը  
Ալլի Արնելլ և Մարգարետ Վիլդեն

**48** Նախապատրաստվելով նոր ճամփորդության  
Կարինա Մարտինս Պերեյրա Զորրեա դե Լիմա  
*Իմ սեփական ընտանիքը ստեղծելու հետ կապված կասկածներն ու վախերն անհանգստացնում էին ինձ: Ինչպե՞ս կարող էի խաղաղություն գտնել:*

  
**Տեսե՛ք, արդյոք կարող եք գտնել այս համարում թաքնված Լիսիոնան: Ակնարկ. Այն փայլո՞ւմ է:**

**50** Ինչպե՞ս կարող եմ սովորել իմ մտքում և իմ սրտով:  
*Ո՞րն է իմ հարցերի պատասխանները գտնելու և սուրբ գրություններն ավելի լավ հասկանալու Տիրոջ ուղին:*

**52** Անհատականացրեք ավետարանի ձեր ուսումնասիրությունը  
*Մովորե՛ք, թե ինչպես կարող եք ավելի ընդունել ավետարանի ձեր ուսումնասիրությունից:*

**56** Եկեղեցու ղեկավարների պատասխանները:  
**Ինչպե՞ս գտնել իսկական խաղաղություն**  
Երեց Զվենթին Լ. Զուք

**57** Մոռացված գրքեր, հիշվող վկայություններ  
Աբիգեյլ Դ. Տերրեր

**58** Նրանք տեսան Նրան  
*Կարդացե՛ք Հարության ստաժ Փրկիչի վերաբերյալ այս վկայությունները և մտածե՛ք, թե ինչպես դուք ևս կարող եք լինել Նրա Հարության վկան:*

**62** Մեր տարածքը

**63** Պաստառ: Առաջ, քրիստոսի գինվորներ

**64** Հարցեր և պատասխաններ  
*Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ Աստված լսում է իմ աղոթքները:*



**66** Անդրեյը և վատ բառը  
Ջուլի Զ. Դոնալդսոն  
*Մի փոքրիկ վատ բառը մեծ վնաս չի հասցնի, այնպես չէ՞:*

**68** Պատասխաններ Առաքյալից:  
**Ինչպե՞ս կարող եմ օգնել իմ ընտանիքին ուժեղ լինել:**  
Երեց Դեյվիդ Ա. Բեդլար

**69** Պատրաստվե՛ք տաճարին ամեն օր  
Ջոյ Դ. Ջոնս  
*Պարզե՛ք, թե ինչպես Քույր Ջոնսը կարևոր նպատակ դրեց:*

**70** Սթարը շողում է  
Ջեյն Մաքքերայդ  
*Մթառը հուզված էր, քանի որ առաջին անգամ էր գնում Երեկաների Խոսք: Արդյո՞ք նա կկարողանա ընկեր գտնել:*

**72** Լույս եղե՛ք  
Էլիզաբեթ Փինբորո  
*Ողջ եղանակ լավ ընկեր լինելու համար:*

**73** Եկեղեցու պատմական դեմքերը: Ավետարանի տարածումը

**74** Մտածել շիսուսի մասին Լիևդի Թաններ  
*Միան իմանալով է հաղորդության մասին:*

**76** Պատմություններ շիսուսի մասին: շիսուսը տվեց մեզ հաղորդությունը  
Զիմ Վեբ Ռայդ

**79** Զատիկի շուշանները



**ԱՊՐԻԼ 2017 ՀԱՏՈՐ 18 ՀԱՄԱՐ 1  
ԼՐԱՆՈՒՄ 14444 201**

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

**Առաջին Նախագահություն.** Թոմաս Ս. Մոնտան, Ներին Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուլտրոթ

**Տասներկու Առաջյալների Քվորում.** Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Շ. Օուգս, Մ. Ռասսել Բալլարո, Ռոբերտ Դ. Շելլս, Ջեֆրի Ռ. Նոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Բլենթին Լ. Բուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսոն, Ռոնալդ Ա. Ռասթանդ, Գարի Է. Սթիվենսոն, Դեյ Գ. Ռեյնալդ

**Խմբագիր.** Ջոզեֆ Վ. Սիտառի  
**Խմբագրի օգնականներ.** Ռանդալ Բ. Բաննեթ, Բերոլ Ֆ. Մակքոնկի

**Խորհրդատուներ.** Բրայան Բ. Էջոն, Ջին Բ. Բիլգեմ, Լեգան Ռ. Բրոքիս Կրոս, Քրիստոֆել Գոլդեն, Դուգլաս Դ. Նոլան, Էրիկ Վ. Կոսիչկե, Լարի Ռ. Լորենս, Բերոլ Մ. Սթեֆենս

**Գլխավոր տնօրեն.** Փիտեր Ֆ. Էվանս  
**Եկեղեցու Ամսագրերի տնօրեն.** Այան Ռ. Լոյբոգ  
**Գործարար ղեկավար.** Գարֆ Բենոն

**Գլխավոր խմբագիր.** Արամ Ս. Օլսոն  
**Գլխավոր խմբագրի օգնական.** Ռայան Բար Հրապարակման օգնական, Մեգան Սեյց Գրողներ և խմբագրողներ. Բեթանի Բարթոլոմյու, Բրիթանի Բիթլ, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Լորի Ֆուլեր, Գարեթ Չ. Գարֆ, Լառեն Փորթեր Գանթ, Շառլոտ Լարկլայթ, Մայքլ Ռ. Մորիս, Էրիկ Բ. Մորոգո, Սայի Ջոնսոն Օդեբրիկ, Ջոշուա Ջ. Փերկի, Յան Փիլսբորո, Ռիչարդ Մ. Ռոմիկ, Միդդլ Էնն Սեյլո, Մարիսա Վիդիսոն

**Արվեստի գծով գործադիր տնօրեն.** Ջ. Ալբրե Նադեան  
**Սկզբնական տնօրեն.** Թեդ Ռ. Փեթերսոն  
**Չլվարարներ.** Ջանեթ Էնդրյուս, Նեյ Դ. Անդրյուս, Ա. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայլո, Դեյվիդ Գրին, Ջուլիան Չիսկի, Էրիկ Դ. Ջոնսոն, Մյուզան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մուլ, Մարք Վ. Ռոբիսոն, Ռաքել Սմիթ, Բրեդ Թրոլ, Կ. Նիկոլ Վուլֆենհորստ

**Մտավոր սեփականության համակարգող.** Ջոզեֆ Նեբեցեր Օս

**Հրատարակչության տնօրեն.** Ջեյն Էնն Փիթերս  
**Հրատարակում.** Գլեն Ադեյր, Քոնսեթ Բոթորֆ Բրիջ, Ջուլի Բրոդեթ, Բրայլեն Վ. Գիցի, Գինևի Չ. Նիլսոն, Գեյլ Թեյթ Մանֆրեթի, Դերեկ Ռիչարդսոն

**Նախատպագրություն.** Ջոշուա Դեննիս, Ամոն Նարիս  
**Տպագրության տնօրեն.** Մարիլեն Տ. Լյուիս  
**Քաշխման տնօրեն.** Տրոյ Կ. Վեյնգա

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկատվություն համար այցելեք [store.lds.org](http://store.lds.org) կամ դիտեք Եկեղեցու ձեռնարկի քաշխման կենտրոն կամ ծխի/ցրտի ղեկավարին:

**Զեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝** [liahona.lds.org](mailto:liahona.lds.org)  
**Ինքնուրույն՝** [liahona@ldschurch.org](mailto:liahona@ldschurch.org) կամ **փոստով՝** [Liahona, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA](mailto:Liahona, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA):

*Լիահոնան* (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թամիլ, թայերեն, թելուգու, թունգերեն, ինդոնեզերեն, իսպաներեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, լատիշերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբատի, կորեերեն, հայերեն, հայերեն, հինգի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալայալ, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, շվեյցերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամոյերեն, սինհալա, սլովեներեն, սլոնիաներեն, ուկրաիներեն, ուրդու, ըբեռաան, ֆիններեն, ֆիլիպինյան, ֆրանսերեն (եզդներով): (Հրատարակության համահավասարությունը տարբերվում է ըստ լեզուների):

© 2017 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

**Ներկայացված իրավունք.** Եթե հատուկ նշված չէ, *Լիահոնայի* նյութերը կարելի է բազմացնել անձնական ոչ կոմերցիոն նպատակով օգտագործելու համար (այդ թվում Եկեղեցու կոչումների համար): Այդ իրավունքը կարող է ցանկացած մասնակց սահմանափակվել: Տեսողական նյութերը չեն կարող բազմացվել, եթե սահմանափակումներ են նշված տվյալ աշխատանքի նկարագրական տողում: Ներկայացված իրավունքի հետ կապված հարցերը պետք է ուղղել. Intellectual Property Office, 50 E. North Temple St., L13, Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. [cor-intellectualproperty@ldschurch.org](mailto:cor-intellectualproperty@ldschurch.org):

*Լիահոնան* տարբեր լեզուներով կարելի է գտնել [www.liahona.lds.org](http://www.liahona.lds.org) ինտերնետային կայքում:

**For Readers in the United States and Canada:**  
April 2017 Vol. 18 No. 1. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is \$4.00 per year; Canada, \$4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address must be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 507.1.5.2). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

# Մտքեր ընտանեկան երեկոյի համար

*Այս համարը պարունակում է հոդվածներ և միջոցառումներ, որոնք կարող են օգտագործվել ընտանեկան երեկոյի համար: Սհա երկու օրինակ:*



«Նրանք տեսան նրանք», էջ 58. Ընտանիքով հոդվածը կարողացուց հետո, դուք կարող եք քննարկել ուղիներ, թե ինչպես կարող եք լինել Քրիստոսի վկաներ՝ նույնիսկ Նրան ֆիզիկապես չտեսնելով: Դուք կարող եք առաջարկել գաղափարներ, որոնք ձեզ ավելի կմոտեցնեն Փրկիչին, ինչպես օրինակ՝ գտնել հնարավորություններ ձեր համայնքի նորաբնակներին ծառայություն մատուցելու համար, սովորել Փրկիչի կյանքի մասին սուրբ գրություններն ուսումնասիրելիս, հոգ տանել մի զույգի մասին, որպեսզի նրանք կարողանան տաճար այցելել, օգնության հասնել կարիքի մեջ գտնվող ընկերոջը: Դուք կարող եք նաև տեսաֆիլմ դիտել, որը գտնվում է [mormon.org/easter](http://mormon.org/easter):

«Պատրաստվեք տաճարին ամեն օր», էջ 69. Դուք կարող եք խորհել ընտանեկան երեկոն «ընտանեկան պատմություն և տաճարի երեկո» թեմային նվիրելու մասին: Դուք կարող եք սովորել, թե ինչպես մուտքագրել անունները և փնտրել ընտանեկան գրառումները կամ քննարկեք տաճարային արարողությունների կարևորությունը և դիտեք աշխարհի տարբեր մասերում գտնվող տաճարների նկարներ: Եթե դուք ապրում եք տաճարի մոտ, կարող եք գնալ տաճարային հրապարակ և քննարկել, թե տաճարներն ինչպես կարող են մեզ ավելի մոտեցնել Երկնային Հորը և օգնել մեզ զգալ Նրա սերը:

## ԱՎԵԼԻՆ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

*Լիահոնան* և Եկեղեցու այլ նյութեր տարբեր լեզուներով առկա են [languages.lds.org](http://languages.lds.org)-ում: Այցելեք [facebook.com/liahona.magazine](https://www.facebook.com/liahona.magazine) (առկա է անգլերեն, պորտուգալերեն և իսպաներեն) և գտեք ոգեշնչված ուղերձներ, ընտանեկան երեկոյների մտքեր ու նյութեր, որոնցով կարող եք կիսվել ձեր ընկերների և ընտանիքի հետ:

## ԱՅՍ ՀԱՄԱՐԻ ԹԵՄԱՆԵՐԸ

*Հանարները ցույց են տալիս հոդվածի առաջին էջը:*

- Աղոթք, 41, 62, 64
- Ապաքինում, 22
- Գայթակալություն, 30, 63
- Գիտելիք, 50, 52
- Եկեղեցու պատմություն, 73
- Ջառնիկ, 14, 58, 76, 79
- Ընկերություն, 70, 72
- Ընտանեկան պատմություն, 28
- Ընտանիք, 28, 42, 48, 68
- Խաղաղություն, 48, 56, 62, 66
- Լեզու, 40, 66
- Շառայություն, 4, 42, 68

- Հաղորդություն, 74, 76
- Հայրապետական օրհնություններ, 44
- Հավերժական կյանք, 8, 14
- Հարություն, 8, 14, 58, 76, 79
- Հիսուս Քրիստոս, 8, 14, 30, 56, 58, 74, 76, 79
- Հոգևոր գործություն, 4, 30, 63, 80
- Հույս, 22, 48
- Մարմին, 14
- Ուխտեր, 7

- Պատերազմ Երկնքում, 30
- Սեռական բռնություն, 22
- Սուրբ Հոգի, 50
- Սուրբ գրությունների ուսումնասիրություն, 43, 52, 57
- Վկայություն, 38, 50, 57, 58
- Տաճարային երկրպագություն, 69
- Քահանայություն, 7, 80
- Քաջություն, 40, 57, 63
- Քավություն, 8, 22, 74, 76
- Օրինակ, 72



**Նախագահ  
Դիտեր Ֆ.  
Ուխտորֆ**

Առաջին նախագահության երկրորդ խորհրդակալ

# ԱՐԴԱՐՆԵՐԸ ԿԱՊՐԵՆ ՀԱՎԱՏՔՈՎ

## Քահանան և օճառ պատրաստողը

**Կ**ա մի հին հրեական պատմություն օճառ պատրաստողի մասին, ով չէր հավատում Աստծուն: **Մ**ի օր, երբ քայլում էր քահանայի հետ, նա ասաց. «Կա մի բան, ինչը ես չեմ կարողանում հասկանալ: Հազարավոր տարիներ մենք կրոն ունենք: Սակայն որտեղ էլ նայում ենք, տեսնում ենք չարիք, ապականություն, անազնվություն, անարդարություն, ցավ, սով և բռնություն: Կարծես կրոնը բացարձակապես չի օգնում դարձնելու աշխարհն ավելի լավը: Ուստի, ես հարցնում եմ քեզ, ի՞նչ օգուտ ունի այն»:

Քահանան որոշ ժամանակ ոչինչ չպատասխանեց, սակայն շարունակեց քայլել օճառ պատրաստողի հետ: Ի վերջո, նրանք հասան մի խաղահրապարակ, որտեղ երեխաները փոշու մեջ կորած խաղում էին հողի հետ:

«Կա մի բան, ինչը ես չեմ հասկանում», - ասաց քահանան: «Նայեք այդ երեխաներին: Հազարավոր տարիներ մենք օճառ ունենք, սակայն այս երեխաները կեղտոտ են: Ի՞նչ օգուտ ունի օճառը»:

Օճառ պատրաստողը պատասխանեց. «Բայց արդար չէ մեղադրել օճառին այս կեղտոտ երեխաների համար: Նախ պետք է օգտագործել օճառը, որպեսզի այն կարողանա իրագործել իր նպատակը»:

Քահանան ժպտաց և ասաց. «Ճիշտ է»:

## Ինչպե՞ս պետք է մենք ապրենք:

Պողոս Առաքյալը, մեջբերելով Հին Կտակարանի մի մարգարեի, ամփոփել է, թե ինչ է նշանակում լինել հավատացյալ, երբ գրել է. «Արդարը հաւատքից կապրի» (Հռովմայեցիս 1.17):

Թերևս այս հասարակ նախադասությունից մենք հասկանում ենք տարբերությունն այն կրոնի, որն ունայն է և ապարդյուն, և այն կրոնի, որը զորություն ունի կյանքեր փոխելու:

Սակայն որպեսզի մենք հասկանանք, թե ինչ է նշանակում հավատքից ապրել, մենք պիտի հասկանանք, թե ինչ է հավատքը:

Հավատքն ավելին է, քան համոզմունքը: Այն կատարյալ վստահությունն է առ Աստված, որն ուղեկցվում է գործով:

Դա ավելին է, քան ցանկությունը:

Դա ավելին է, քան պարզապես նստել և գլխով համաձայնության նշան անել ու ասել, որ մենք համաձայն ենք: Երբ ասում ենք «արդարը *հաւատքից կապրի*», նկատի ունենք, որ մենք առաջնորդվում և ուղղորդվում ենք մեր հավատքով: Մեր *գործերը* համահունչ են մեր հավատքի հետ ոչ թե անխոհեմ հնազանդության արդյունքում, այլ մեր Աստծո հանդեպ ունեցած մեծ ու անկեղծ սիրո և անզին իմաստության շնորհիվ, որը Նա տվել է Իր զավակներին:

Հավատքը պետք է ուղեկցվի գործերով, այլապես այն մեռած է (տես Յակոբոս 2.17): Դա ընդհանրապես հավատք չէ: Այն զորություն չունի փոխելու անզամ մի մարդու, էլ ուր մնաց՝ աշխարհը:

Հավատք ունեցող տղամարդիկ և կանայք վստահում են իրենց ողորմած Երկնային Հորը նույնիսկ տարակուսանքի պահերին, նույնիսկ կասկածների և ձախողությունների ժամանակ, երբ նրանք միզուցե ամեն բան հստակ չեն տեսնում և հասկանում:

Հավատք ունեցող տղամարդիկ ու կանայք վճռակալորեն անցնում են աշակերտության ուղին և ձգտում են հետևել իրենց սիրելի Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի օրինակին: Հավատքը մղում և իսկապես ոգեշնչում է մեզ խոնարհել մեր սրտերը երկնքի առաջ և մշտապես օգնության հասնել, բարձրացնել և օրհնել մեր մերձավորներին:

Կրոնն առանց գործերի նման է օճառի, որը մնում է տուփի մեջ: Այն կարող է ունենալ հրաշալի ներուժ, սակայն իրականում այն քիչ զորություն ունի որևէ բան փոխելու, մինչև որ այն կիրագործի նախատեսված նպատակը: Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը գործերի ավետարան է: Հիսուս Քրիստոսի Եկեղեցին ուսուցանում է ճշմարիտ կրոնը որպես հույսի, հավատի և գթության ուղերձ՝ ներառելով մեր մերձավորներին հոգևոր և նյութական օգնության ցուցաբերումը:



**Նախագահ Ուլստորֆը և Նրա դուստրը՝ Անջեն, փախստականների ճամբարում Աթենքի մոտակայքում (Հունաստան):**

Մի քանի ամիս առաջ ես և կինս՝ Հարրիեթը, ընտանեկան ճամփորդության էինք գնացել մեր երեխաներից մի քանիսի հետ դեպի միջերկրածովյան երկրներ: Մենք այցելեցինք փախստականների մի քանի ճամբարներ և հանդիպեցինք ընտանիքների, որոնք եկել էին պատերազմից ավերված երկրներից: Այդ մարդիկ մեր հավատքից չէին, բայց նրանք մեր եղբայրներն ու քույրերն էին, և նրանք անհապաղ օգնության կարիք ունեին: Մենք խորապես հուզվել էինք, երբ ինքներս ակնառես եղանք, թե ինչպես է մեր Եկեղեցու անդամների գործող հավատը օգնություն, սիրտհանք և հույս բերում կարիքի մեջ գտնվող մեր մերձավորներին՝ անկախ նրանց կրոնից, ազգությունից կամ կրթությունից:

Հավատքը և մշտական գործերը միասին սիրտը լցնում են բարությանմբ, միտքը՝ իմաստությամբ և հասկացողությամբ, իսկ հոգին՝ խաղաղությամբ ու սիրով:

Մեր հավատքը կարող է օրհնել և լավ ազդեցություն ունենալ թե մեր շուրջը գտնվողների, և թե մեզ վրա:

Մեր հավատքը կարող է լցնել աշխարհը բարությամբ և խաղաղությամբ:

Մեր հավատքը կարող է ատելությունը փոխել սիրտ, իսկ

թշնամիներին դարձնել ընկերներ:

Ուստի, արդարներն ապրում են հավատքով գործելով, նրանք ապրում են վստահելով Աստծուն և քայլելով Նրա ուղիով:

Եվ դա է այն հավատքը, որը կարող է փոխել անհատներին, ընտանիքներին, ազգերին և աշխարհը: ■

**ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ**

Նախագահ Ուլստորֆը բացատրում է, որ հավատքն ավելին է, քան պարզապես համոզմունք արտահայտելը: Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ անկեղծ հավատը պահանջում է գործեր, և հավատքից ապրելը զորություն ունի փոխելու կյանքերը և տները: Դուք կարող եք հրավիրել նրանց, ում ուսուցանում եք, կիսվել պահերով, երբ նրանք տեսել են հավատքով ապրելու օրինությունները և զորությունը, լինի դա իրենց փորձառությունը, թե ուրիշներինը: Խրախուսեք նրանց աղոթել առաջնորդության համար, որպեսզի իմանան, թե իրենց կյանքում ինչպես ավելի լավ կիրառեն ավետարանը:

## Ծառայել ուրիշներին հավատքով

Նախագահ Ուիլյորֆն ասում է մեզ, որ առ Աստված մեր Նունեցած հավատքը պետք է «ուղեկցվի գործերով»: Նա բացատրում է, որ երբ մեր հավատքին «միանում են մշտական գործերը», այն «լցնում է . . . հոգին խաղաղությամբ և սիրով»: Ունենալով այս օրհնության խոստումը՝ մենք կարող ենք ինչ-որ բան փոխել, և տեսնել սա մեր կյանքում, եթե ժամանակ տրամադրենք կատարել հավատով լի ծառայություն: Դուք կարող եք աղոթել ամեն առավոտ՝ խնդրելով Տիրոջն օգնել ձեզ ծառայել ուրիշներին: Օրինակ, խնդրել Նրան հուշել, երբ ձեր քույրերը կամ եղբայրներն իրենց ամենօրյա գործերում կունենան ձեր կարիքը կամ, երբ ձեր ընկերը կունենա հաճոյախոսության կարիք: Ապա, երբ դուք ստանաք ոգեշնչում, գործեք ըստ դրա: Եթե դուք այս աղոթքները և այս ծառայությունը դարձնեք սովորություն, ապա ձեր հավատարիմ, մշտական գործերը կօրհնեն ձեր և ուրիշների կյանքը: Նախագահ Ուիլյորֆը խոստանում է, որ դուք «կարող եք փոխել անհատներին, ընտանիքներին, ազգերին և աշխարհը»:




## Վստահություն

Փորձեք այս խաղը ձեր ընկերոջ հետ: Դուք պետք է վստահեք և ուշադիր հետևեք նրա ցուցումներին:

Ձեռքում պահելով գրիչ կամ մատիտ՝ փակեք ձեր աչքերը: Թող ձեր ընկերն ասի ձեզ, թե որտեղ նկարել աչքեր, քիթ, բերան և մազեր այս դեմքի վրա: Ապա նայեք նկարին: Ինչպե՞ս է այն ստացվել: Դուք կարող եք գունավորել նկարը և նկարել մեկ ուրիշը՝ կրկին խաղալու համար:

Երբեմն դժվար է հետևել ցուցումներին: Սակայն, եթե մենք փորձենք հետևել Երկնային Հորը, լսելով Սուրբ Հոգուն, Նա կօգնի մեզ: Մենք կարող ենք միշտ վստահել Նրան:





# Քահանայության երդումը և ուխտը

*Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և ձգտեք հասկանալ, թե ինչով կարող եք կիսվել: Բնչպե՞ս կարող է Սփոփող Միության նպատակի ըմբռնումը Աստծո ղուստրերին պատրաստել հավերժական կյանքի օրհնությունների համար:*

Մենք՝ որպես քույրեր, ինչքան լավ հասկանանք, որ քահանայության երդումն ու ուխտը վերաբերում է անձնապես մեզ, ավելի շատ կրնդունենք քահանայության օրհնություններն ու խոստումները:

Երեց Ռասսել Մ. Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ասել է. «Բոլոր նրանք, ովքեր սրբազան ուխտեր են կապել Տիրոջ հետ, և ովքեր պատվում են այդ ուխտերը, ունակ են ստանալ անձնական հայտնություն, օրհնվել հրեշտակների սպասավորումից, հաղորդակցվել Աստծո հետ, ստանալ ավետարանի լրիվությունը և, ի վերջո, Հիսուս Քրիստոսի հետ միասին դառնալ այն ամենի ժառանգորդը, ինչ մեր Հայրն ունի»:<sup>1</sup>

Քահանայության երդման և ուխտի օրհնություններն ու խոստումները վերաբերում են ինչպես տղամարդկանց, այնպես էլ՝ կանանց: Քույր Շերի Լ. Դյուն՝ Սփոփող Միության Գերագույն Նախագահության նախկին խորհրդակցանք, ասել է. «Քահանայության լրիվությունը, որը պարունակվում է Տիրոջ տան բարձրագույն արարողություններում,



Հավատք  
Ընտանիք  
Սփոփանք

կարող է ձեռք բերվել միայն տղամարդու և կնոջ կողմից միասնաբար»:<sup>2</sup>

Քույր Լինդա Ք. Բրոքթրնը՝ Սփոփող Միության Գերագույն Նախագահը, կոչ է արել հետևյալը. «Ես հրավիրում եմ ձեզ սերտել քահանայության երդումն ու ուխտը, որը կարող եք գտնել Վարդապետություն և Ուխտեր 84.33–44-ում: Ես խոստանում եմ ձեզ, որ եթե այդպես վարվեք, Մուրբ Հոգին կընդարձակի ձեր հասկացողությունը քահանայության վերաբերյալ և կոգեջնչի ու կբարձրացնի ձեզ սքանչելի ուղիներով»:<sup>3</sup>

Սփոփող Միությանն ուղղված Ջոզեֆ Մմիթի հրահանգները նախատեսված էին պատրաստել կանանց «ձեռք բերել քահանայության արտոնությունները, օրհնությունները և պարգևները»: Սա կիրականացվի տաճարային արարողությունների միջոցով:

«Տաճարային արարողությունները քահանայության

արարողություններ [են], բայց դրանք չեն շնորհվում կանանց կամ տղամարդկանց որպես եկեղեցական պաշտոններ: [Այս արարողությունները կատարում են] Տիրոջ խոստումը, որ Իր ժողովուրդը՝ կանայք և տղամարդիկ, «գործությամբ կօժտվեն ի վերուստ» [ՎևՈւ 38.32]:<sup>4</sup>

### Կրացուցիչ սուրբ գրություններ և տեղեկություններ

Վարդապետություն և Ուխտեր 84.19–40, 121.45–46, [reliefsociety.lds.org](http://reliefsociety.lds.org)

### ՆՂՈՒՆԵՐ

1. M. Russell Ballard, “Men and Women and Priesthood Power,” *Liahona*, Sept. 2014, 36.
2. Էլիզաբեթ Էն Ուիթնի, *Իմ արքայության ղուստրերը. Սփոփող Միության պատմությունն ու աշխատանքը* (2011), 128:
3. Linda K. Burton, “Priesthood Power—Available to All,” *Ensign*, June 2014, 39–40.
4. Gospel Topics, “Joseph Smith’s Teachings about Priesthood, Temple, and Women,” [topics.lds.org](http://topics.lds.org).



Խորհեք այս մասին

Ի՛նչ կարող եք անել, որպեսզի համակողմանի հասկանաք և օգտվեք քահանայության երդման և ուխտի խոստացված օրհնություններից:



ՆԱՐԵԿԱՆ ՍՐԵՆՆԵՐ



Երեց  
Ռոբերտ Դ. Հեյլս  
Տասներկու  
Առաքյալների  
Քվորումից

# Փրկիչի Քավությունը.

ՃՇՄԱՐԻՏ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

*Մենք բոլորս հարություն կառնենք և աննահ կդառնանք  
Հիսուս Քրիստոսի քավիչ զոհաբերության շնորհիվ:*

**Մ**արգարե Ջոզեֆ Սմիթին (1805–44) հարցրին. «Որո՞նք են ձեր կրոնի հիմնական սկզբունքները»: Ջոզեֆ Սմիթն ասաց. «Մեր կրոնի հիմնական սկզբունքները Առաքյալների և Մարգարեների վկայությունն է Հիսուս Քրիստոսի մասին առ այն, որ Նա մահացավ, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ և համբարձվեց երկինք. իսկ մեր կրոնի մնացած բոլոր սկզբունքները լոկ դրա հավելումներն են»:<sup>1</sup>

Ես ուզում եմ իմ ձայնը տալ Մարգարե Ջոզեֆ Սմիթի հայտարարությանը: Մեր ողջ հավատքի կենտրոնը մեր Փրկիչն է և Նրա քավիչ զոհաբերությունը՝ «Աստծո բարեհաճությունը» (1 Նեփի 11.16), ում միջոցով Հայրը երկիր ուղարկեց Իր Որդուն՝ իրականացնելու Քավությունը: Հիսուս Քրիստոսի կյանքի հիմնական նպատակը քավիչ զոհաբերության իրականացումն էր: Քավությունը ճշմարիտ քրիստոնեության հիմքն է:

Ինչո՞ւ է Փրկիչի Քավությունը ավետարանի կենտրոնական սկզբունքը Եկեղեցում և մեր կյանքում:

## Հավատո Հանգանակ 1.3

Հավատո երրորդ հանգանակն ասում է. «Մենք հավատում ենք, որ Քրիստոսի Քավության շնորհիվ ողջ մարդկությունը կարող է փրկվել՝ հնազանդվելով Ավետարանի օրենքներին և արարողություններին»:

«Փրկվել» բառը այս ենթատեքստում վերաբերում է սելեստիալ արքայության բարձրագույն աստիճանին հասնելուն: Հարություն շնորհվում է բոլորին, ովքեր զալիս են երկիր, բայց հավերժական կյանքի լրիվ օրհնությունները ստանալու համար յուրաքանչյուր մարդ պետք է հնազանդվի օրենքներին, ստանա արարողությունները և կապի ավետարանի ուխտերը:

Ինչո՞ւ Հիսուս Քրիստոսը, և միայն Նա, կարողացավ քավել աշխարհի մեղքերը: Նա բավարարեց բոլոր չափանիշներին:

### **Աստված սիրում էր Նրան և վստահում էր Նրան:**

Հիսուսը ծնվել էր Երկնային Ծնողներից նախամահ-կանացու աշխարհում: Նա մեր Երկնային Հոր Անդրա-նիկն էր: Նա ընտրված էր ի սկզբանե: Նա հնազանդ էր Իր Հոր կամքին: Սուրբ գրությունները հաճախ խոսում են այն ուրախության մասին, որ Երկնային Հայրն ունի Իր Որդու հանդեպ:

Մատթեոսի ավետարանում կարդում ենք. «Եւ ահա երկնքիցը ձայն եկաւ, որ ասում էր. Դա է իմ սիրելի Որդին, որին ես հաւանեցի» (Մատթ. 3.17):

Ղուկասն արձանագրել է. «Եվ ձայն եղաւ ամպիցն, որ ասեց. Դա է իմ սիրելի Որդին, դորան լսեցէք» (Ղուկաս 9.35):

Իսկ Փրկիչի Հարությունից հետո Բաունթիֆուլի երկ-րի տաճարի մոտ, մարդիկ լսեցին Հոր ձայնը. «Մհա իմ Սիրելի Որդին, որից ես շատ գոհ եմ» (3 Նեվի 11.7):

Դա հատկապես հուզում է իմ սիրտը, երբ ես կարդում եմ, որ երբ Հիսուսը տանջվում էր Գեթսեմանիի Այգում, Հայրը Իր Սիածին Որդու հանդեպ Իր մեծ սիրուց և կարեկցանքից դրդված, մի հրեշտակ ուղարկեց Նրան մխիթարելու և զորացնելու համար (տես Ղուկաս 22.43):

### **Հիսուսն օգտագործեց Իր ազատ կամքը՝ հնազանդվելու համար**

Հիսուսը պետք է կամավոր Իր կյանքը տար մեզ համար:

Երկնային մեծ խորհրդում Լյուցիֆերը՝ «արշալույսի որդին» (Եսայիա 14.12, ՎեՌու 76.26–27), ասաց.

«Մհա, ես այստեղ եմ, ի՛նձ ուղարկիր, ես կլինեմ քո որդին և կփրկագնեմ ողջ մարդկությանը, այնպես որ մեկ հոգի չի կորչի, և անկասկած ես դա կանեմ. ուստի, տուր ինձ քո պատիվը:

Բայց, ահա, իմ Սիրելի Որդին, որն իմ Սիրելին ու Ընտրյալն էր ի սկզբանե, ինձ ասաց. Հայր, քո կամքը կատարվի, և փառքը քոնը լինի հավիտյան» (Մովսես 4.1–2, տես նաև Մբրահամ 3.27):

Իր Հոր և մեզանից յուրաքանչյուրի հանդեպ մեծ սիրո պատճառով, նա ասաց. «Ուղարկիր ինձ»: Երբ Նա ասաց «ուղարկիր ինձ» Նա օգտագործեց Իր ազատ կամքը:

«Ինչպես Հայրն է ինձ ճանաչում, ես էլ ճանաչում եմ Հօրը, եւ իմ անձը դնում եմ ոչխարների համար: . . .

Նորա համար իմ Հայրը սիրում է ինձ, որ իմ անձը դնում եմ, որպես զի դարձեալ առնեմ նորան:

Ոչ ով նորան վեր չէ առնում ինձանից. այլ ես ինքս եմ ինձանից դնում նորան. Ես իշխանություն ունիմ

նորան դնելու եւ իշխանություն ունիմ նորան դարձեալ առնելու: Այս պատուէրն առայ իմ Հօրիցը» (Հովհաննես 10.15, 17–18):

Եթե Փրկիչը կամենար, հրեշտակների լեգեոնները խաչի վրայից ուղղակի կտանեին Նրան Իր Հոր տուն: Բայց Նա օգտագործեց Իր ազատ կամքը՝ զոհաբերելու Իրեն մեզ համար, իրականացնելու Իր առաքելությու-նը մահկանացու կյանքում և համբերելու մինչև վերջ, ավարտելով քավիչ զոհաբերությունը:

Հիսուսն ուզում էր զալ երկիր և Նա պատրաստված էր: Եվ երբ Նա եկավ, Նա ասաց. «Որովհետեւ ես իջայ երկնքիցը, որ ոչ թէ իմ կամքն անեմ այլ ինձ ուղարկողի կամքը (Հովհաննես 6.38):

### **Հիսուսը նախապատրաստված էր**

Պետրոսն ուսուցանել է, որ Հիսուսը «պատրաստված էր Աշխարհի հիմնադրումից ի վեր» (տես 1 Պետրոս 1.19–21):

Բոլոր տնտեսությունների մարգարեները կանխա-գուշակել էին Հիսուս Քրիստոսի գալուստը, և թե ինչն էր լինելու Նրա առաքելությունը: Մեծ հավատքի միջոցով Ենովքին ցույց տրվեց մի սքանչելի տեսիլք Փրկիչի ծննդյան, մահվան, Համբարձման և Երկրորդ Գալուստի մասին.

«Եվ ահա, Ենովքը տեսավ Մարդու Որդու գալու օրը, այսինքն՝ մարմնում. և նրա հոգին ուրախացավ՝ ասե-լով. Արդարը բարձրացվել է և Գառը մորթվել է աշխար-հի հիմնադրումից ի վեր: . . .



EGCE/HOMO. 2. ԲԱՄԻՆՈՒՆԻՍ

Եվ Տերն ասաց Ենովթին. Նայի՛ր. և նա նայեց ու տեսավ Մարդու Որդուն խաչի վրա բարձրացված, մարդկանց ձևով.

Եվ նա լսեց մի բարձր ձայն. և երկինքները քողարկվեցին. և Աստծո բոլոր արարչագործությունները ողբացին. և երկիրը հառաչեց. և ժայռերը ճեղքվեցին. և սրբերը վեր ելան և փառքի պսակներով պսակվեցին Մարդու Որդու աջ կողմում.

Եվ Ենովթը տեսավ, որ Մարդու Որդին համբարձվեց Հոր մոտ.

Եվ եղավ այնպես, որ Ենովթը տեսավ Մարդու Որդու գալստյան օրը, վերջին օրերին, որ բնակվի երկրի վրա արդարության մեջ, հազար տարվա ընթացքում» (Մովսես 7.47, 55–56, 59, 65):

Քրիստոսի ծնունդից մոտ 75 տարի առաջ Ամուղեկը վկայել է. «Ահա, ես ասում եմ ձեզ, որ ես իրոք գիտեմ, որ Քրիստոսը պիտի գա մարդկանց զավակների մեջ, իր վրա վերցնելու իր ժողովրդի օրինազանցությունները, և որ նա պիտի քավի աշխարհի մեղքերը. քանզի Տեր Աստված է ասել այս» (Ալմա 34.8):

### **Հիսուսն ուներ առանձնահատուկ հատկանիշներ**

Միայն Հիսուս Քրիստոսը կարող էր կատարել քավիչ զոհաբերությունը՝ ծնված լինելով մահկանացու մորից՝ Մարիամից, և ստացած լինելով կյանքի զորությունը Իր Հորից (տես Հովհաննես 5.26): Այդ կյանքի զորության շնորհիվ Նա հաղթեց մահին, գերեզմանի զորությունը անկեացավ և Նա դարձավ մեր Փրկիչն ու Միջնորդը և մեր Հարության Տերը, որի միջոցով փրկությունը և անմահությունը տրվում է մեզ բոլորիս: Մենք բոլորս հարություն կառնենք և անմահ կդառնանք Հիսուս Քրիստոսի քավիչ զոհաբերության շնորհիվ:

### **Հիսուսը կամավոր քավեց սկզբնական մեղքը**

Մենք հավատում ենք, որ մարդիկ կպատժվեն իրենց իսկ գործած մեղքերի, այլ ոչ թե Ադամի օրինազանցության համար:

Մեր ազատ կամքի օգտագործման միջոցով մեր ընտրությամբ հավատ ենք գործադրում: Ձանասիրությամբ մենք կարող ենք ապաշխարել, բայց առանց Քավության՝ չենք կարող:

Մովսեսի գրքում մեզ ուսուցանվում է. «Այդտեղից տարածվեց խոսքն ամենուրեք մարդկանց մեջ, որ Աստծո Որդին քավել է նախնական հանցանքը, որով ծնողների մեղքը չի դրվի զավակների գլխին, քանզի



գործիչ՝ Մոնե Օր, Տ. ՔԱՆԿՆՈՒՉԱՐՄԱ

նրանք անմեղ են աշխարհի հիմնադրումից ի վեր» (Մովսես 6.54):

2 Նեփիում մեզ տրված է մի մեծ ուսմունք.

«Քանզի ինչպես մահն անցավ բոլոր մարդկանց վրա՝ իրագործելու մեծ Ստեղծողի ողորմած ծրագիրը, պետք է անպայման լինի հարության մի գորություն և հարությունը պիտի անպայման գա մարդուն՝ անկու-մի պատճառով. և անկումը եկավ օրինազանցության հետևանքով, և որովհետև մարդիկ դարձան ընկած, նրանք կտրվեցին Տիրոջ ներկայությունից:

Ուստի, պետք է անպայման լինի մի անսահման քավություն. մինչև չլինի մի անսահման քավություն, այս ապականությունը չի կարող հազնել անապականություն: Ուստի, առաջին դատաստանը, որը եկավ մարդու վրա, պետք է անպայման մնացած լինեի մի անվերջ ժամանակաընթացքի համար: Եվ եթե այդպես լինեի, այս մարմինը պետք է վայր դրվեր՝ փտելու և քայքայվելու իր մայր հողում՝ այլևս չբարձրանալու» (2 Նեփի 9.6–7):

### **Հիսուսը միակ կատարյալ էակն էր**

Վարդապետություն և Ուխտերում Փրկիչն ասում է. «Հա՛յր, տե՛ս տառապանքներն ու մահը նրա, ով չմեղանչեց, որին դու հավանել ես. տե՛ս Որդուդ արյունը, որը հեղվել է, արյունը նրա, ում դու սովեցիր, որ ինքդ փառավորվես» (ՎևՈւ 45.4):

Հիսուսը միակ կատարյալ մարդկային էակն էր, ով կատարյալ էր՝ առանց մեղքի: Չոհաբերությունը Հին Կտակարանում նշանակում է արյան զոհաբերություն՝ մատնանշելով դեպի քավիչ զոհաբերությունն իրականացնելու համար մեր Տիրոջ և Քավիչի զոհաբերությունը

խաչի վրա: Երբ արյան գոհաբերություններ էին արվում հին տաճարներում, քահանաները գոհաբերում էին ամեն ինչում կատարյալ անբիծ մի գառի: Սուրբ գրություններում Փրկիչը հաճախ հիշատակվում է որպես «Աստծո Գառ» Իր մաքրության շնորհիվ (տես օրինակ, Հովհաննես 1.29, 36, 1 Նեփի 12.6, 14.10, Վևու 88.106):

Պետրոսն ուսուցանեց, որ մենք փրկագնվում ենք «Քրիստոսի պատվական արհմովը, ինչպես մի անբիծ եւ անարատ գառի» (1 Պետրոս 1.19):

### **Հիսուս Քրիստոսն աշխարհի լույսն է**

Հետևյալ հատվածները հստակեցնում են, որ Իր Քավության միջոցով Փրկիչը վճարեց մեր մեղքերի գինը.

«Մենք բոլորս ոչխարների նման մոլորվեցինք. մենք՝ յուրաքանչյուրս, դարձանք դեպի մեր սեփական ճանապարհը. և Տերը նրա վրա դրեց մեր բոլորի անօրինությունները» (Մոսիա 14.6):

«Բայց Աստուած յայտնեց իր սերը դեպի մեզ, որ երբոր մենք դեռ մեղաւոր էինք: . . .

Որովհետեւ թէ որ դեռ թշնամի էինք, Աստուծոյ հետ հաշտուեցանք նորա Որդու մահովը, ո՞րքան աւելի որ հաշտուած ենք, կապրինք նորա կեանքովը:

Եւ ոչ միայն այսքան. այլ՝ Աստուծով էլ պարծենում ենք մեր Տէր Հիսուս Քրիստոսի ձեռովը, որով հիմա հաշտութիւնն ընդունեցինք: . . .

Որովհետեւ ինչպէս որ մէկ մարդի անհնազանութիւնովը շատերը մեղաւորներ եղան, այնպէս էլ մէկի հնազանդութիւնովը շատերը արդարներ կլինին» (Հռովմայեցիս 5.8, 10–11, 19):

«Որ կատարուի Եսայի մարգարէի ձեռով ասուածը, որ ասում է. Նա մեր հիւանդութիւնները վեր առաւ եւ մեր ցաւերը կրեց» (Մատթեոս 8.17):

«Բայց Աստված չի դադարում Աստված լինել, և ողորմությունը հայց է ներկայացնում զղջացողի համար, և ողորմությունը զալիս է քավության շնորհիվ. և քավությունն իրագործում է մեռելների հարությունը. և մեռելների հարությունը մարդկանց ետ է բերում Աստծո ներկայությունը. և այսպիսով, նրանք վերականգնվում են նրա ներկայության մեջ՝ դատվելով համաձայն իրենց գործերի՝ ըստ օրենքի և արդարադատության: . . .

Եվ այսպես է Աստված իրականացնում իր մեծ ու հավերժական նպատակները, որոնք նախապատրաստված էին աշխարհի հիմնադրումից ի վեր: Եվ այսպես է տեղի ունենում փրկությունը և մարդկանց

փրկագնումը, և նաև նրանց կործանումն ու թշվառությունը» (Ալմա 42.23, 26):

### **Հիսուսը համբերեց միևնույն վերջ**

Հիսուս Քրիստոսը համբերությամբ տարավ փորձությունները, տառապանքը, գոհաբերությունը և Գեթսեմանի չարչարանքները, ինչպես նաև Գողգոթայի տանջանքը: Այդ ժամանակ, վերջապես, Նա կարող էր ասել. «Կատարուած է» (Հովհաննես 19.30): Նա ավարտեց Իր աշխատանքը մահկանացու կյանքում և համբերեց միևնույն վերջ, այսպիսով ավարտելով քավիչ գոհաբերությունը:

Պարտեզում Նա ասաց. «Իմ Հայր, եթե կարելի է, թող այս բաժակն ինձանից անցնի. Սակայն ոչ թէ ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես դու (Մատթեոս 26.39):

Վարդապետություն և Ուխտերում մեզ խորհուրդ է տրվում.

«Տառապանք, որը ստիպեց ինձ, նույնիսկ Աստծու, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտից և տառապել՝ թե՛ մարմնով, թե՛ ոգով,- և ես ցանկացա, որ գուցե չլսեմ դառը բաժակը և ընկերեմ,-

Այնուամենայնիվ, փա՞ռք լինի Հորը, և ես ճաշակեցի ու ավարտեցի իմ նախապատրաստությունները մարդկանց զավակների համար» (Վևու 19.16–19):

Հիսուսն ասաց Իր Հորը. «Ես քեզ փառատրեցի երկրի վերայ. այն գործը կատարեցի, որ տուիր ինձ՝ որ անեմ» (Հովհաննես 17.4):

ՈՒՆՆՈՒՄ ԵՐՈՒՄ ԿՈՆՎՈՐՏՈՒՄ



Հետո, խաչի վրա «երբոր Հիսուսը քացախն առավ՝ ասեց. Կատարուած է, եւ գլուխը խոնարհեցրեց՝ հոգին աւանդեց» (Հովհաննէս 19.30):

Հիսուսը եկավ երկիր, պահեց Իր աստվածայնությունը, որպէսզի կարողանար կատարել քավիչ գոհաբերությունը, և համբերեց մինչ վերջ:

**Հիշեք Նրան հաղորդության միջոցով**

Այսօր մենք հիշում ենք Փրկիչի քավիչ գոհաբերությունը հացի և ջրի խորհրդանիշերով, ինչպէս հաստատեց Տէրը Իր Առաքյալների հետ Վերջին Ընթրիքի ժամանակ:

«Եվ հաց առավ, գոհացավ, կտրեց և նորանց տվավ, և ասեց. Այս է իմ մարմինը, որ ձեզ համար տրվում է. այս արեք իմ հիշատակի համար:

Այնպէս էլ ընթրիքից հետո բաժակն առավ, և ասեց. Այս բաժակը նոր ուխտն է իմ արյունովը, որ ձեզ համար թափվում է» (Ղուկաս 22.19-20):

Հովհաննէս 11.25-26-ում կարդում ենք.

«Ես եմ յարութիւնը եւ կեանքը. ինձ հաւատացողը թէեւ մեռնի էլ, կապրի:

Եւ ամեն ով որ կենդանի է եւ ինձ հաւատում է, յաիտեան չի մեռնի»:

Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջած. թէ մէկն այս հացից ուտի, յաիտենապէս կ'ապրի. եւ այն հացը, որ ես կը տամ, իմ մարմինն է, որը ես կը տամ, որպէսզի աշխարհը կեանք ունենայ» (Հովհաննէս 6.51):

«Աշխարհը կեանք ունենայ» նշանակում է հավերժական կյանք:

Մենք պետք է պատրաստենք մեզ և մեր ընտանիքներին ամեն շաբաթ արժանի լինել ճաշակելու հաղորդությունից և վերանորոգելու մեր ուխտերը զոջացող սրտերով:

**Հայրը և Որդին սիրում են մեզ**

Հայրը երկիր ուղարկեց Իր Որդուն. ներողամտություն, որով, թոյլ տվեց Նրան խաչվել և անցնել այն ամենի միջով, ինչով Նա պետք է անցներ: Հովհաննէսի ավետարանում մենք կարդում ենք.

«Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կեանքը: Ոչ ոք չի գալ Հոր մոտ, եթե ոչ ինձանով:

Եթե ինձ գիտենայիք, իմ Հօրն էլ կգիտենայիք. Եւ սորանից յետոյ կգիտենաք նորան եւ տեսաք նորան» (Հովհաննէս 14.6-7):

«Սորանում է սէրը. որ ոչ թէ մենք սիրեցինք Աստուծուն, այլ որ Նա սիրեց մեզ. եւ ուղարկեց Իր



Մ. ԵՊԿՏՐՈՒԹՅԱՆ, ԹՈՒՍ, Զ. ՔԱՆՎՈՒՉԱՐԿ

Որդուն [լինելու հաշտեցում] մեր մեղքերի համար» (Ա Հովհաննէս 4.10):

*Հաշտեցում* նշանակում է համաձայնեցում կամ խաղաղեցում:

**Եզրակացություն**

Յուրաքանչյուրը, ով գալիս է երկիր և ստանում է մահկանացու մարմին, հարություն կառնի, բայց մենք պետք է աշխատենք ստանալ վեհացման օրհնությունը մեր հավատարմության, մեր ազատ կամքի, մեր հնազանդության և մեր ապաշխարության միջոցով: Ընդունելով ապաշխարությունը՝ ողորմածությունը կտրվի արդարադատության հետ:


Քանի որ մեր ընտրությունն է հետևել և ընդունել Հիսուս Քրիստոսին որպէս մեր Քավիչ, մենք վերցնում ենք Նրա անունը մեզ վրա մկրտության ժամանակ: Մենք վերցնում ենք մեզ վրա հնազանդության օրենքը: Մենք խոստանում ենք, որ միշտ կհիշենք Նրան և կպահենք Նրա պատվիրանները: Մենք նորոգում ենք մեր ուխտերը, երբ ճաշակում ենք հաղորդությունից:

Երբ նորոգում ենք մեր ուխտերը, մեզ տրվում է խոստում, որ Նրա Հոգին միշտ մեզ հետ կուրենանք: Եթե մենք թոյլ ենք տալիս, որ Նրա Հոգին գա մեր կյանք, մենք կարող ենք վերադառնալ Երկնային Հոր և Նրա Որդի՝ Հիսուս Քրիստոսի ներկայությունը, որը Նրանց երջանկության ծրագիրն է մեզ համար՝ փրկության ծրագիրը: ■

*Հաստիւած «Քաւություն» երոյթից, որը տրուել է Պրովոյի միսիոներական ուսուցման կենտրոնում նոր միսիայի նախագահների սեմինարի ժամանակ 2008թ. հունիսի 24-ին:*

**ՀՂՈՒՄ**

1. *Եկեղեցու Նախագահների Ուսումնարանը. Ջոզեֆ Սմիթ* (2007), 49:





# Հիսուս Քրիստոսի հարությունը

ԵՎ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Դեյվիդ Ա. Էդվարդս**  
Եկեղեցու ամսագրեր

Նա ասեց. Կատարում Է. եւ գլուխը խոնարհեցրեց՝ հոգին աւանդեց՝ (Հովհաննէս 19:30): Այդ պահին Հիսուս Քրիստոսի հոգին հեռացավ Իր մարմնից՝ մարմին, որը տարել էր չարչարանք, որպէսզի Նա կարողանար քավել բոլոր մարդկանց մեղքերը և սատարեր նրանց իրենց թուլությունների մեջ (տես Ավմա 7.12–13): Այդ մարմինը, հիմա արդեն դատարկ անոթ, հեռացրին խաչից, փաթաթեցին կտավներով և ի վերջո դրեցին գերեզմանում: Երրորդ օրը, կանայք մոտեցան գերեզմանին, որպէսզի ավարտեն այդ մարմնի թաղման պատրաստությունները:

Բայց մարմինն անհետացել էր:

Դատարկ գերեզմանի հայտնաբերումը ընդամենը սկիզբն էր: Մարիամ Մագթաղենացին, Առաքյալները և ուրիշ շատերը հետագայում ականատես եղան հրաշագործ մի բանի՝ հարություն առած, կատարյալ, շոշափելի և մարդկային կերպարանքով Հիսուս Քրիստոսին:

Փրկիչը հավաստիացավ, որ նրանք, ովքեր տեսան Իրեն Հարությունից հետո, լիովին ըմբռնեցին, թե ինչպիսի մարմին ուներ Ինքը: Օրինակ՝ Նա հրավիրեց Առաքյալներին շոշափել Իր մարմինը, որպէսզի նրանք համոզվեին, որ Ինքը ֆիզիկական էր և ոչ թե ուրվական (տես Ղուկաս 24.36–40):<sup>1</sup> Նա նույնիսկ կերավ

նրանց հետ (տես Ղուկաս 24.42–43):

Երբ Առաքյալներն այնուհետև կատարեցին Հիսուս Քրիստոսի ավետարանը քարոզելու իրենց հանձնարարությունը, նրանք հանդիպեցին ընդդիմության և հալածանքի, որի մի մասը տեղի ունեցավ այն պատճառով, որ նրանք ուսուցանեցին, որ Հիսուս Քրիստոսը հարություն էր առել, որի արդյունքում հարություն էր առնելու ողջ մարդկությունը: (տես Գործք 4.1–3):

Այսօր Հիսուս Քրիստոսի Հարությունը նույնքան գլխավոր է Նրա Եկեղեցու կողմից աշխարհին հռչակվող ուղերձի համար, որքան այն ժամանակ էր: Ինչպէս ուսուցանել է Մարգարե Ջոզեֆ Սմիթը. «Մեր կրոնի հիմնական սկզբունքները Առաքյալների և Մարգարեների վկայությունն է Հիսուս Քրիստոսի մասին, որ Նա մահացավ, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ և համբարձվեց երկինք. իսկ մեր կրոնի բոլոր մյուս բաները լոկ դրա հավելումներն են»:<sup>2</sup>

Հարությունն օգնում է պատասխանել Աստծո և մեր էության վերաբերյալ, Աստծո հետ մեր փոխկապվածության, այս կյանքի նպատակի և Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հույսի վերաբերյալ հիմնարար հարցերին: Սհա, Հիսուս Քրիստոսի Հարության միջոցով ընդգծված մի քանի ճշմարտություններ:

*Իր Հարության միջոցով Հիսուս Քրիստոսն ուսուցանեց մեզ կարևոր ճշմարտություններ մարմնի վերաբերյալ:*



**Յ**որաքան-  
չորր, ով  
վստում է մարմ-  
նավորված Աստ-  
ծո գաղափարը,  
վստում է ինչպես  
մահկանացու,  
այնպես էլ հարու-  
թյուն առած  
Քրիստոսին»:

—Երեց Ջեֆրի Ռ.  
Հոլլանդ

### Երկնային Հայրն ունի փառավորված մարմին

Գաղափարը, որ Աստված մարդկային կերպարանք ունի, իհարկե արմատացած է Աստվածաշնչում,<sup>3</sup> ինչպես նաև ժողովրդական պատկերացման մեջ, բայց աստվածաբանական և կրոնական փիլիսոփայական շատ ավանդույթներ մերժել են այն՝ ի օգուտ «առանց մարմնի, օրգանների կամ զգացմունքների» մի Աստծո,<sup>4</sup> քանի որ այս տեսակետից մարմինը (և ընդհանրապես նյութը) չար է կամ անիրական, մինչդեռ ոգին, միտքը կամ գաղափարները վերջնական գոյության կամ իրականության ճշմարիտ նյութն են:

Որքան պարզ և հեղափոխական էր այն ժամանակ Աստծո էության վերաբերյալ հայտնությունը՝ Իր Որդի Հիսուս Քրիստոսի միջոցով:

Իր ծառայության ընթացքում Փրկիչն ասաց. «Ինձ տեսնողը Հորը տեսավ» (Հովհաննես 14.9): Սա նույնիկ ավելի ճշմարիտ էր Իր Հարությունից հետո կատարյալ, անմահ մարմնով, որը ցույց տվեց, որ «Հայրն ունի մսից ու ոսկրից մարմին, այնպես շոշափելի, ինչպես մարդու-նը, Որդին՝ նույնպես» (ՎևՌ 130.22):

Երկնային Հոր ֆիզիկական էությունը այսպես հայտնի դարձվեց: Ինչպես Ջոզեֆ Սմիթը հետագայում բացատրեց. Այն, ինչ առանց մարմնի կամ օրգանների է, ոչնչություն է: Չկա այլ Աստված երկնքում, բացի այն Աստծուց, ով ունի միս և ոսկոր»:<sup>5</sup>

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը՝ Տասներկուսի Քվորումից, արտահայտել է դա այս ձևով. «Եթե մարմին ունենալը ոչ միայն անհրաժեշտ չէ, այլև անցանկալի Աստվածության կողմից, ինչո՞ւ մարդկության Քավիչը փրկագնեց Իր մարմինը, փրկագնելով այն մահվան և գերեզմանի ճանկից, երաշխավորելով, որ այն երբեք կրկին չի բաժանվի Իր հոգուց ժամանակի կամ հավերժության մեջ: *Յորաքանչորր, ով վստում է մարմնավորված Աստծո գաղափարը, վստում է ինչպես մահկանացու, այնպես էլ հարություն առած Քրիստոսին:*»<sup>6</sup>

### Երկնային Հայրն Ամենագոր է, Ամենագետ և Ամենասեր

Երկնային Հոր բնավորության գերադրական հատկանիշները բացահայտվում են նաև Հիսուս Քրիստոսի Հարության բուն փաստում: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիսթոֆերսոնն ասել է. «Քրիստոսի Հարության իրողության շնորհիվ Հայր Աստծո ամենակարող, ամենագետ և բարի լինելու մասին կասկածներն անհիմն են, ով տվեց Իր Միածին Որդուն հանուն աշխարհի փրկության»:<sup>7</sup>

Աստծո գորությունը, գիտությունը և բարությունը ապացուցվում են Հիսուս Քրիստոսի Հարությամբ, որը տալիս է վկայություն Երկնային Հոր ծրագրի իմաստության և սիրո և այն իրագործելու Նրա (Նրա Որդու) կարողության մասին:

### Մենք Աստծո զավակներն ենք

Ինչպես Աստվածաշունչն է ուսուցանում մեզ, մենք ձևավորվել ենք «Աստծո պատկերով . . . արու եւ էգ» (Մենդոց 1.27): Հիսուս Քրիստոսի Հարությունը ամրացրեց այս ճշմարտությունը: Փաստորեն հենց Իր Հարության ժամին Հիսուս Քրիստոսը շեշտեց մեր փոխկապակցությունը Երկնային Հոր հետ, ասելով. «Ես վեր եմ ելնում իմ Հօր մօտ, եւ ձեր Հօր մօտ, իմ Աստուծոյ մօտ, եւ ձեր Աստուծոյ մօտ» (Հովհաննես 20.17, շեշտադրումն ավելացված է):

Փրկիչը հայտնեց, որ Աստված և մարդկությունը կատարելապես տարբեր չեն միմյանցից իրենց հիմնական էությամբ: Մեր մարմինների հիմնական ձևը նման

է մեր հոգիների ձևին,<sup>8</sup> և մեր հոգիները ստեղծվել են Աստծո պատկերով, որովհետև դա ծնող-երեխա ազգակցության բնական հատկությունն է:

### **Մարմինը հնարավորություն սովող և ազնվացնող պարզև է**

Իր Հարությամբ Փրկիչը ցույց տվեց մեզ, որ ֆիզիկական, մարմնավորված գոյությունը Աստծո և Նրա զավակների հավերժական էության անբաժանելի մասն է: Բնչպես Տերը հայտնեց Ջոզեֆ Սմիթին. «Տարբեր հավերժական են, և ոգին ու տարրը, անբաժանելիորեն միացած, ստանում են ուրախության լիությունը» (Վևու 93.33): Այս անբաժանելի կապը միահյուսում է հոգին և ֆիզիկական նյութը միմյանց հետ, այնպես որ դրանք մեկ անմահ, անապականելի, փառահեղ և կատարյալ մարմին են, մարմնի միակ տեսակը, որն ընդունակ է ստանալ ուրախության այն լրիվությունը, որն Աստված ունի:

Ի հակադրություն սրա, ունենալով ֆիզիկական մարմին, այնուհետ առանձնանալով դրանից՝ հոգևոր աշխարհ մտնելու համար, մահացածները գերություն էին համարում իրենց հոգիների . . . բացակայությունն իրենց մարմիններից» (Վևու 138.50, տես նաև Վևու 45.17):

Նույնիսկ մեր մահկանացու մարմինները կարևոր մասն են մեր Երկնային Հոր ծրագրում և աստվածային պարզևներ են: Երբ մեր նախամահկանացու ոգիները զայիս են այս երկիր, նրանց «վրա ավելացվում» է (Աբրահամ 3.26) մարմին: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է. «Մենք եկել ենք այս երկիր, որպեսզի մարմին ստանանք և այն մաքուր ներկայացնենք Աստծուն սելեստիալ արքայությունում: Երջանկության մեծ սկզբունքը մարմին ունենալն է: Դեր մարմին չունի և դրանում է նրա պատիժը»:<sup>9</sup>

«Մեր ֆիզիկական մարմինները լայնություն, խորություն և պայծառություն են հաղորդում մեր փորձառությանը, որը պարզապես հնարավոր չէր ձեռք բերել մեր նախաերկրային կյանքում: Այսպիսով, մեր հարաբերություններն այլ մարդկանց հետ, ճշմարտությունը հասկանալու և դրանով ապրելու մեր ունակությունը և Հիսուս

Քրիստոսի ավետարանի սկզբունքներին և արարողություններին հնազանդվելու մեր կարողությունը ուժեղանում են մեր ֆիզիկական մարմինների միջոցով: Մահկանացու կյանքի դպրոցում մենք զգում ենք քնքշություն, սեր, բարություն, երջանկություն, վիշտ, հիասթափություն, ցավ և նույնիսկ ֆիզիկական սահմանափակումների հետ կապված մարտահրավերներ, որոնք մեզ նախապատրաստում են հավերժության համար: Պարզ ասած, կան դասեր, որոնք մենք պետք է սովորենք և փորձառություններ, որոնք մենք պետք է ունենանք, ինչպես նկարագրում են սուրբ գրությունները՝ «ըստ մարմնի» (1 Նեփի 19.6, Ալմա 7.12–13):<sup>10</sup>

Բացի այդ, ինչպես Ջոզեֆ Սմիթն է ուսուցանել. «Բոլոր մարդիկ, ովքեր մարմին ունեն, գորություն ունեն նրանց վրա, ովքեր մարմին չունեն»: <sup>11</sup> Սատանան կարող է գայթակղել մեզ, բայց նա չի կարող ստիպել մեզ: «Դեր գորություն չունի մեզ վրա, բացառությամբ միայն այն դեպքում, երբ մենք թույլ ենք տալիս նրան»:<sup>12</sup>

Ի վերջո կատարյալ, հարություն առած մարմնի պարզևն օգնում է հավիտյան դնել մեզ սատանայի իշխանությունից վեր: Եթե չլինի Հարություն, «մեր հոգիները պետք է դառնան ենթակա . . . դեկին՝ չբարձրանալով այլևս: Եվ մեր հոգիները

*Մեր մահկանացու մարմինները կարևոր մասն են մեր Երկնային Հոր ծրագրում և աստվածային պարզևներ են: Երբ մեր նախամահկանացու ոգիները զայիս են այս երկիր, նրանց «վրա ավելացվում» է (Աբրահամ 3.26) մարմին:*



ԱՄՆԱԿԱՆՈՐԴ ԴԵՅՎԱՐ ԱՊՐԵՆԵՐ

պիտի դառնային նրա նման, և մենք՝ դևեր դարձած, դևի համար հրեշտակներ, գրկված լինելով մեր Աստծո ներկայությունից՝ ստերի հոր հետ մնալու, թշվառության մեջ, ինչպես ինքը» (2 Նեվիի 9.8-9):

### **Չոզին ու մարմինը թշնամիներ չեն**

Չնայած դրանք տարբեր են, հոգին և մարմինը չեն պատկանում երկու էականորեն տարբեր ամիսմատեղելի իրականության: Ինչպես Ջոզեֆ Սմիթն իմացավ. «Չկա աննյութական նյութ: Ոգին ամբողջությամբ նյութ է, բայց ավելի նուրբ, կամ մաքուր և կարող է զանազանվել միայն ավելի մաքուր աչքերով, մենք չենք կարողանում տեսնել այն, բայց երբ մեր մարմինները մաքրագործվեն, մենք կտեսնենք, որ այն ամբողջությամբ նյութ է» (ՎևՈւ 131.7-8):

Իր փառավորված, հարություն առած վիճակով, Հիսուս Քրիստոսը ներկայացնում է ոգու և մարմնի կատարյալ միությունը, մեզ համար պարզաբանելով, որ «ոգին ու մարմինը մարդու հոգին են» (ՎևՈւ 88.15): Այս կյանքում մենք ձգտում ենք լինել ավելի շուտ «հոգևոր մտածողությամբ», քան «մարմնական մտածողությամբ» (2 Նեվիի 9.39), «բնական մարդը [հանելով] համար (Մոսիա 3.19), և «սանձելու բոլոր [մեր] կրքերը» (Ալմա 38.12): Բայց դա չի նշանակում, որ հոգին և մարմինը թշնամիներ են: Ինչպես Հիսուս Քրիստոսը ցույց տվեց մեզ, մարմինը չպետք է արհամարհվի և զերակայեցվի, այլ տիրապետվի և փոխակերպվի:

### **Կյանքը մահկանացու մարմնում իմաստալի նպատակ ունի**

Այն հասկացությունը, որ այս կյանքը ստուգարք է, ավելի մեծ իմաստ է ձեռք բերում, երբ մենք մտածում ենք, թե մենք ինչ գիտենք մեր նախկին և հետագա կյանքի մասին: Մենք ապրում էինք որպես ոգիներ, նախքան երկիր գալը, և Երկնային Հայրը նախատեսել

է մեզ համար Իր նման դառնալ և հավերժ ապրել անմահ ֆիզիկական մարմիններով: Այս ճշմարտությունները նշանակում են, որ այս մահկանացու մարմիններում մեր ստուգարքի ժամանակը ինքնակամ չէ, այլ ունի իսկական իմաստ և նպատակ:

Ինչպես Երեց Քրիստոսֆերսոնն է բացատրել. «Մեր ընտրություններով մենք ցույց կտայինք Աստծուն (և ինքներս մեզ) նրա սելեստիալ օրենքով ապրելու մեր նվիրվածությունն ու կարողությունը, մինչ կգտնվեինք Նրա ներկայությունից դուրս և ֆիզիկական մարմնում՝ դրա ողջ գորություններով, հակումներով և կրքերով հանդերձ: Մենք արդյոք կկարողանայինք սանձել մարմինը, որպեսզի այն դառնար գործիք հոգու համար, ոչ թե դրա տերը: Կարելի՞ էր մեզ վստահել աստվածային գորությունները ժամանակի և հավերժության մեջ, ներառյալ՝ կյանք արարելու գորությունը: Մենք արդյոք կկարողանայինք անհատապես հաղթել չարին: Ովքեր կանեին դա, «մրանց գլխին փառք կավելացվեր հավիտյանս հավիտենից» [Աբրահամ 3.26], այդ փառքի մի շատ կարևոր մասը լինելով հարություն առած, անմահ և փառավորված ֆիզիկական մարմինը»<sup>13</sup>

Մեր առկա մարմիններում մեր փորձառությունները, ներառյալ մեր փոխհարաբերությունները միմյանց հետ, իմաստալի են, որովհետև դրանք այն բաների նմանությամբ են, որոնք գալու են: Ինչպես իմացավ Ջոզեֆ Սմիթը. «Այն նույն հարաբերությունները, որոնք գոյություն ունեն մեր մեջ այստեղ, գոյություն կունենան մեր մեջ այնտեղ, միայն թե դրանք կգուզակցվեն հավերժական փառքով, փառք, որը մենք այժմ չենք վայելում» (ՎևՈւ 130.2):

### **Մենք հույս ունենք առ Հիսուս Քրիստոս**

Հիսուս Քրիստոսի Հարությունը հույս բերել է այն ժամանակից ի վեր, երբ Նրա զերեզմանը դատարկ տեսան, որովհետև Նրա Հարության մեջ մենք ընդունում



*Ի փառավորված, հարություն առած վիճակով, Հիսուս Քրիստոսը ներկայացնում է ոգու և մարմնի կատարյալ միությունը, մեզ համար պարզաբանելով, որ «ոգին ու մարմինը մարդու հոգին են» (ՎևՈւ 88.15):*



**Հիսուս Քրիստոսի** շարությունը հույս է բերել այն ժամանակից ի վեր, երբ Նրա գերեզմանը դատարկ տեսան, որովհետև Նրա շարության մեջ մենք ընդունում ենք մեր իսկ հեռանկարը:

ենք մեր իսկ հեռանկարը, որում «բոլոր [մեր] կորուստները» . . . [մեզ] կվերադարձվեն, եթե [մենք] հավատարմորեն շարունակենք»:<sup>14</sup>

Փրկիչի վաղեմի Առաքյալները կարողացան համարձակ վկայություն բերել Նրա Հարության մասին, որովհետև նրանք տեսել էին և շոշափել Նրա մարմինը: Բայց կար շատ ավելին, քան դա էր: Ինչպես Հիսուս Քրիստոսը բժշկեց մարմնական տկարությունները, որպեսզի ցույց տար, որ Ինքը իշխանություն ուներ մեղքեր ներելու (տես Ղուկաս 5.23–25), Նրա Հարությունը՝ ֆիզիկական մահին հաղթելու Նրա գործունեությունը, դարձավ Նրա հետևորդների համար համոզմունք՝ հոգևոր մահին հաղթելու Նրա իշխանության վերաբերյալ: Խոստումները, որոնք Նա տվեց Իր ուսմունքներում՝ մեղքերի ներումը, խաղաղությունն այս կյանքում, հավերժական կյանքը Հոր արքայությունում, դարձան իրական և նրանց հավատքը՝ անսասան:

«Եթե Քրիստոս յարութիւն չէ առել՝ ունայն է [մեր] հաւատքը» (1 Կորնթացիս 15.17): Բայց քանի որ Նա

*իսկապես* հարություն առավ մեռելներից, մենք կարող ենք «հույս ունենալ, Քրիստոսի քավության և նրա հարության գործունեության միջոցով, բարձրացվելու դեպի հավերժական կյանք, և դա՛ [մեր] հավատքի շնորհիվ առ Նա՝ խոստումի համաձայն (Մորոնի 7.41):

Իր մահկանացու կյանքի ընթացքում Հիսուս Քրիստոսը հրավիրեց մարդկանց հետևել Իրեն: Նրա մահից ու հարությունից հետո նշանակետ դարձավ էլ ավելի հստակ: Եթե մենք ավետարանի օրենքներին և արարողություններին հնազանդվելու միջոցով մշակում ենք «սելեստիալ հոգի» մեր ներսում, մենք կարող ենք «ստանալ նույն մարմինը, որը բնական մարմին էր» և «կկենդանացվենք սելեստիալ փառքի մի մասով, այնուհետև կստանանք նույնից, նույնիսկ մի լրիվություն» (ՎԼՈՒ 88.28–29): Նա ցույց է տվել ճանապարհը: Նա է ճանապարհը: Դա Նրա գործությամբ է՝ Նրա Քավության և Հարության, որ այս սելեստիալ լրիվությունը հնարավոր է, որը ներառում է ուրախության լրիվություն հարություն առած մարմնում: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Երբ Հիսուս Քրիստոսը հայտնվեց ժողովրդին Նոր Աշխարհում, Նա խնդրեց նրանց՝ նրանցից հազարավորների, մոտենալ «մեկ առ մեկ» և շոշափել Իր ձեռքերը, ոտքերը և կողքը, որպեսզի նրանք կարողանային վկայել, որ իրենք ինչպես շոշափել էին, այնպես էլ տեսել էին հարություն առած Տիրոջը (տես 3 Նեփի 11.14–15, 18.25):
2. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները*. *Չոզեֆ Սմիթ* (2007), 49:
3. Տես Օննիդոց 1.27, Ելից 33.11, Գործք 7.56:

4. Չնայած նմանատիպ գաղափարներ պարունակվում էին ավելի վաղ քրիստոնեական դավանանքներում, կոնկրետ այս ձևակերպումը գալիս է Անգլիական Եկեղեցու երեսուներեցու հանգանակից (1563):
5. *Ուսմունքները*. *Չոզեֆ Սմիթ*, 42:
6. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Միակ ճշմարիտ Աստված և Հիսուս Քրիստոս, որին Նա ուղարկեց», *Հիստորիա*, Նոյ. 2007, 42:
7. Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Հիսուս Քրիստոսի Հարությունը», *Հիստորիա*, մայիս 2014, 113:
8. Նույնիսկ նախամահկանացու Հիսուս Քրիստոսի հայտնվելը մի վկայություն էր այս

- վաստի վերաբերյալ, քանի որ այն ցույց տվեց, որ Նրա ոգու մարմինը մարդկային էր կերպարանով (տես Եթեր 3.16):
9. *Ուսմունքները*. *Չոզեֆ Սմիթ*, 211:
10. Դեյվիդ Ա. Բեդնար, «Մենք հավատում ենք մաքրաբարո լինելուն», *Հիստորիա*, մայիս 2013, 41:
11. *Ուսմունքները*. *Չոզեֆ Սմիթ*, 211:
12. *Ուսմունքները*. *Չոզեֆ Սմիթ*, 214:
13. Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Ինչո՞ւ ամուսնանալ, ինչո՞ւ ընտանիք ունենալ», *Հիստորիա*, մայիս 2015, 51:
14. *Ուսմունքները*. *Չոզեֆ Սմիթ*, 51:

«Եթե տարածվեցին գերեզմանի մոտ, ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒՆԻ ԲՈՒԳՈՒՄՆԵՐԻՆ, SUPERSTOCK.COM»

# Եկ, եկ Նրա մոտ

Զգացմունքով ♩. = 44-48

Խոսք՝ Սթիվեն Բ. Զոնս  
Երաժշտություն՝ Մայրլ Ֆ. Մուդի

*mp*

1. Նա  
(2. Ե) -  
(3. Աս) -

5

ե - կավ մեզ մոտ, սի - րեց մեզ ան - շափ: Չը - կա մի հո - գի, ո - թին  
կավ Նա Եր - կիր, սպ - րեց որ - պես մարդ, Բո - լոր մարդ-կանց ցա - վե - թը  
րեց Նա մեզ հետ, մեր վիշ - տը զգա - լով, Հա - վա - տա - ցյա - լին հույս

8

*rall.*

Նա չը - հա - սավ, Կյանք՝ այն - քան մութ, վիշտ՝ խոր այն - քան, Որ  
Նա հաս - կա - ցավ: Չը - կա վիշտ ու ցավ, որ Նա չըզ - գաց, Մով,  
պար-գե - վե - լով, Աչ - քեր բա - ցեց, մեղ - քեր նե - րեց՝ Խո -

11

*a tempo*

չա - պա - քի - նեց լույ - սով Իր պալ - ծառ: Եկ, եկ Նը - բա  
ան - հույս կյանք, որ չը - լու - սա - վոր - եց: Եկ, եկ Նը - բա  
նարի - նե - թիս, որ հե - տե - վում ենք Ի - թեն: Եկ, եկ Նը - բա

2



14

մոտ: \_\_\_\_\_  
մոտ: \_\_\_\_\_ Ե՛կ Իր մոտ և սո - վո - ըի՛ր: \_\_\_\_\_ Խո -  
մոտ: \_\_\_\_\_

17

նարհ և հեզ է սիր - տը Նը - րա: Ե՛կ, ե՛կ Նը - րա

20

մոտ: \_\_\_\_\_ 2. Ե 3. Ապ \_\_\_\_\_ օ՛,

23

Ե՛կ, ե՛կ Նը - րա մոտ: \_\_\_\_\_

© 2016 by Steven K. Jones and Michael F. Moody. Բոլոր իրավունքները վերապահված են:  
Այս երգը կարող է բազմացվել միայն առանձին դեպքերում  
նչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՄԵՆԱՆ ԱՍՏՎԱԾԱԿԱՆ ԵՊԻՍԿՈՍՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՏՈՒՄԻ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՍԻ ԿՈՄՊՈԶԻՑԻՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՍԻ





# Հույսի ԵՎ ապարհնան ԿԱՄՈՒՐՁ

*Սեռական բռնության  
գոհերը պատշաճ  
օգնությամբ կարող  
են գտնել բժշկություն,  
որի կարիքը նրանք  
խորասլուզ գգում են:*

## Նանոս Թալլի

ՎՕՍ Ընտանեկան Ծառայություններ, Տեխաս, ԱՄՆ

Պատկերացրեք, որ դուք կանգնած եք ժայռի ծերպին և կամենում եք անցնել խորը ձորի մյուս կողմը, որտեղ ձեզ խոստացվել է մեծ երջանկություն: Երբ անցնելու ուղի եք որոնում, դուք գտնում եք մի կույտ պարագաներ, որոնք, եթե միմյանց հետ ճիշտ միացնեք, կկառուցեն մի կամուրջ ձորն անցնելու համար:

Եթե դուք չգիտեք, թե ինչպես կառուցել կամուրջը, այդ պարագաներն անօգուտ կլինեն և դուք հիասթափված ու անհույս կզգաք: Բայց, եթե դուք օգնություն ստանաք մեկից, ով փորձառություն ունի կամուրջներ կառուցելու, ձեր գիտելիքը և հասկացողությունը կարող է մեծանալ, և խնդիրը կարելի է միասին իրականացնել:

Անցած 18 տարիների ընթացքում իմ գործն է եղել ապահովել միջոցներ և առաջնորդություն՝ օգնելու մարդկանց անցնել հուզական և մտավոր տառապանքի անդունդը: Ոչ մի հաճախորդ բոլոր այն մարդկանցից, ում ես խորհուրդ եմ տվել, այնպես վիրավորված չի եղել, ինչպես նրանք, ովքեր սեռական բռնության գոհեր են դարձել: Ես տեսել եմ այն ազդեցությունը, որ այս մարտահրավերն ունեցել է այդ անձանց մինչև վերջ համբերելու ունակության վրա:

Այնուամենայնիվ, ես նաև սկսել եմ հասկանալ, որ տևական սփոփանքը մեր մաքառումներից և տառապանքից հնարավոր է մեր Փրկիչի միջոցով: Նրա սերը բարձրացնում է մարդկանց խովարից դեպի լույս:

## Ինչո՞ւ է սեռական բռնությունը այդպիսի վնաս պատճառում:

Բռնության զոհերը պատմել են ինձ ընկճախտով, ինքնակասկածներով և այլ խորը հուզական ցավերով լի մի կյանքի մասին: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին (1910–2008) օգնել է մեզ հասկանալ, թե ինչու է սեռական բռնությունը այդպիսի խորը ցավ պատճառում:

«Առկա է սեռական բռնության սոսկալի, չարաղետ գործելակերպը: Դա հասկացողությունից վեր է: Դա վիրավորանք է պարկեշտության դեմ, որը պարտավոր է գոյություն ունենալ յուրաքանչյուր տղամարդու և կնոջ մեջ: Դա *պղծություն է սրբազանի և աստվածայինի դեմ*: Այն կործանարար է երեխաների կյանքում: Դա դատապարտելի է և *արժանի ամենախիստ պարսպանքի*»:

«Ամոթ այն տղամարդուն կամ կնոջը, ով սեռական բռնության կենթարկի որևէ երեխայի: Վարվելով այդպես, բռնացողը *հասցնում է ոչ միայն ամենապղծ տեսակի վնասվածք*: Այդ տղամարդը կամ կինը նաև դատապարտված կանգնում է Տիրոջ առջև»:<sup>1</sup>

Օնոնդաստեղծ գործությունը սրբազան և աստվածային գործություն է, որը մեր Երկնային Հայրը տվել է Իր զավակներին: Բացատրեք, որ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է. «Օնոնդաստեղծ գործությունը հոգեպես կարևոր է: . . . Մեր Երկնային Հայրը և Նրա Միրելի Որդին արարիչներ են և վստահել են մեզանից յուրաքանչյուրին Իրենց

արարչագործական գործության մի մասը»:<sup>2</sup> Ուրեմն զարմանալի չէ, որ այս սրբազան գործության պղծումը «արժանի է ամենախիստ դատապարտության» և առաջացնում է «ամենապղծ տեսակի վնասվածք»:

## Հասկանալ վնասը

Սեռական բռնությունը առանց որևէ համաձայնության փոխհարաբերություն է, որը ներառում է հուզական կամ ոչ հուզական վարքագծեր, որի ժամանակ անձնավորությունը օգտագործվում է մեկ այլ անձի կողմից՝ սեռական բավարարվածություն ստանալու համար: Շատ հաճախ սեռական բռնության զոհերը մնում են խառնաշփոթ մտածողությամբ, ինչպես նաև անարժանության զգացումներով և ամոթով, որը դիմանալու համար կարող է խիստ ծանր լինել: Ցավն ու տառապանքը, որ տանում են զոհերը, հաճախ ուժեղանում է ուրիշների կողմից արվող մեկնաբանություններով, որոնք հիմնված են սեռական բռնության և դրա ազդեցությունների վերաբերյալ թյուրմեբանման վրա: Որոշ զոհեր մեղադրվում են սուտ խոսելու մեջ կամ ասվում է, որ բռնությունը ինչ-որ տեղ նրանց մեղքով էր: Մյուսներին սխալ ձևով հավատացնում են, որ նրանք պետք է ապաշխարեն, կարծես թե ինչ-որ կերպ նրանք մեղանչել են՝ զոհ դառնալով:

Շատ հաճախորդների, ում հետ ես աշխատել եմ, և ովքեր տարել են սեռական բռնություն իրենց մանկության կամ պատանեկության տարիներին, ասվում է «անցիր դրա վրայով», «թող այն անցյալում» կամ «ուղղակի ներիք և մոռացիր»: Այս տիպի հայտարարությունները, հատկապես, երբ դրանք գալիս են մոտ ընկերներից, ընտանիքի անդամներից կամ Եկեղեցու ղեկավարներից, ավելի շուտ կարող են տանել զոհին դեպի մեծացող գաղտնիության և ամոթի, քան ապաքինման և խաղաղության: Լուրջ ֆիզիկական վերքի կամ վարակի նման այս հուզական վերքերը հենց այնպես չեն անցնում, եթե անտեսվում են: Մինչդեռ խառնաշփոթը, որը սկսվում է բռնության ընթացքում, աճում է, և միանալով առաջացող ցավոտ հույզերի հետ, մարդու մտածողությունը կարող է փոփոխության ենթարկել, ի վերջո տանելով անառողջ վարքագծի զարգացման: Բռնության ենթարկված զոհերի համար անսովոր չէ ընդունել, որ այն ինչ տեղի էր ունեցել իրենց հետ, վիրավորական էր, սակայն նրանք կարող են, այնուամենայնիվ, զարգացնել անառողջ վարքագիծ և ցավալի հույզեր:

Հաննան (անունը փոխվել է) սեռական բռնության էր ենթարկվել մանուկ հասակում: Մյուս զոհերի նման, նա մեծանում էր՝ զգալով, որ ինքն անարժան, սոսկալի անձնավորություն էր: Նա իր կյանքի մեծ մասն անցկացրել էր՝ ձգտելով բավականաչափ ծառայել ուրիշներին,



փոխելու իր Երկնային Հոր կամ մեկ ուրիշի սիրո համար «բավականաչափ լավը» չլինելու իր զգացումները: Իր փոխհարաբերություններում նա վախենում էր, որ եթե որևէ մեկը իսկապես ճանաչեր իրեն, կմտածեր, որ ինքն այնքան տուկալի էր, որքան ինքն էր կարծում: Նա զգացել էր մերժվելու ուժեղ վախ, որը հանգեցրել էր կյանքում նոր բաներ փորձելու կամ հասարակ հանձնարարություններ կատարելու հանդեպ վախի՝ ինչպես օրինակ հեռախոսով ինչ-որ մեկին զանգահարելը: Նա օրհնված էր արվեստի գործեր ստեղծելու տաղանդով, բայց հրաժարվեց դրանից՝ վախենալով, որ չէր կարող դիմանալ քննադատությանը:

50 տարի շարունակ նրա անօգնականության, անզորության, վախի, զայրույթի, շփոթվածության, ամոթի, միայնակության և մեկուսացվածության զգացումները ուղեկցում էին նրան ամենօրյա որոշումներում:

### **Փոխարինել ցավը խաղաղությամբ**

Փրկիչը տարավ «ցավեր և չարաչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի»: Նա արեց այդ, որպեսզի Նա կարողանար «իմանալ ըստ մարմնի, ինչպես սատարել իր ժողովրդին» (Ալմա 7.11–12): Նրա տառապանքը միայն մեր մեղքերի համար չէր, այլ նաև մեր բժշկության համար, երբ մեկ ուրիշի մեղքերը մեզ տառապանք պատճառեին:

Եթե Նա այսօր այստեղ լիներ, ես պատկերացնում եմ, որ Փրկիչը կարտասվեր նրանց հետ և կօրհներ նրանց, ովքեր ենթարկվել են սեռական բռնության, ինչպես Նա արտասվեց Նեփիացիների հետ և օրհնեց նրանց (տես 3 Նեփի 17): Չնայած Նա այստեղ չէ ֆիզիկապես, Նրա Հոգին կարող է մեզ հետ



լինել, իսկ Նա մեզ համար ապահովել է ապաքինվելու, խաղաղություն զգալու և ներելու ուղի:

Շատերի համար, ովքեր վնասվել են, գրեթե անհնար է հավատալ այն գաղափարին, որ իրենց կրած ցավը կարող է փոխարինվել խաղաղությամբ: Հաճախ բռնաբարվածների վերքերը մնում են չնկատված և չընդունված ուրիշների կողմից տարիներ շարունակ: Ցավը դիմակավորվում է ժպտացող դեմքերով, ուրիշներին օգնելու պատրաստակամությամբ և կյանքն ապրելով այնպես, կարծես ոչինչ չի պատահել, սակայն ցավն անընդհատ այնտեղ է:

Եկեք համեմատենք հուզական ապաքինման գործընթացը ֆիզիկական վնասվածքի խնամքի և բուժման հետ: Ենթադրենք, երիտասարդ տարիքում կտորել էիք ձեր ոտքը: Այն ուղղելու համար բժշկի գնալու փոխարեն, դուք կաղալով քայլեցիք մինչև ուժեղ ցավն անցավ, բայց առկա է մի թույլ ցավ յուրաքանչյուր քայլի հետ, որ դուք կատարում եք: Տարիներ անց դուք ցանկացաք, որ ցավն անցնի, ուստի գնացիք բժշկի մոտ: Բժիշկը պետք է ուղղի ոսկորը, մաքրի աճած մասը, հեռացնի այն և ուղարկի ձեզ ֆիզիոթերապիայի ձեր ոտքն ամրացնելու համար:

Բռնությունից ապաքինման գործընթացը նման է նրանով, որ գոհը

### **ԶՈՒՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐՔԱԳԻՇԸ**

Զոհերը հաճախ մաքառում են փոխհարաբերություններում և հնարավոր է անընդհատ հավաստություն փնտրեն ուրիշների կողմից, դառնան պասսիվ, պատնեշներ դնեն մարդկանց հեռու պահելու համար, որպեսզի խուսափեն վնասվելուց, դառնան սանձարձակ՝ ձգտելով սեռական ակտիվության խթանման (ներառյալ պոռնոգրաֆիան և ինքնաբավարարումը) կամ անեն ճիշտ հակառակը և խուսափեն այն ամենից, ինչ կապված է սեռական կյանքի հետ: Այս վարքագծի հետ կապված ամոթը հաճախ արգելում է այդ մարդկանց օգնություն փնտրել ծնողների, քահանայության ղեկավարների կամ մասնագետների կողմից, որովհետև նրանք չեն հասկանում իրենց հետ պատահածի և իրենց վարքի միջև գոյություն ունեցող կապը:

Ավետարանով ապրելիս զոհերը միտում ունեն գնալ մեկ ծայրահեղությունից դեպի մյուսը՝ ոմանք դառնում են չափազանց կրոնասեր: Փորձելով ծածկել այն, ինչը, ըստ իրենց, իրենց անպատվությունն է, նրանք փորձում են ամեն ինչ ճիշտ անել: Մյուսները, զգալով, որ իրենք երբեք արժանի չեն լինի հավերժական կյանքի, երբեմն դադարում են փորձել:

## ԴԱՍԵՐ ՎԱՐԴԱ- ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՆՏԵՐ 123 ԳԼԽԻՑ

Երբ Մարգարե Ջոզեֆ Սմիթը բանտարկված էր Լիբերթիի բանտում, նա մի նամակ գրեց Եկեղեցուն, որոնք կազմում են Վարդապետություն և Ուխտերի 121–124 բաժինները, որոնք ներառում են «Սրբերի պարտականությունն իրենց հալածողների հանդեպ» (Վևու 123, բաժնի վերնագիրը): Նա չասաց Սրբերին, ովքեր հալածանքներ էին տարել և ֆիզիկական վնասվածքներ, պահել իրենց վիրավորանքները իրենց մեջ և ձևացնել, թե ոչինչ չէր պատահել: Ստածեք, թե 123 բաժնում տրված խորհուրդը ինչպես կարող է վերաբերել բռնության խնդրին:



պետք է առաջինը ընդունի, որ ցավն իրական է, և ինչ-որ բան կարելի է անել դրա համար: Այդ գործընթացը ներառում է՝ ընդունել այն, ինչ պատահել է և թույլ տալ, որ վիրավորանքի, վախի և տխրության զգացումները զգացվեն, ճանաչվեն և հաստատվեն: Հաճախ օգտակար է աշխատել մասնագետի հետ, ով փորձառու է այս ապաքինման գործընթացում: (Ստուգեք ձեր քահանայության ղեկավարի հետ՝ իմանալու թե ՎՕՄ Ընտանեկան Ծառայություններն արդյոք մատչելի են ձեր տարածքում:)

Անկախ նրանից, գոհր ստանում է մասնագիտացված օգնություն թե ոչ, լավագույնը աղոթելն է, ուսումնասիրելը Փրկիչի կյանքը և Նրա Քավությունը և կանոնավորապես այցելել քահանայության ղեկավարին: Նա կարող է օգնել թեթևացնել բեռները և ստանալ ոգեշնչում՝ օգնելու գոհին հասկանալ իր աստվածային արժեքը և կապը Երկնային Հոր և Փրկիչի հետ: Քույր Քերոլ Մ. Սթեֆենսը՝ Սփոփող Միության գերագույն նախագահության առաջին խորհրդականը, վերջերս ուսուցանել է. «Ապաքինումը կարող է երկարատև գործընթաց լինել: Այն կարող է պահանջել, որ դուք աղոթքով առաջնորդություն որոնեք և համապատասխան օգնություն, ներառյալ խորհրդատվություն՝ պատշաճորեն ձեռնադրված քահանայություն կրողներից: Երբ սովորեք բացեիքաց հաղորդակցվել,

դրեք համապատասխան սահմաններ և գուցե որոնեք մասնագիտացված խորհրդատվություն: Այդ գործընթացի ողջ ընթացքում հոգևոր առողջությունը պահպանելը էական է»:<sup>3</sup>

Հաննայի համար իր կյանքն այնքան տհաճ էր դարձել, որ նա օգնություն որոնեց: Նա իր վկայությունից գիտեր, որ կարող էր զգալ խաղաղություն և գոհունակություն կյանքում, բայց շարունակաբար դա չէր զգում: Աղոթելով և գրուցելով իր եպիսկոպոսի հետ, նա առաջնորդվեց խորհրդատվության, որտեղ կարողացավ ձեռք բերել միջոցները, որոնք անհրաժեշտ էին իրեն ճշմարտությունը խավարից դուրս բերելու և սոսկալի բեռով կիսվելու համար, որը նա միայնակ էր կրել: Այդ կերպ վարվելով, նա կարողացավ ազատվել ցավից և գտնել Փրկիչի կողմից խոստացված խաղաղությունը: (տես Հովհաննես 14.27): Այս խաղաղության և սփոփանքի հետ եկավ ներելու համար ցանկությունն ու կարողությունը:

### Ներելու անհրաժեշտությունը

Ներելու գաղափարը բռնության գոհերի համար հաճախ դժվար է լսել և հաճախ սխալ է հասկացվում: Եթե նրանք մտածում են, որ ներումը նշանակում է բռնացողին կարթից ազատ արձակել կամ ընդունել, որ նրա արածը այլևս նշանակություն չունի, ապա նրանք իրենց որպես հաստատված գոհ

չեն զգա: Մինչ մեզ պատվիրվում է ներել (տես Վևու 64.10) այնպիսի իրավիճակներում, երբ վնասը խորն է, ապաքինումը սովորաբար պետք է սկսվի, նախքան զոհը կկարողանա լիովին ներել բռնաբարողին:

Նրանք, ովքեր տառապում են բռնաբարությունից առաջացած ցավերով, կարող են սփոփանք գտնել Մորմոնի Գրքի այս խորհրդից. «Ես՝ Հակոբս, ցանկանում եմ խոսել ձեզ հետ, որ մաքուր եք սրտով: Նայեք առ Աստված մտքի կայունությամբ, և աղոթեք նրան խիստ մեծ հավատքով, և նա կսփոփի ձեզ ձեր չարչարանքների մեջ, և կպաշտպանի ձեր դատը, և դատաստան կողարկի նրանց վրա, ովքեր փնտրում են ձեր կործանումը» (Հակոբ 3.1): Արդարադատության անհրաժեշտությունը և փոխհատուցման իրավունքը կարող է տրվել Տիրոջը, որպեսզի Նա կարողանա մեր վիրավորանքը փոխարինել խաղաղությամբ:

Հաննան ի վերջո պարզեց, որ ինքը կարող էր արդարադատության անհրաժեշտությունը փոխանցել Փրկիչին և փոխարենը գտնել խաղաղության զգացում իր կյանքում, ինչպես երբեք նախկինում չէր զգացել: Նախկինում նա վախենում էր հաճախել ընտանեկան հավաքներին, որտեղ բռնաբարողը կարող էր ներկա գտնվել: Այժմ, դեպի ապաքինում տանող իր ուղու վրա դժվարին էմոցիոնալ վերադարձի դիմակայելու պատրաստակամությամբ, նա այլևս չի վախենում գտնվել նրա հետ նույն վայրում և նույնիսկ ծեր տարիքում կարող է կարեկցանք զգալ նրա հանդեպ:

### Ազատ անհարկի բեռներից

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը (1928–2015) նշել է. «Լիակատար ապաքինումը կգա առ Հիսուս Քրիստոս ձեր հավատքի միջոցով և Նրա

գործությամբ ու կարողությամբ, Նրա Քավության միջոցով, բժշկելու այն սպիները, որոնք անարդար են և անիրավացի: . . .

Նա սիրում է ձեզ: Նա Իր կյանքը տվեց մեզանից յուրաքանչյուրի համար: Նա կօգնի ձեզ անել այդ: Ես գիտեմ, որ Նա ունի ձեզ բժշկելու գործությունը»<sup>4</sup>

Հակառակորդն ուզում է ցավով և տառապանքով կապված պահել մարդկանց, որովհետև նա թշվառ է (տես 2 Նեփի 2.27): Մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի օգնությամբ ցավը կարող է իսկապես փոխարինվել խաղաղությամբ, միայն այնպես, ինչպես Փրկիչը կարող է տալ, և մենք կարող ենք ապրել խաղաղությամբ: «Ադամն ընկավ, որպեսզի մարդիկ լինեն, և մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն» [2 Նեփի 2.25]: Ուրախությամբ ապրելը թույլ կտա փորձության ժամանակ լինել ավելի դիմացկուն և հնարավորություն կտա մեզ սովորել և աճել ու ավելի նմանվել մեր Երկնային Հորը:

Ես խոնարհված եմ զգում ինձ այն օրհնության համար, որ ունեցել եմ իմ կյանքում՝ նստել նրանց հետ, ովքեր վնասվել են բռնությունից և տեսնել ապաքինման հրաշքը, որն իսկապես գալիս է միայն Փրկիչի միջոցով: Եթե դուք տառապում եք, խնդրում եմ աղոթքով դիմեք օգնության համար: Դուք չպետք է միայնակ տանեք ծանր բեռները: Ես գիտեմ, որ Նա բժշկում է, քանի որ ես ակնատես եմ եղել դրան անհաշիվ անգամներ: ■

### ՀՐՈՒՄՆԵՐ

1. Gordon B. Hinckley, “Save the Children,” *Ensign*, Nov. 1994, 54; emphasis added.
2. Դեյվիդ Ա. Բեդնար, «Մենք հավատում ենք մաքրաբարո լինելուն», *Լիստնուս*, մայիս 2013, 42:
3. Քերոլ Մ. Սթեֆենս, «Բժշկող Տերը» *Լիստնուս*, նոյ. 2016, 11:
4. Ռիչարդ Գ. Սքոթ, «Ստանալ հոգևոր առաջնորդություն», *Լիստնուս*, նոյ. 2002, 88:

### ԽՈՐՀՈՒՐԴ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ, ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երբ զոհը բավականաչափ վստահում է ձեզ, որպեսզի կիսվի ձեզ հետ իր տառապանքների և բռնությունների վերաբերյալ, նրանց հետ զրույցները պետք է սկսել սիրով և նրանց հանդեպ կարեկցանքով: Շատ հաճախ զոհերը կիսվել են ինձ հետ այն մասին, որ երբ մոտեցել են իրենց եպիսկոպոսին օգնության համար, առաջին պահանջը օրինազանցին ներելն էր: Սա կարող է զոհի մոտ տպավորություն թողնել, որ ամենակարևորը օրինազանցն է: Երբ դա տեղի է ունենում, մարդիկ հազվադեպ են վերադառնում իրենց եպիսկոպոսների մոտ օգնության համար և բաց են թողնում հոգևոր ապաքինումը, որը հնարավոր է հոգևոր սիրով և աջակցությամբ:

Ներելը ապաքինման գործընթացի էական մասն է և պատվիրան է, բայց խնդրում եմ վստահեք, որ թույլ տալով ինչ-որ մեկին առաջինը ճանաչել իր տառապանքը, զգալ նրա զգացումները և խոսել դրանց մասին վստահելի անձնավորության հետ ժամանակի ընթացքում, նրան կտանի դեպի ապաքինում, որը գալիս է օրինազանցին ներել կարողանալուց:

Ավելի շատ տեղեկությունների համար Եկեղեցու ղեկավարները կարող են դիմել [ministering.lds.org](http://ministering.lds.org) գտնելու “Abuse: Help for the Victim” «Սեռական բռնություն՝ օգնություն զոհերի համար»:

# Հին ընտանեկան ալբոմ.

## ընտանեկան պատմությունների զորությունը

*Իմ նախնիների ժառանգությունը  
շարունակում է ապրել իմ միջոցով,  
մշտապես ազդելով իմ կյանքի վրա՝  
դեպի ավելի լավը:*

### Ամենիս Դուսքասու

Մի ամառային առավոտ, նախքան Երկրորդ Համաշխարհային Պատերազմը, իմ մեծ պապը, ինչպես միշտ, արթնացավ նախքան արևածագը: Նա դուրս եկավ բլրի վրա կառուցված իր տնից, որը նայում էր դեպի կանաչ հովիտը և իր գյուղը Ռումինիայում ու նստեց առավոտյան ցողով պատված խոտի վրա, խորապես կլանված նույն մտքերով, որոնք որոշ ժամանակ նրա ուղեղում էին: Լինելով կրթված մարդ՝ մեծ սրտով և հարցասեր մտքով, նա գյուղում սիրված և հարգված էր բոլորի կողմից:

Արևի բարձրանալուց հետո նա

գնաց տուն և խոստովանեց իր կնոջը, որ իրեն հետաքրքիր էր տեսնել, թե ինչպիսինս էր լինելու իր թաղումը. նա ուզում էր կազմակերպել փորձնական թաղում: Նա որոշեց ամսաթիվը, գնեց դագաղը, վարձեց քահանային, մասնագիտացված լացողների և ձեռք բերեց բոլոր մյուս պարագաները, որոնք պահանջվում էին հունական ուղղափառ ավանդությամբ: Հետո եկավ թաղման փորձի օրը: Մեղանները դրվեցին գյուղի մեջտեղում հիշատակի ճաշկերույթի համար, իսկ ընտանիքի անդամները սև զգեստներ էին հագել. քահանան եկավ, իմ մեծ պապը պառկեց դագաղի մեջ, հարմարեցնելով բարձն այնպես, որպեսզի հարմար լիներ դիտելու համար, և թաղման արարողությունը սկսվեց: Երբ ծիսակատարությունն ավարտվեց, ողջ գյուղը հրավիրվեց ճաշկերույթի, և իմ մեծ պապը կատարեց իր երազանքը՝ պարելով իր սեփական թաղման ժամանակ: Նա ապրեց ևս 20 տարի, հաճախ ստուգելով՝ համոզվելու համար, թե արդյոք իր դագաղում դեռ տեղավորվում էր:

### Ոչ միայն անուններ և ամսաթվեր

Ես երբեք չեմ տեսել իմ մեծ պապին, բայց նրա պատմությունը սիրելի է եղել է ինձ համար, որն ինձ է փոխանցվել իմ տատիկի ու պապիկի կողմից: Ամեն օր իմ տատիկն ու պապիկը քույրերիս, եղբայրներիս և ինձ պատմություններ էին պատմում մեր նախնիների մասին, թե որտեղից էին եկել, ինչպիսին էին նրանք, նրանց արժեքները, երազանքներն ու հույսերը: Ամեն կիրակի ճաշից հետո իմ պապիկն ու տատիկը հանում էին ընտանեկան ալբոմը և ամեն անգամ, երբ շրջում



էին էջը, պատմությունները կենդանանում էին, և սրտերը միահյուսվում էին սիրո գորելենում, որն ընդգրկում էր վեց սերունդ: Դրանք ուղղակի հին լուսանկարներ չէին՝ ետևում գրիչով գրված անուններով և ամսաթվերով: Ամեն դեմքի ետևում հայր էր կամ մայր, որդի էր կամ դուստր, եղբայր էր կամ քույր, և այսպես նրանց ժառանգությունը, ընտանեկան այլ ավանդույթների հետ միասին փոխանցվեցին ինձ:

### Ուժ փորձության ժամանակներում

Մինչ ես կդառնայի 19 տարեկան, իմ ծնողները և իմ անմիջական ընտանիքի անդամներից շատերը մահացել էին, և իմ ժառանգած ունեցվածքի մեծ մասը կորել էր կամ գողացել էին: Մակայն կա մի բան, որը ժամանակը, բնական աղետները կամ նույնիսկ մահը չէր կարողացել կործանել կամուրջը, որը միացնում էր անցյալը, ներկան և ապագան, որոնք կառուցել էին իմ ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը: Նրանց ջանասիրության շնորհիվ, թելերը, որոնք միմյանց են կապում իմ ընտանիքի սրտերը, ինձ ուժ են տվել՝ հաղթահարելու դժվարին հանգամանքերը:

Երբ ծնողներս, պապիկներն ու տատիկները մահացան, ես զգացի այնպիսի խորը վիշտ, որ կասկածում էի, թե կկարողանայի բավականաչափ ուժ գտնել շարունակելու կյանքս: Ես օրհնված էի՝ զգալով նրանց ազդեցությունը վարագույրի այն կողմից, և դա օգնեց ինձ ձեռք բերել ամուր վկայություն փրկության ծրագրի վերաբերյալ, մահից հետո կյանքի մասին, իսկ հետագայում՝ տաճարային արարողությունների վերաբերյալ, որոնք

այնքան անհրաժեշտ են մեր փրկության համար: Ես երբեք չեմ հանդիպել իմ մեծ տատիկին ու պապիկին, իմ հորաքույր մորաքույրներին, հորեղբայրներին ու քեռիներին, բայց ամեն անգամ, երբ ես վերցնում եմ հին ընտանեկան ալբոմը նրանց լուսանկարներով, տեսնում եմ ինձ նրանց աչքերում: Ես նա եմ, ով կամ՝ շնորհիվ բոլոր նրանց, ովքեր եղել են ինձանից առաջ: Նրանց փորձառություններն ու իմաստությունն օգնել են ձևավորել իմ բնավորությունը և առաջնորդել են ինձ իմ կյանքում:

Մեծագույն պարզներից մեկը, որ իմ ընտանիքը տվել է ինձ, սկսած վաղ մանկությունից՝ իմ ընտանեկան պատմության գիտելիքն է և այն համոզմունքը, որ ես եմ կապը անցյալի և ապագայի միջև: Ես գիտեմ նաև, որ եկել եմ երկիր ապրելու իմ սեփական պատմությունը, որ ուսումնասիրեմ, զգամ ու փայփայեմ այն: Մա իմ ընտանեկան պատմության գիտելիքն է, որը նեցուկ է դառնում ինձ կյանքի բոլոր փորձությունների մեջ:

Ես հաճախ եմ մտածում իմ ընտանիքի մասին, որը վարագույրի այն կողմում է և այն գոհաբերությունների մասին, որ նրանք են արել ինձ համար, որպեսզի ես ունենամ ավելի լավ կյանք: Ես մտածում եմ տաճարային արարողությունների մասին, որոնք հնարավորություն են տալիս մեզ մի օր կրկին միասին լինելու որպես ընտանիք: Եվ ես մտածում եմ իմ Փրկիչի Քավության մասին, ով այս բոլորը հնարավոր դարձրեց: Նա վճարել է գինը, որպեսզի մենք կարողանանք ապրել: Մրա համար մենք սիրում ենք Նրան և երկրպագում Նրան երախտագիտությամբ այսօր և հավիտյան: ■

*Հեղինակն սպրոտ է Նյու Յորքում (ԱՄՆ):*





**Երեց Լարի Ռ. Լորենս**  
Յոթանասունից





# Պատերազմը շարունակվում է

*Պատերազմը, որը սկսվեց երկնքում,  
շարունակվում է մինչև այսօր: Փաստորեն,  
ճակատամարտը թեժանում է, երբ Սրբերը  
նախապատրաստվում են Փրկիչի վերադարձին:*

Յուրաքանչյուրը, ով հետևում է միջազգային նորություններին, կհամաձայնվի, որ մենք ապրում ենք «պատերազմների և պատերազմների համբավների» ժամանակաշրջանում (ՎևՈւ 45.26): Բարեբախտաբար, երկրագնդի վրա ամեն մեկը պատերազմի վետերան է: Մենք ճակատամարտում էինք չարի հորդաների դեմ մի շարունակական պատերազմում, որը սկսվել էր նախաերկրային շրջանում, նախքան մեր ծնվելը:

Քանի որ մենք դեռ չէինք ստացել ֆիզիկական մարմիններ, կռվեցինք Երկնքի այդ Պատերազմում առանց սրերի, հրացանների կամ ռումբերի: Բայց կռիվն այնքան սաստիկ էր, որքան որևէ ժամանակակից պատերազմ, և կային միլիարդավոր զոհեր:

Նախաերկրային պատերազմը մոլվում էր խոսքերով, գաղափարներով, բանավեճերով և համոզումով (տես Հայտնություն 12.7–9, 11): Մարդկանց վախեցնելը սատանայի ռազմավարությունն է: Նա գիտի, որ վախը հավատքը կործանելու լավագույն ուղին է: Նա հավանաբար այսպիսի փաստարկներ է օգտագործել. «Դա խիստ դժվար է»: «Անհնար է նորից մաքուր դառնալ»: «Առկա է խիստ մեծ ռիսկ»: «Ինչպե՞ս եք իմանում, որ կարող եք վստահել Հիսուս Քրիստոսին»: Նա շատ էր նախանձում Փրկիչին:

Բարեբախտաբար Աստծո ծրագիրը հաղթեց սատանայի ստերին: Աստծո ծրագիրը ներառում էր ազատ կամքը մարդկության համար և մի մեծ զոհաբերություն: Եհովան, ով հայտնի է մեզ որպես Հիսուս Քրիստոս, կամավոր ստանձնեց լինել այդ զոհը՝ տանջվելու մեր բոլոր մեղքերի համար: Նա կամեցավ վար դնել Իր կյանքը Իր եղբայրների և քույրերի համար, որպեսզի նրանք, ովքեր ապաշխարեին, կարողանային ետ գալ մաքուր, և ի վերջո, դառնային իրենց Երկնային Հոր նման: (Տես Մովսես 4.1–4, Աբրահամ 3.27:)

*Երկնային պատերազմում մենք սիրում էինք և աջակցում մեր Երկնային Հորը: Մենք ցանկանում էինք նմանվել Նրան:*

Մյուս առավելությունը, որն օգնեց Եհովային նվաճել Աստծո զավակների սրտերը, հզոր վկայություններն էին, որոնք բերվեցին Իր կողմնակիցների կողմից, ովքեր առաջնորդվում էին Միքայել հրեշտակապետի կողմից (տես Հայտնություն 12.7, 11, Վևու 107.54): Նախամահկանացու կյանքում Ադամը կոչվում էր Միքայել, իսկ սատանան կոչվում էր Լյուցիֆեր, որը նշանակում է զույս կրող:<sup>1</sup> Դա կարող է տարօրինակ անուն թվալ խավարի իշխանի համար (տես Մովսես 7.26), բայց սուրբ գրություններն ուսուցանում են, որ սատանան հրեշտակ էր, որն իշխանություն ուներ Աստծո ներկայության մեջ, մինչև իր ընկնելը (տես Վևու 76.25–28):

Ինչպե՞ս կարող էր այդքան մեծ գիտությամբ և փորձառությամբ ոգին այդքան հեռու ընկնել: Դա իր հպարտության պատճառով էր: Լյուցիֆերն ապստամբեց մեր Երկնային Հոր դեմ, որովհետև նա ցանկացավ Աստծո արքայությունը իր համար:

«Չզուշացիր հպարտությունից» իր դասական ելույթում Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը (1899–1994) ուսուցանել է, որ «նրա հպարտ ցանկությունն էր գահագրկել Աստծուն»:<sup>2</sup> Դուք նաև լսել եք, որ սատանան ուզում էր կործանել մարդու ազատ կամքը, բայց դա միակ պատճառը չէր, որ նա շնորհից ընկավ: Նա դուրս գցվեց երկնքից Հոր և Որդու դեմ ապստամբության համար (տես Վևու 76.25, Մովսես 4.3):

Ինչո՞ւ ես և դուք կռվեցինք դևի դեմ: Մենք կռվեցինք հանուն հավատարմության: Մենք սիրում էինք և աջակցում մեր Հորը երկնքում: Մենք ցանկանում էինք նմանվել Նրան: Լյուցիֆերի նպատակն այլ էր: Նա ցանկանում էր գրավել Հոր տեղը (տես Եսայիա 14.12–14, 2 Նեվիի 24.12–14): Պատկերացրեք, թե ինչպես սատանայի դավաճանությունը ցավ պատճառեց մեր Երկնային ծնողներին: Սուրբ գրություններում մենք կարդում ենք «երկինքները լաց եղան նրա վրա» (Վևու 76.26):

Թե՛՛ կռվից հետո Միքայելը և նրա զորքերը հաղթեցին: Երկնային զորքերի երկու-երրորդն ընտրեց հետևել Հորը (տես Վևու 29.36): Սատանան և նրա հետևորդները դուրս գցվեցին երկնքից, բայց նրանք



չուղարկվեցին դրսի խավարը: Նախ նրանք ուղարկվեցին այս երկիր (տես Հայտնություն 12.7–9), որտեղ Հիսուս Քրիստոսն էր ծնվելու, և որտեղ Նրա քավիչ զոհաբերությունն էր իրականացվելու:

Սատանայի զորքերին ինչո՞ւ թույլ տրվեց գալ երկիր: Նրանք եկան ապահովելու ընդդիմություն նրանց համար, ովքեր այստեղ ստուգվում են (տես 2 Նեվիի 2.11): Արդյոք նրանք ի վերջո կզգվե՞ն դրսի խավարի մեջ: Այո: Հազարամյակից հետո սատանան և նրա զորքերը դուրս կզգվեն հավիտյան:

Սատանան գիտի, որ իր օրերը հաշված են: Հիսուսի Երկրորդ Գալուստի ժամանակ սատանան և նրա հրեշտակները կկապվեն 1000 տարի (տես Հայտնություն

20.1–3, 1 Նեփի 22.26, Վևնու 101.28): Երբ այդ վերջնագիծը մոտենում է, չարի ուժերը կոկում են հուսահատորեն, գրավելով այնքան շատ հոգիներ, որքան կարող են:

Հովհաննես Հայտնողին ցույց տրվեց Պատերազմը Երկնքում որպես մեծ տեսիլքի մի մաս: Նրան ցույց տրվեց, թե ինչպես սատանան վար զցվեց երկրի վրա՝ մարդկությանը զայթակղելու համար: Սա էր Հովհաննեսի արձագանքը. «Վա՛յ երկրի բնակիչներին, այո՛ նրանց, որ բնակվում են ծովի կղզիներում. քանզի դևը վայր է իջել ձեզ մոտ մեծ ցատումով, որովհետև գիտի, որ քիչ ժամանակ ունի» (Հայտնություն 12.12):

Այսպիսով, ինչպե՞ս է սատանան անցկացնում իր օրերը, իմանալով, որ նա կորցնելու ժամանակ չունի: Պետրոս Առաքյալը գրել է, որ «սատանան գոռոզ առիծի պես ման է զայլս եւ որոնում է թէ որին կու տայ» (1 Պետրոս 5.8):

Ի՞նչն է դրդում սատանային: Նա երբեք մարմին չի ունենա, նա երբեք կին կամ ընտանիք չի ունենա, և նա երբեք չի ունենա ուրախության լիություն, ուստի նա ուզում է բոլոր տղամարդկանց և կանանց դարձնել «թշվառ, ինչպես ինքն է» (2 Նեփի 2.27):

Դևը թակարդում է բոլոր մարդկանց, բայց հատկապես նրանց, ովքեր ամենամեծ ներուժն ունեն հավերժական երջանկության համար: Նա պարզապես նախանձում է յուրաքանչյուրին, ով վեհացման ուղու վրա է գտնվում: Սուրբ գրություններն ուսուցանում են, որ սատանան «պատերազմում է Աստծո սրբերի հետ և շրջապատում է նրանց շուրջանակի» (D&C 76:29):

Պատերազմը, որը սկսվեց երկնքում, շարունակվում է մինչև այսօր: Փաստորեն, ճակատամարտը թեժանում է, երբ Սրբերը նախապատրաստվում են Փրկիչի վերադարձին:

Նախագահ Բրիգամ Յանգը (1801–77) մարգարեացել է. «որ Եկեղեցին կտարածվի, կբարգավաճի, կաճի և կընդլայնվի, և երկրի ազգերի մեջ ավետարանի տարածմանը գուզընթաց սատանայի գորությունը կաճի»<sup>3</sup>:

Կարծում եմ, մենք բոլորս կհամաձայնվենք, որ այդ մարգարեությունը կատարվում է, երբ մենք դիտում ենք, թե ինչպես է չարը ներթափանցում աշխարհի հասարակությունների մեջ: Նախագահ Յանգն ուսուցանել է, որ մենք պետք է ուսումնասիրենք թշնամու մարտավարությունը, որպեսզի հաղթենք նրան: Ես կկիսվեմ սատանայի չորս ստուգված ռազմավարություններով և որոշ գաղափարներով այն մասին, թե ինչպես դիմադրել դրանց:

## Սատանայի ռազմավարությունները

**1. Գայթակղություն:** Դևն անամոթ է, երբ մեր մտքերը ամբարիշտ գաղափարներով լցնելուն է վերաբերում: Մորմնի Գիրքն ուսուցանում է, որ սատանան շնչում է անմաքուր և անբարյացակամ մտքեր և ցանում է

կասկածանքի մտքեր: Նա փսփսում է մեր ականջին՝ գործել հակամտերից հարկադրված և արդարացնել եսասիրությունն ու ազահությունը: Նա չի կամենում, որ մենք ճանաչենք, թե որտեղից են այս գաղափարները գալիս, այսպիսով նա շնչում է. «Ես դև չեմ, քանզի այդպիսին չկա» (2 Նեփի 28.22):

Ինչպե՞ս կարող ենք դիմադրել այս պարզ գայթակղությանը: Ամենաարդյունավետ միջոցներից մեկը ուղղակի նրան հեռու ուղարկելն է: Դա այն է, ինչ Հիսուսն արեց:

Գայթակղության սարի վրա Նոր Կտակարանի Փրկիչի պատմությունը շատ ուսանելի է: Յուրաքանչյուր գայթակղությունից հետո, որը դևը ներկայացնում էր նրան, Հիսուսն օգտագործում էր երկու քայլից բաղկացած պաշտպանական եղանակ. առաջինը՝ Նա հրամայում էր սատանային հեռանալ, ապա Նա մեջբերում էր սուրբ գրության մի հատված:

Թույլ տվեք մի օրինակ բերել. «Դեն գնա, սատանայ, հրամայեց Հիսուսը «որովհետև գրուած է թէ Տիրոջը՝ քո Աստուծուն երկրպագիր եւ միայն նորան [ծառայիր]» (Մատթեոս 4.10): Հաջորդ հատվածն ասում է. «Այն ժամանակ սատանան թողեց նորան, եւ ահա հրեշտակներ մօտ եկան եւ ծառայում էին նորան» (Մատթեոս 4.11): Փրկիչի պաշտպանությունը շատ արդյունավետ էր:

Նախագահ Հեբեր Զ. Գրանտի (1856–1945) կենսագրությունը տեղեկություն է տալիս այն մասին, թե ինչպես Նախագահ Գրանտը դիմադրեց դևին, երբ երիտասարդ էր: Երբ Նախագահ Գրանտը հասկացավ, որ սատանան շնչում էր իրեն, փորձելով կասկածներ առաջացնել իր սրտում, նա ուղղակի բարձրաձայն ասաց. «Պարոն դև, փակիր բերանդ»:<sup>4</sup>

Դուք իրավունք ունեք սատանային ասել, որ հեռանա, երբ դիմակայում եք գայթակղությանը: Սուրբ գրություններն ուսուցանում են, «Հակառակ կացեք սատանային, եւ նա կփախչի ձեզանից» (Յակոբոս 4.7):

Փրկիչի պաշտպանության մյուս մասը սուրբ գրության հատվածներ մեջբերելն էր: Մեծ գորություն կա սուրբ գրության հատվածներն անգիր հիշելիս, ինչպես Հիսուսն արեց: Սուրբ գրությունների հատվածները կարող են դառնալ հոգևոր զինանոցի զենք:

Երբ ձեզ գայթակղում են, դուք կարող եք արտասանել պատվիրանները, ինչպես օրինակ. «Յիշիր հանգստութեան օրը, նորան սուրբ պահելու համար»: «Միրեք ձեր թշնամիներին» կամ «Թող առաքինությունը զարդարի ձեր մտքերն անդադար» (Ելից 20.8, Դուկաս 6.27, Վևնու 121.45): Սուրբ գրությունների գորությունը ոչ միայն վախեցնում է սատանային, այլ նաև Հոգին է բերում ձեր սիրտը, հաստատում է ձեզ և ամրացնում ձեզ գայթակղության դեմ:

**2. Ստեր և խաբեություն:** Սուրբ գրքերը հայտնում են, որ սատանան «ստերի հայրն է» (2 Նեփի 9.9): Մի հավատացեք նրան, երբ նա ուղերձներ է շնչում,



ինչպես օրինակ «Դու երբեք ոչինչ ճիշտ չես անում», «Դու շատ մեղավոր ես ներվելու համար», «Դու երբեք չես փոխվի», «Ոչ ոք քո մասին չի անհանգստանում» և «Դու տաղանդներ չունես»:

Մեկ այլ, նրա հաճախ օգտագործվող ստերիոգ է հետևյալը. «Դուք պետք է փորձեք ամեն ինչ առնվազն մեկ անգամ, ուղղակի փորձառություն ձեռք բերելու համար: Մի անգամը չի վնասի քեզ»: Փոքրիկ կեղտոտ գաղտնիքն այն է, որ նա չի ուզում որ դուք իմանաք, որ մեղքը հակում է առաջացնում:

Մեկ այլ արդյունավետ սուտ, որը սատանան կփորձի ձեզ վրա, սա է. «Բոլորն էլ դա անում են: Դա նորմալ է»: Դա նորմալ չէ: Այսպիսով, ասա դևին, որ դու չես ուզում գնալ թելեստիալ արքայություն, նույնիսկ, եթե մնացած բոլորը գնում են այնտեղ:

Չնայած սատանան կստի ձեզ, դուք կարող եք Հոգուն վստահել, որ ասի ձեզ ճշմարտությունը: Այդ

պատճառով Սուրբ Հոգու պարզև աղքատ կարևոր է:

Դեր կոչվում է «մեծ մոլորեցնող»:<sup>5</sup> Նա փորձում է կեղծել յուրաքանչյուր ճշմարիտ սկզբունք, որը ներկայացնում է Տերը:

Հիշեք, կեղծիքները նույնը չեն, ինչ հակադրությունները: Ճերմակի հակառակը սևն է, բայց կեղծված ճերմակը կարող է լինել ոչ լրիվ սպիտակ կամ գորշ: Կեղծիքները նմանեցվում են իսկականին, որպեսզի խաբեն միամիտ մարդկանց: Դրանք ինչ-որ լավ բանի աղավաղված տարբերակն են, և ճիշտ, ինչպես կեղծված փողը, արժեք չունեն: Թույլ տվեք պարզաբանել:

Հավատքի համար սատանայի կեղծիքներից մեկը սնոտիապաշտությունն է: Միթո համար նրա կեղծիքը կիրքն է: Նա կեղծում է քահանայությունը, ներկայացնելով քահանայանենգումը և նմանակում է Աստծո հրաշքները կախարդության միջոցով:

**Դուք կարող եք Հոգուն վստահել,  
որ ասի ձեզ ճշմարտությունը:  
Այդ պատճառով Սուրբ Հոգու  
պարզև աղքատ կարևոր է:**



Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը կարգված է Աստծո կողմից, իսկ համասեռ ամուսնությունը ընդամենը կեղծիք է: Այն ոչ սերունդ է բերում, ոչ էլ վեհացում: Չնայած նրա նմանակումները խաբում են շատ մարդկանց, դրանք իրական չեն: Դրանք չեն կարող բերել տևական երջանկություն:

Վարդապետություն և Ուխտերում Տերը նախազգուշացրել է մեզ կեղծիքների մասին. Նա ասել է. «Այն, ինչ չի շենացնում, Աստծուց չէ, և խավար է» (ՎևՈւ 50.23):

**3. Հակառակություն:** Հակառակության հայրը սատանան է: Փրկիչն ուսուցանում է. «Նա դրդում է մարդկանց սրտերը՝ բարկությամբ վիճելու մեկը մյուսի հետ» (3 Նեվի 11.29):

Դարերի փորձառությամբ դևը սովորել է, որ որտեղ հակառակություն կա, Տիրոջ Հոգին հեռանում է: Այն ժամանակից ի վեր, երբ սատանան համոզեց Կայենին սպանել Աբելին, նա ազդում է եղբայրների և քույրերի

վրա, որ վիճեն: Նա նաև խնդիրներ է հարուցում ամուսնությունների մեջ, ծխի անդամների միջև և միսիոներական զույգերի միջև: Նա հրճվում է՝ տեսնելով լավ մարդկանց միմյանց հետ վիճելիս: Նա փորձում է ընտանեկան վեճեր սկսել հենց եկեղեցուց առաջ՝ կիրակի օրը, հենց ընտանեկան երեկոյից առաջ՝ երկուշաբթի երեկոյան, և երբ զույգերը ծրագրում են մասնակցել տաճարային նիստի: Ժամանակի նրա ընտրությունը կանխատեսելի է:

Երբ հակառակություն կա ձեր տանը կամ աշխատավայրում, անմիջապես դադարեցրեք ինչ-որ անում եք և ձգտեք խաղաղություն հաստատել: Նշանակություն չունի, թե ով է սկսել այն:

Հակառակությունը հաճախ սկսվում է բծախնդրությունից: Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ «դևը շողոքորթում է մեզ, որ մենք շատ արդար ենք, երբ մենք սնուցվում ենք ուրիշների թերություններով»:<sup>6</sup> Երբ մտածեք դրա մասին, ինքնագոհությունը ուղղակիորեն արդարակեցության իսկական կեղծիքն է:

Սատանան սիրում է հակառակություն տարածել Եկեղեցում: Նա մասնագիտացած է Եկեղեցու ղեկավարների սխալները մատնացույց անելով: Ջոզեֆ Սմիթը նախազգուշացրել է, որ սկզբնական քայլը դեպի ուրացություն Եկեղեցու ղեկավարների հանդեպ վստահությունը կորցնելն է:<sup>7</sup>

Գրեթե ողջ հակամոռմոնական գրականությունը հիմնված է Ջոզեֆ Սմիթի բնութագրի վերաբերյալ ստերի վրա: Թշնամին տքնաջան աշխատում է վարկաբեկել Ջոզեֆին, որովհետև Վերականգնման ուղերձը կախված է Մարգարեի պատմությունից, այն մասին, թե ինչ պատահեց Մրբազան Պուրակում: Դևն ավելի քան տքնաջան է աշխատում այսօր, քան երբևէ նախկինում, ստիպելով անդամներին կասկածի տակ դնել իրենց վկայությունները Վերականգնման վերաբերյալ:

Մեր տնտեսության վաղ օրերին քահանայության շատ եղբայրներ, ի դժբախտություն իրենց, հավատարիմ չմնացին Մարգարեին: Նրանցից մեկը Լայման Ի. Ջոնսոնն էր, ով հեռացվեց անարդար վարքի համար: Հետագայում նա ողբում էր Եկեղեցուց հեռանալու համար. «Ես թույլ կտայի, որ իմ աջ ձեռքը կտրեին, եթե ես կարողանայի կրկին հավատալ դրան: Այն ժամանակ ես լցված էի ուրախությամբ և բերկրանքով: Իմ երազները հաճելի էին: Երբ արթնանում էի առավոտյան, հոգիս զվարթ էր: Ես երջանիկ էի օր ու գիշեր, խաղաղությամբ և ուրախությամբ և գոհությամբ լեցուն: Իսկ այժմ խավար է, ցավ, վիշտ, ծայրահեղ թշվառություն: Այդ ժամանակից ես ոչ մի երջանիկ պահ չեմ տեսել»:<sup>8</sup>

Խորհեք այդ խոսքերի մասին: Դրանք հնչում են որպես նախազգուշացում Եկեղեցու բոլոր անդամներին:

Ես նորադարձ եմ Եկեղեցում:  
Ես մկրտվեցի, երբ 23 տարեկան էի,  
երիտասարդ չափահաս միայնակ  
ամուրի էի և հաճախեում էի ԱՄՆ-ի  
Արիզոնայի բժշկական համալսարանը:  
Ես անմիջականորեն գիտեմ,  
թե ինչպես է սատանան աշխատում  
ունկնդիրների հետ նրանց շփոթեց-  
նելու և վհատեցնելու համար, երբ  
նրանք որոնում են ճշմարտությունը:

Իմ ողջ երիտասարդական տարի-  
ներին ես հետևել եմ Վերջին Օրերի  
Մրբերի իմ ընկերների օրինակին: Ես  
տպավորված էի այն ձևից, թե նրանք  
ինչպես էին կառավարում իրենց  
կյանքը: Ես որոշեցի ավելի շատ բան  
իմանալ Եկեղեցու մասին, բայց չէի  
կամենում պատմել որևէ մեկին, որ  
ուսումնասիրում էի մորմոնիզմը: Իմ  
ընկերների ճնշումից խուսափելու  
համար ես որոշեցի իմ ուսումնա-  
սիրությունը դարձնել մասնավոր  
հետազոտություն:

Սա ինտերնետից շատ տարիներ  
առաջ էր, ուստի ես գնացի հասարա-  
կական գրադարան: Ես գտա Մորմոնի  
Գրքի մի օրինակ և մի գիրք, որը կոչ-  
վում էր *A Marvelous Work and a Wonder*,  
որը գրվել էր Տասներկու Առաքյալների  
Քվորումից Երեց ԼեԳրանդ Ռիչարդսի  
կողմից (1886–1983): Ես սկսեցի կար-  
դալ այս գրքերը մեծ ցանկությամբ և  
գտա, որ դրանք ոգեշնչող էին:

Երբ հոգիս ձգտում էր ավելի շատ  
բան իմանալ, սատանան սկսեց շնջալ  
ականջիս: Նա ասաց ինձ, որ լիովին անկողմնակալ լինե-  
լու համար ես պետք է կարդայի նաև, թե ինչ էին գրում  
Եկեղեցու քննադատները: Ես վերադարձա հասարակա-  
կան գրադարան և սկսեցի որոնել: Եվ իհարկե գտա մի  
գիրք, որը վարկաբեկում էր Ջոզեֆ Սմիթին:

Այս հակամորմոնական գրքի ընթերցումը շփոթեցրեց  
ինձ: Ես կորցրի այն հաճելի ոգին և ազդեցությունը,  
որն ուղեկցել էր իմ ուսումնասիրության ընթացքում:  
Ես հիասթափվեցի և պատրաստվում էի թողնել ճշմար-  
տության իմ որոնումները: Ես աղոթում էի պատասխան  
ստանալու համար, երբ կարդում էի հակամորմոնական  
գրականություն:

Ի զարմանս ինձ, ես ստացա մի հեռախոսազանգ  
իմ միջնակարգ դպրոցի ընկերուհուց, ով հաճախում  
էր Բրիգամ Յանգի Համալսարանը: Նա հրավիրեց ինձ



այցելել իրեն Յուտայում, խոստանալով, որ ես կհավա-  
նեի այդ գեղատեսիլ ճամփորդությունը: Նա գաղափար  
չունեի, որ ես գաղտնի ուսումնասիրում էի նրա Եկեղե-  
ցու պատմությունը:

Ես ընդունեցի նրա հրավերը: Ընկերուհիս առա-  
ջարկեց, որ գնայինք Մուլթ Լեյք Սիթի այցելելու Տաճա-  
րային Հրապարակը: Նա զարմացավ իմ խանդավառ  
արձագանքից: Նա գաղափար չունեի, թե որքան էի  
հետաքրքրված իմանալու ճշմարտությունը Ջոզեֆ  
Սմիթի և Վերականգնման մասին:

Տաճարային Հրապարակի քույր միսիոներները  
շատ օգտակար եղան: Առանց իմանալու այդ, նրանք  
պատասխանեցին իմ հարցերից շատերին: Նրանց  
վկայություններն ազդեցին ինձ վրա «կասկածելու  
[իմ] կասկածներին»<sup>9</sup> և իմ հավատքը սկսեց աճել:

**Դևը թակարդում է բոլոր մարդկանց, բայց հատկապես նրանց, ովքեր ամենամեծ ներուժն ունեն հավերժական երջանկության համար:**

Մրտաառաջ վկայության գործությունը անգնահատելի է:

Ընկերուհիս ևս կիսվեց իր վկայությամբ ինձ հետ և հրավիրեց ինձ աղոթել և հարցնել Աստծուն, թե արդյոք Եկեղեցին ճշմարիտ էր: Դեպի Արիզոնա տանող երկար ճանապարհին ես սկսեցի աղոթել հավատքով՝ առաջին անգամ «մաքուր սրտով, անկեղծ միտումով» (Մորոնի 10.4): Այդ ուղևորության ժամանակ մի պահ ինձ թվաց, որ իմ ողջ մեքենան լուսավորվեց լույսով: Ես ինքնուրույն հասկացա, որ լույսը կարող է ցրել խավարը:

Հետո, երբ որոշեցի մկրտվել, դևը մի վերջնական ճիգ գործադրեց: Նա աշխատեց իմ ընտանիքի անդամների վրա, ովքեր արեցին ամեն հնարավորը ինձ հիասթափեցնելու համար և հրաժարվեցին գալ իմ մկրտությանը:

Համենայն դեպս, ես մկրտվեցի և նրանց սրտերն աստիճանաբար փափկեցին: Նրանք սկսեցին օգնել ինձ հետագոտել իմ ընտանեկան պատմությունը: Մի քանի տարի անց ես մկրտեցի իմ փոքր եղբորը: Ընկերուհիս, ով հրավիրեց ինձ այցելել իրեն Յուտայում, այժմ իմ կինն է:

**4. Հուսահատություն:** Երբ բոլոր մյուս միջոցները ձայնողվում են, սատանան արդյունավետ օգտագործում է այս միջոցը ամենահավատարիմ Սրբերի վրա: Ինչ վերաբերում է ինձ, երբ ես սկսում եմ հուսահատվել, դա ինձ օգնում է ուղղակի ճանաչել, թե ով է փորձում ինձ վար տապալել: Մա ինձ բավականաչափ խենթացնում է, որպեսզի ես զվարթանամ, պարզապես ի հեճուկս դևի:

Մի քանի տարի առաջ Նախագահ Բենսոնը մի ելույթ ունեցավ, որը կոչվում էր «Մի հուսահատվեք»: Այդ հեռատես ելույթում նա նախագոչուցրեց. «Սատանան գնալով ավելի ուժգնությամբ է ձգտում հաղթել Սրբերին հուսահատությամբ, վիատությամբ, ճնշվածությամբ և ընկճախտով»:<sup>10</sup> Նախագահ Բենսոնը հորդորեց Եկեղեցու անդամներին զգոն լինել և տվեց 12 իրատեսական առաջարկություններ՝ հուսահատության դեմ պայքարելու համար:

Նրա առաջարկությունները ներառում են՝ ծառայել ուրիշներին, աշխատել տքնաջան և խուսափել պարպությունից, կիրառել առողջարար սովորույթներ, որոնք ներառում են՝ մարզվել և օգտագործել ուտելիքները բնական վիճակում, խնդրել քահանայության օրհնություն, լսել ոգեշնչող երաժշտություն, հաշվել ձեր օրհնությունները և սահմանել նպատակներ: Եվ ամենից վեր, ինչպես սուրբ գրություններն են ուսուցանում, մենք պետք է միշտ աղոթենք, որպեսզի հաղթենք սատանային (տես Վևու 10.5):<sup>11</sup>

*Սատանան դողում է, երբ տեսնում է Ամենաբարյուր սրբին իր ծնկների վրա:*<sup>12</sup>

Կարևոր է իմանալ, որ սահմանափակումներ կան չարի գործության դեմ: Աստվածագլուխն է դնում այդ սահմանները և սատանային թույլ չի տրվում դրանք անցնել: Օրինակ՝ սուրբ գրությունները հավաստիացնում են մեզ, որ «Սատանային տրված չէ փոքր երեխաներին զայթակղելու գործությունը» (Վևու 29.47):

Մեկ այլ կարևոր սահմանափակում է, որ սատանան չգիտի մեր մտքերը, մինչև մենք դրանք չասենք նրան: Տերը բացատրել է. «Չկա ուրիշ ոչ մեկը, բացի Աստծուց, որ իմանա քո մտքերը և մտադրությունները քո սրտի» (Վևու 6.16), այսպիսով սատանան իրականում չգիտի, թե ինչ էք դուք մտածում:

Երևի այդ պատճառով է Տերը մեզ պատվիրաններ տվել, ինչպես օրինակ. «Մի տրտնջա» (Վևու 9.6) և «Քո մերձավորի մասին չար բան մի խոսի» (Վևու 42.27): Եթե դուք կարողանաք սանձել ձեր լեզուն (տես Յակոբոս 1.26), դուք չեք ավարտի՝ տալով չափազանց շատ տեղեկություններ դևին: Երբ նա լսում է տրտնջոց, բողոք և քննադատություն, ուշադիր գրառումներ է կատարում: Ձեր բացասական խոսքերը բացահայտում են ձեր թուլությունները թշնամուն:

Ես լավ լուր ունեմ ձեզ համար: Աստծո գործերն ավելի շատ են, քան Լյուցիֆերի գործերը: Դուք գուցե նայեք ձեր շուրջը և մտածեք ձեր մտքում. «Աշխարհն ավելի ու ավելի ամբարիշտ է դառնում: Սատանան պետք է հաղթի պատերազմում»: Չխաբվեք: ճշմարտությունն այն է, որ մենք թվով ավելի շատ ենք, քան թշնամին: Հիշեք, Աստծո զավակների երկու երրորդն ընտրեց Հոր ծրագիրը:

Եղբայրներ և քույրեր, հավաստիացեք, որ դուք կովում եք Տիրոջ կողմից: Հավաստիացեք, որ դուք կրում եք Հոգու սուրբ:

Ես աղոթում եմ, որ դուք ձեր կյանքի վերջում կարողանաք ասել Պողոս Առաքյալի հետ. «Բարի պատերազմը պատերազմեցի, ընթացքը կատարեցի, հավատքը պահեցի» (Բ Տիմոթեոս 4.7): ■

**ՆՂՈՒՄՆԵՐ**

1. Տես Սուրբ գրությունների ուղեցույց, «Լյուցիֆեր», scriptures.lds.org:
2. Էզրա Թաֆտ Բենսոն, «Ջգուշացիի հպարտությունից», *Ensign*, May 1989, 5:
3. *Discourses of Brigham Young*, sel. John A. Widtsoe (1954), 72.
4. See Francis M. Gibbons, *Heber J. Grant: Man of Steel, Prophet of God* (1979), 35–36.
5. Տես օրինակ, Դիտեր Ֆ. Ուլդորֆ, «Դու կարևոր ես նրա համար», *Լիստնուս*, նոյ. 2011, 20, Գորդոն Բ. Հինքլի, «Ժամանակները, որում մենք ապրում ենք», *Լիստնուս*, հունվ. 2002, 86:
6. *Եկեղեցու Նախագահների ուսումնականը, Ջոզեֆ Սմիթ* (2007), 454:
7. See *Teachings: Joseph Smith*, 318.
8. Lyman E. Johnson, in Brigham Young, *Deseret News*, Aug. 15, 1877, 484.
9. Դիտեր Ֆ. Ուլդորֆ, «Եկեք, միացեք մեզ», *Լիստնուս*, նոյեմբեր 2013, 23:
10. Ezra Taft Benson, “Do Not Despair,” *Ensign*, Nov. 1974, 65.
11. See Ezra Taft Benson, “Do Not Despair,” 65–67.
12. William Cowper, in Robert Andrews, comp., *The Concise Columbia Dictionary of Quotations* (1987), 78.

Սկադրիթը ամենատրախ մարդկանցից մեկն է, ում ես երբևէ հանդիպել եմ: Թվում է, թե նա սպրեյ է անհոգ կյանք: Մակայն մանկությունը նա անցկացրել է արկոհողիկ մոր հետ, ով ի վիճակի չէր հոգ տանելու նրա և նրա քրոջ մասին: Սկադրիթը բռնել էր քրոջ ձեռքը, երբ նա մեռնում էր սովից: 8 տարեկան հասակից Սկադրիթը սպրեյ է մի շարք մանկատներում: Նրան բազմիցս ծեծի են ենթարկել ու արգելել աղթել: Նրան վերաբերվել են սորոսիկի նման: Տարիներ շարունակ նա մտածել է ինքնասպանության մասին:

Տարիներ անց, հույս չինտրելով, Սկադրիթը մտավ ՎՊՍ ժողովատուն: ԼԵՍԼԻ ՆԻՆՍՈՆ, ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ

## Սկադրիթ Բոկումա

Լիեպայա, Լատվիա

«Մի քույր միսիոներ ողջունեց ինձ և ժպտաց: Ինձ թվաց՝ նա հրեշտակ էր: Այդ օրվանից իմ կյանքը փոխվեց: Ահա արդեն անցել է 17 տարի, և իմ կյանքին վերջ տալու բոլոր մտքերը հեռացել են: Այսօր ես լավատես եմ: Իմ բեռը ես տալիս եմ Աստծուն: Ես սովորել եմ ապավինել Նրան բոլոր բաներում: Կյանքն ինձ համար գեղեցիկ է»:

Ինչպես ճանաչել և օգնել նրանց, ովքեր ինքնասպանության են պատրաստվում՝ [ids.org/go/41739](https://ids.org/go/41739):







# ԽՆԴՐՈՒՄ ԵՄ, ՄԻ ՀՆՁԵՑՐԵՔ ԱՅԴ ԵՐԳԸ ԵԹԵՐՈՒՄ

Որոշ ժամանակ առաջ ես և իմ ընտանիքն ապրում էինք Վերակրուզում (Մեքսիկա), որտեղ իմ երեխաները հաճախում էին տարրական դպրոց: Ամեն առավոտ, մինչ ես օգնում էի իմ երեք երեխաներին պատրաստվել դպրոց գնալու, մենք լսում էինք ռադիո, քաղաքի ամենահայտնի ալիքը, որը վարում էր մի շատ հաճելի երիտասարդ հաղորդավար:

Մենք սկսեցինք լսել մի շատ գրավիչ երգ: Երբ ես սկսեցի ավելի ուշադիր լսել բառերը, հասկացա, որ թեև գռեհիկ խոսքեր չէին ասվում, բայց անպարկեշտ մտքեր էին ակնարկում:

Ես վճռականորեն ասացի իմ երեխաներին. «Մենք չենք կարող լսել այսպիսի խոսքեր»: Հավանաբար նրանք նույնիսկ ուշադրություն չէին դարձրել երգի բառերին, սակայն բավական ուշադրություն էին դարձրել երաժշտությանը, քանի որ երգում էին այն:

Նրանք տեսան, թե ես ինչպես անջատեցի ձայնարկիչը և հարցրին, թե ինչ եմ անում: «Ես պատրաստվում եմ ասել ռադիոյի հաղորդավարին, որ այդ երգը հանի ծրագրից»: Նրանց զարմանքը քաջալերեց ինձ հետագա քայլեր կատարել:

Նրանք չէին կարողանում հավատալ իրենց տեսածին, և ես նույնպես դժվարանում էի դրան հավատալ, բայց ես վերցրի հեռախոսը և զանգահարեցի ռադիոկայան: Ես չէի ակնկալում, որ ինձ կպատասխանեն, սակայն, ի զարմանս ինձ, ռադիոյի նույն հաղորդավարը, որին մենք քիչ առաջ լսում էինք եթերում, գրեթե անմիջապես պատասխանեց իմ զանգին:

Ես ասացի նրան, որ իմ կարծիքով ճիշտ չէր հնչեցնել այդ երգը եթերում, քանի որ առավոտյան այդ


Երբ մենք ռադիոյով լսեցինք մի շատ գրավիչ երգ, ես սկսեցի ավելի ուշադիր լսել բառերը:

ժամին շատ ընտանիքներ ռադիո են միացնում: Նա հարցրեց ինձ, թե ինչ երգով խորհուրդ կտար փոխարինել այն, սակայն նա այնքան բարեկիրթ պահեց իրեն, որ ես խնդրեցի միայնջմիացնել երգն այն ժամերին, երբ երեխաները տանն են լինում:

Ինձ չհաջողվեց պարզել, թե արդյոք իմ զանգը հնչեց եթերում, սակայն ես պարզապես երախտապարտ էի, որ ռադիոյի հաղորդավարը լսեց ինձ: Եվ հաջորդ մի քանի օրերի ընթացքում ես համոզվեցի, որ իմ առաջարկն ընդունվել էր:

Այդ փորձառությունն ապացույց էր ինձ համար, որ մենք պետք է արիություն ցուցաբերենք, երբ մեր ձեռքերում է որոշումներ կայացնելու և անհրաժեշտ քայլեր կատարելու հնարավորությունը, որպեսզի պաշտպանենք մեր երեխաներին բացասական ազդեցություններից: Երբ մենք անենք դա, Սուրբ Հոգին կարող է շարունակել լինել մեր մշտական ուղեկիցը: ■

Մարիա Չերնանդեզ, Տեխաս, ԱՄՆ



# ԿՈՐԱԾ ԴՐԱՄԱՊԱՆԱԿԸ

Վերջերս ես տեղափոխվեցի նոր տուն և խնդրեցի Եկեղեցու մի քանի անդամների օգնել ինձ տանն իրականացվող նախագծի հետ կապված աշխատանքներում: Նախագծի ընթացքում ես զգացի, որ պիտի մի քանի նյութեր գնեի, որոնք անհրաժեշտ էին գործն ավարտին հասցնելու համար: Երբ մենք ավարտեցինք նախագիծը, ես նկատեցի, որ դրամապանակս չկար: Ես խուճապի մատնվեցի, քանի որ դրամապանակիս մեջ էին գտնվում իմ բոլոր անձնական փաստաթղթերը և գումարը, որն առավոտյան էի ստացել մի պատվիրատուից: Ես ետ վերադարձա այնտեղ, որտեղ գնումներ էի կատարել, սակայն ինձ չհաջողվեց գտնել այն: Ես տուն գնացի և շարունակեցի փնտրել, մտածելով, որ գուցե ինչ-որ տեղ զգած լինեի այն: Ես սկսեցի խորհել բոլոր փաստաթղթերի նոր պատճենները ձեռք բերելու հնարավորության մասին: Սպա, իմ տանից հեռանալուց առաջ ընկերներիցս մեկը հարցրեց. «Իսկ դուք աղոթե՞լ եք»: Ես անմիջապես մտածեցի՝ «Իհարկե, ես արդեն աղոթել եմ»: Սակայն իրականում ես չէի աղոթել անկեղծ միտումով: Այլ ես ցանկացել էի պարտադրել իմ կամքը Երկնային Հորը և ինչ-որ կերպ դարձնել դա Նրա պարտականությունը, որ օգնեի ինձ գտնել իմ դրամապանակը: Սակայն այնուհետև ես հիշեցի Եսայիա 55.8-ում գտնվող հատվածը. «Որովհետև իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, և ձեր ճանապարհները իմ ճանապարհները չեն, ասում է Տերը»:



Իմ անձնական աղոթքում ես խնդրեցի Երկնային Հորը պատասխանել մեր աղոթքին, որպեսզի ամրանար իմ կնոջ և երեխաների հավատը:

Կիրակի օրը ես գնացի եկեղեցի, և անդամներից մեկը, ով ինձ հետ էր նախորդ օրը, ասաց ինձ, որ ջերմեռանդորեն աղոթել էր Երկնային Հորը, որ ես գտնեի իմ դրամապանակը: Նա ասաց, որ զգացել էր, որ ես կգտնեմ այն: Ավելի ուշ, երբ նստեցի կատարելու իմ անձնական ուսումնասիրությունը, ես սկսեցի կարդալ *Ստանալմեր աղոթքների պատասխանները* ելույթը, որի հեղինակն է Յոթնասուունի Քվորումի հիշարժան անդամ Երեց Ջեն Ռ. Քուքը: Առաջին էջում կար մի պատմություն, որում առկա խնդիրը նման էր իմ խնդրին. Երեց Քուքի որդին կորցրել էր իր դրամապանակը, ուստի ընտանիքը հավաքվեց և աղոթեց Տիրոջը, որ նրանք գտնեին այն:

Այդ փորձառության մասին կարդալուց հետո ես կիրառեցի այն և կանչեցի իմ կնոջն ու երեխաներին:

Մենք շրջան կազմեցինք և մեզանից յուրաքանչյուրն աղոթեց, խնդրելով Տիրոջը, որ օգնի մեզ գտնել դրամապանակը, եթե դա է Նրա կամքը:

Ես նախկինում զգացել էի աղոթքի գործությունը, սակայն հետո իմ անձնական աղոթքում ես խնդրեցի Երկնային Հորը պատասխանել մեր աղոթքին, որպեսզի ամրանար իմ կնոջ և երեխաների հավատը:

Հաջորդ օրը մի մարդ զանգեց ինձ: Նա ասաց, որ գտել էր իմ դրամապանակը, որում գումար կար: Ես երեխայի պես լաց եղա, քանի որ ստացա իմ աղոթքի պատասխանը, և իմ ընտանիքի հավատը ամրացավ:

Ես գիտեմ, որ Երկնային Հայրը պատասխանում է Իր բոլոր զավակների աղոթքներին՝ Իր ժամանակին և Իր ձևով: ■

Լուիզ Մարսելիս, Գոյաս (Բրազիլիա)

ՆԱՐԵՍԱՐԴՈՒՄԸՔ ԿՐԻՍՏՆ. 8. 01.98

# ՆԱԽԱՍՐԱՀՈՒՄ ՓՐԿՎԱԾԸ

Ամուսինս հաճախ ստիպված էր լինում աշխատել կիրակի օրերին, և մեր չորս տղաներին եկեղեցի տանելու պարտականությունն ամբողջությամբ ընկնում էր ինձ վրա: Մի կիրակի օր հաղորդության ժողովի ժամանակ իմ երկու փոքրիկ տղաները վիճում էին իրար հետ: Երբ ես փորձում էի տղաներից մեկի ուշադրությունը գրավել գրքի վրա, նրա եղբայրն ուզում էր այն: Ես դիմեցի նախուտեստների, խաղալիքների և մատիտների օգնությանը, սակայն ոչինչ չէր օգնում: Իմ տղաներն ինձ ուժասպառ էին արել, քանի որ չէին կարողանում լուռ նստել մի ժամ:


Ես պայուսակիցս հանեցի մի փոքրիկ խաղալիք և տվեցի այն իմ մեկ տարեկան տղային: Նույն վայրկյանին լսվեց իմ երեք տարեկան տղայի՝ Թայտնի աղաղակը, մինչ նա հարվածեց իր փոքր եղբորը՝ փորձելով խելի խաղալիքը: Ամոթը խեղդում էր ինձ, մինչ ես երկու աղաղակող, կմվող փոքրիկ տղաներիս հանեցի նախասրահ:

Տաք արցունքներն անմիջապես թրջեցին իմ դեմքը: Ինչո՞ւ էր ամեն բան այդքան բարդ: Ես անում էի այն, ինչ Երկնային Հայրն էր ուզում, որ անեի, ընտանիքիս եկեղեցի բերելով, այնպես չէ՞: Բայց ես այլևս չէի կարող դա անել: Ես ուժասպառ էի եղել և ամաչում էի, որ պիտի ամեն շաբաթ մենակ կռիվ տայի իմ տղաների հետ հաղորդության ժողովի ողջ ընթացքում: Ես չէի ցանկանում երբևէ վերադառնալ այնտեղ:

Ընդամենը 15 վայրկյան այս մտքերով նստելուց հետո նախասրահ դուրս եկավ մի քույր, ում ես գրեթե չէի ճանաչում: Նրա անունը Քույր Բյուս էր: Նա սովորաբար

Իմ տղաներն ինձ ուժասպառ էին արել, քանի որ չէին կարողանում լուռ նստել մի ժամ:





## ԿԱՏԱՐՎԱԾ Է:

մենակ էր նստում, քանի որ ամուսինը ծառայում էր եպիսկոպոսությունում, իսկ երեխաները մեծացել էին: Նա ասաց. «Դու միշտ մենակ ես այստեղ: Ես տեսնում եմ, որ դու ջանասիրաբար փորձում ես: Կարո՞ղ է Թայսոնը նստել ինձ հետ: Ես ի վիճակի չեի նույնիսկ պատասխանելու նրան: Ես պարզապես զլխով արեցի, երբ նա բռնեց նրա ձեռքն ու առաջնորդեց ետ դեպի հաղորդության սենյակ:

Ես մաքրեցի արցունքներս, գրկեցի փոքրիկիս և խոնարհաբար վերադարձա դահլիճ՝ խաղաղությամբ վայելելու ժողովի մնացած մասը:

Հաջորդ կիրակի, երբ մենք եկանք հաղորդության ժողովին, Թայսոնը փնտրում էր իր նոր ընկերոջը: Երեկոյան նա աղոթում էր. «Երկնային Հայր, շնորհակալություն Քույր Բյուսի համար: Ես նրան շատ եմ սիրում»:

Անցել է ավելի քան երեք տարի, իսկ Թայսոնը շարունակում է դահլիճում փնտրել Քույր Բյուսին: Անցած տարի նա կանչվեց որպես Թայսոնի Երեխաների Խմբի ուսուցիչ: Նա աշխարհի ամենաերջանիկ փոքրիկ տղան էր:

Ես անչափ երախտապարտ եմ Քույր Բյուսի համար և ուրիշներին սիրելու ու ծառայելու նրա հոժարակամության համար: Ես գիտեմ, որ մենք կարող ենք օրհնել ուրիշներին կյանքը, երբ ծառայում ենք Փրկիչի նման: ■

Քրիսթի Լյուիս, Յուտա (ՄՄՆ)

Մի կիրակի իմ հարցազրույցներից մեկի ընթացքում, որպես եպիսկոպոս, ես պատիվ ունեցա նստել իմ լավ ընկերներից մեկի հետ, խոսելով որոշ դժվարությունների մասին, որոնց նա բախվում էր: Մի քանի բույսեր նրա մտահոգությունները լսելուց հետո, ես զգացի, որ նա կարիք ուներ կանոնավոր կարդալ սուրբ գրությունները: Ես հիշեցի նաև, որ որպես նրա եպիսկոպոս, ես նույնպես պետք է ավելի հետևողական լինեմ սուրբ գրություններն ուսումնասիրելիս, ինչի հետ կապված ես դժվարություններ ունեի: Ուստի, ես առաջարկեցի, որ մենք դառնայինք «պարտականությունների զուգընկերներ»՝ ձգտելով ուսումնասիրել ավելի հետևողականորեն:


Ամեն օր, երբ մենք ավարտում էինք սուրբ գրությունների ընթերցումը, հաղորդագրություն էինք ուղարկում միմյանց՝ *Կատարված է:* Մեզանից յուրաքանչյուրի համար մեծ խթան էր հանդիսանում այն, որ գիտեինք, որ մեկը սպասում էր, թե մյուսն արդյոք ավարտել է տվյալ օրվա ընթերցանությունը: Եթե մեզանից մեկը մոռանում էր, հաղորդագրությունը հուշում էր դառնում: Եթե մյուսը հաղորդագրություն չէր ուղարկում, նրան մեղադրելու փորձ անգամ չէր արվում: Մենք միմյանց թույլ էինք տալիս հաղթահարել այս դժվարությունը՝ չստիպելով մյուսին

մեղավոր զգալ:

Մենք սկսել ենք այս գործընթացը վեց ամիս առաջ, և ես չեմ հիշում մի օր, որ մոռանայինք կարդալ սուրբ գրությունները: Մի քանի ամիս առաջ այս եղբայրը ծովի և վկայության ժողովին կիսվեց իր վկայությամբ այն դրական ազդեցության մասին, որ սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրությունն ունենում էր իր և իր ընտանիքի վրա:

Ես երախտապարտ եմ այս եղբոր և նրա ընկերակցության համար, ինչպես նաև նրա ամենօրյա հաղորդագրությունների համար: Ես տեսել եմ, թե ինչպես է տեխնոլոգիաների ճիշտ կիրառությունը բարելավում մեր կյանքը: Ես նաև շնորհակալ եմ սուրբ գրությունների և Քրիստոսի մասին դրանց վկայության համար: Ես գիտեմ, որ Փրկիչի քավիչ գոհաբերությունը հնարավոր է դարձնում, որ մեզանից յուրաքանչյուրը մի օր վերադառնա, ու ապրի Նրա հետ: ■

Ալեքս Վայբլի, Բրիտանական Կոլումբիա, Կանադա



Մենք դարձանք «պարտականությունների զուգընկերներ»՝ ձգտելով ուսումնասիրել սուրբ գրություններն ավելի հետևողականորեն:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐ




**ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԼԻԱՀՈՒՆԱՆ**

«Ձեր օրհնությունը չպիտի կոկիկ ծավլի և պահվի: Այն չպիտի շրջանակվի կամ հրապարակվի: Այլ այն պետք է կարդալ: Այն պետք է սիրել: Դրան պիտի հենունել: Ձեր հայրապետական օրհնությունը կառաջնորդի ձեզ մութ գիշերով: Այն կուղեկցի ձեզ կյանքի դժվարությունների ժամանակ: . . . Ձեր հայրապետական օրհնությունը ձեր անձնական Լիահունան է, որը կգծի ձեր ուղին և կլինի ձեր ուղեկիցը»:

**Նախագահ Թոմաս Ս. Մոնտոն, «Ձեր հայրապետական օրհնությունը. լույսի լիահունան», Ensign, նոյ. 1986, 66:**

# Հասկանալ հայրապետական օրհնությունը



## Ալի Արնեյ և Մարգարետ Վիլդեն

Կյանքը լի է բազում հարցերով. *Որտե՞ղ շարունակեմ ուսումս: Ի՞նչ մասնագիտություն ընտրեմ: Պե՞տք է արդյոք ծառայել միախաչում: Ո՞ւր եմ ես պիտի ամուսնանամ:* Եթե ձեզ տրվեր անձնական քարտեզ, որը կառաջնորդեր ձեզ կյանքի որոշումներում, արդյո՞ք կհետևեիք դրան:

Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը տվել են մեզ նման քարտեզ՝ հայրապետական օրհնություն, որպեսզի առաջնորդություն տան մեզ մեր կյանքում: Չնայած մեզ ազատ լինելու պարզ է տրված որոշումներ կայացնելու մեր իսկ ազատ կամքով, հայրապետական օրհնությունը կարող է լույս սփռել այն արահետների վրա, որոնք մեզ ամենամեծ երջանկությունը կբերեն:

Բայց պարզապես քարտեզ ունենալը բավական չէ: Մենք պետք է ուսումնասիրենք, հասկանանք և կիրառենք քարտեզում տրվածը: Դեռ ավելին, երբ դուք սկսեք հասկանալ հայրապետական օրհնության՝ կյանքում ձեր անձնական ուղեցույցի լեզուն, դուք կկարողանաք նկատել, թե ով եք դուք Աստծո աչքում և ինչ կարող եք դառնալ:

## Բացահայտեք ձեր տոհմագիծը

Նախ և առաջ ձեր հայրապետական օրհնության մեջ

հայտարարվում է ձեր տոհմը կամ Հակոբի (ով հետագայում կոչվեց Իսրայել) տասներկու ցեղերից հատկապես այն ցեղը, որին դուք պատկանում եք: Չնայած բոլորս չէ, որ բառիս բուն իմաստով հանդիսանում ենք Հակոբի սերունդը, սուրբ գրությունները սովորեցնում են մեզ, որ Եկեղեցու անդամները որդեգրվում են Իսրայելի տանը. «Քանի որ բոլոր նրանք, ովքեր կրնդունեն այս Ավետարանը, կկոչվեն քո անունով, և կհամարվեն քո սերունդը, և վեր կկենան ու կօրհնեն քեզ, որպես իրենց հայր» (Մբրահամ 2.10):

Շեխա Շրոփփելը Յուտայից (ՄՄՆ) ասում է. «Իմանալով, որ ես Հակոբի տնից եմ, ես հասկանում եմ իմ նպատակն այս կյանքում, և թե ինչու եմ Եկեղեցում ես կանչվում որոշակի կոչումներում ծառայելու»:

Ձեր հայրապետական օրհնությունը նաև կարող է նկարագրել օրհնություններ, որոնք կապված են հենց ձեր ցեղի հետ: Օրինակ, Եկեղեցու շատ անդամներ պատկանում են Եփրեմի ցեղին, ցեղ, որն ունի եզակի պարտավորություն՝ տարածելու վերականգնված ավետարանի ուղերձը ողջ աշխարհում (տես Երկրորդ Օրինաց 33.13-17, Վևու 133.26-34):


## Գտեք անձնական խորհուրդ

Ճիշտ օգտագործվելու դեպքում քարտեզն օգնում է ճամփորդին, որ

**Աստիճանաբար հասկանալով ձեր օրհնությունը, կարող եք առաջնորդություն գտնել ձեր կյանքում:**

ճանապարհին չմոլորվի: Նմանապես, այս կյանքում ճամփորդելիս ձեր հայրապետական օրհնությունը կարող է խորհուրդ և առաջնորդություն առաջարկել ձեր կյանքի համար: Ձեր հայրապետական օրհնությունը ուղղակի ձևով ձեզ չի ասում՝ ինչ անել, սակայն այն կարող է առաջարկել անհատականացված գաղափարներ այն մասին, թե որ ուղիները կօգնեն ձեր կյանքը համապատասխանեցնել Երկնային Հոր կամքին: Եթե դուք ուսումնասիրեք ձեր հայրապետական օրհնությունը և ձգտեք այնպես ապրել, որ հրավիրեք Տիրոջ Հոգին, դուք կարող եք գտնել ապահովություն,

## ԽՈՐՀՈՒՐՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒ- ԹՅԱՆ ՀԱՄԱՐ



- Գտեք խորհուրդ, նախազգուշացում, տաղանդներ և խոստումներ ձեր հայրապետական օրհնության մեջ: Աղոթեք այն մասին, թե ինչպես կարող են դրանք կիրառվել ձեր կյանքի ընթացիկ փուլում:
- Ձեր ողջ կյանքում մանրակրկիտ և հաճախ ուսումնասիրեք ձեր օրհնությունը: Նույն նախադասությունը կարող է տարբեր ժամանակներում տարբեր իմաստներ ունենալ ձեզ համար:
- Հիշեք, որ հայրապետական օրհնության մեջ չեն նշվում ձեր կյանքի բոլոր իրադարձությունները: Եթե նույնիսկ որևէ կարևոր նպատակ նշված չէ ձեր օրհնության մեջ, դա կարող է այնուամենայնիվ լինել կարևոր բան, որին պետք է ձգտել:
- Եղեք հնազանդ ավետարանին: Ձեր հայրապետական օրհնության մեջ խոստացված օրհնությունները կախված են ձեր արդարակեցությունից:
- Նպատակ դրեք փնտրելու պարզակները և զարգացնելու տաղանդները, որոնք նշված են ձեր օրհնության մեջ:
- Մտածեք, թե կյանքի ինչ ուղի եք ընտրել և որտեղ եք ուզում ի վերջո հասնել: Ինչպե՞ս են ձեր նպատակները համապատասխանում ձեր հայրապետական օրհնությանը:
- Պատճենահանեք ձեր հայրապետական օրհնության մի օրինակ՝ ուսումնասիրության նպատակով օգտագործելու համար: Դուք կարող եք գրել մտքեր, ընդգծել բառեր, որոնք գրավում են ձեր ուշադրությունը և նշել սուրբ գրություններ, որոնք կապված են ձեր օրհնության հետ:

ուրախություն և առաջնորդություն:

Գաբրիել Պարեդեար Լիմայից (Պերու) ասում է. «Որոշ խորհուրդներ, որոնք ինձ տրված էին իմ օրհնության մեջ, ես կարողացա ամբողջությամբ կիրառել իմ ընտանիքում միայն իմ կնոջ հետ կնքվելուց հետո:

Վերջերս մենք խորհում էին այն մասին, թե ինչ կարող ենք անել, որ ամրացնենք ու շենացնենք մեր նոր ընտանիքը: Մեր հարցն իր պատասխանը գտավ իմ հայրապետական օրհնության միջոցով: Այնտեղ ինձ խորհուրդ է տրվում իմ ընտանիքի համար առաջնահերթություն դարձնել հարգանքը, հանդուրժողականությունը և սերը, քանի որ սրանք Հիսուս Քրիստոսի ավետարանի կարևոր հիմնաքարերն են հանդիսանում:

Երբ մենք կենտրոնացանք սրա վրա, ես և կինս կարողացանք հաղթահարել խնդիրները: Մենք դեռևս մեր ընտանիքում երբեմն ունենում ենք խնդիրներ, սակայն մենք երջանիկ ենք: Ես զգացի, որ Տերը հիշեցնում էր ինձ, թե ես ինչպես կարող էի ունենալ այն ընտանիքը, որը Նա խոստացել էր ինձ: Ես գիտեմ, որ Տերը խոսում է հայրապետական օրհնությունների միջոցով և խորհուրդը, որ տրված է այնտեղ, պետք է օգտագործվի մեր կյանքում»:

### Ականջ դրեք խրատներին

Քարտեզում չեն նշվում ճանապարհին հանդիպող բոլոր վտանգները, սակայն, բարեբախտաբար, հայրապետական օրհնությունները հաճախ պարունակում են նախազգուշացումներ, որոնք մեզ պաշտպանում են ճանապարհին: Այս խրատներից մի քանիսը օգնում են մեզ պաշտպանվել սատանայի ազդեցությունից, մյուսներն էլ կարող են լուսավորել մեր միտքը, թե ինչպես կարող ենք հաղթահարել մեր մեջ բնական մարդուն:

Քեյթլին Քարրը Յուտայից նշել է, որ իր հայրապետական օրհնության

որոշ հորդորներ սկզբում պարզ չէին հասկացվում, սակայն շարունակելով ուսումնասիրել իր օրհնությունը, նա նոր հուշումներ ստացավ դրանց վերաբերյալ:

«Երբ ես ստացա իմ հայրապետական օրհնությունը, ինձ նախազգուշացվեց մարդկանց մասին, ովքեր կփորձեն հեռացնել ինձ ճշմարտությունից գրավիչ գրույցներով: Դրա մասին ես շատ չէի մտածում. ես խորապես հավատում էի ինձ ուսուցանված վարդապետություններին:

Այնուամենայնիվ, հաջորդ տարի ես լսեցի այնպիսի զաղափարներ և փիլիսոփայություններ, որոնք կարծես հիմնված էին արդարության և սիրո վրա, սակայն դա այդպես չէր: Թվում էր, թե այդ ուղերձները գալիս էին ամեն կողմից՝ լրատվամիջոցներից, դպրոցից, նույնիսկ մտերիմ ընկերներից: Չնայած ես գիտեի, որ այդ փիլիսոփայությունները հակասում էին Աստծո ծրագրին, ես հանկարծ հասկացա, որ ուզում էի աջակցել այս նոր աշխարհիկ զաղափարներին և Եկեղեցուն միաժամանակ: Ես շուտով գիտակցեցի, որ «ոչ ով չէ կարող երկու տերերի ծառայել» (Մատթեոս 6.24), և ես չափի ապավինեի մարդկային իմաստությանը: Երկնային Հայրը լուծում տվեց իմ կասկածներին սուրբ գրությունների միջոցով և խաղաղություն բերեց իմ մտքին ու սրտին: Արդյունքում իմ վկայությունն ամրացավ, և ես ավելի հաստատակամորեն եմ պաշտպանում այն, ինչը գիտեմ, որ ճիշտ է»:

### Զարգացրեք պարզակները և տաղանդները

Ձեր հայրապետական օրհնության մեջ կարող են նշվել նաև հոգևոր պարզակներ և տաղանդներ, որոնք Տերը տվել է ձեզ Իր թագավորությունը կառուցելու համար: Եթե ձեր օրհնությունը նշում է տաղանդ, որը ձեզ ծանոթ չէ, պատճառը



կարող է լինել այն, որ դուք դեռևս հնարավորություն չեք ունեցել բացահայտելու կամ զարգացնելու այդ տաղանդը: Տիրոջ օգնությամբ և ջանասիրաբար փնտրելով, դուք կարող եք զարգացնել այդ և ուրիշ շատ տաղանդներ:

Ձարգացնելով ձեր տաղանդները, կգտնեք այն առանձնահատուկ բաները, որոնք դուք կարող եք ներդնել Տիրոջ աշխատանքում: Ջոաննա Բլաքվելը Կալիֆորնիայից (ԱՄՆ) խորհում է իր օրհնության մեջ նշված պարզևների և տաղանդների մասին, երբ համեմատում է իրեն ուրիշների հետ. «Իմ հայրապետական օրհնության բառերն ինձ հիշեցնում են, որ ես օրհնված եմ տաղանդներով, որոնք անձամբ ինձ պետք են փորձությունները հաղթահարելու և մասնակցելու Տիրոջ աշխատանքն արագացնելու գործին:

Իմ օրհնության մեջ խոսվում է սիրելու, ներելու և իմ շրջապատի մարդկանց հետ շփվելու համարձակություն ունենալու ունակության մասին: Երբ ես գործի դրեցի այդ տաղանդները, Տերն օրհնեց ինձ

ավելի մեծ ցանկությամբ՝ ծանոթանալու և շփվելու նոր մարդկանց և մշակութայինների հետ: Արդյունքում իմ վկայությունն ավելի մեծացավ այն մասին, որ մենք բոլորս սիրող Երկնային Հոր զավակներն ենք, և ես հնարավորություն ունեցա ծառայել ուրիշներին, որն օգնում է մեզանից յուրաքանչյուրին ավելի նմանվել Քրիստոսին»:

**Փնտրել խոստացված օրհնությունները**

Մեր հայրապետական օրհնությունների վերջում տրվում են Երկնային Հոր խոստացված օրհնությունները, եթե մենք հավատարիմ մնանք Նրան: Մակայն երաշխիք չի տրվում, թե երբ կիրականանան այդ խոստումները, սակայն մենք կարող ենք իմանալ, որ քանի դեռ մենք հավատարմորեն ապրում ենք ավետարանով, դրանք կիրականան՝ լինի դա այս, թե հաջորդ կյանքում:

Մերջիտ Գուտիերեզը Նեվադայից (ԱՄՆ) հույսը դնում է իր հայրապետական օրհնության մի խոստման վրա, երբ անհանգստանում է իր

կարիերայի հետագա ծրագրերի համար. «Երբեմն ինձ մտահոգում է իմ անորոշ ապագան, սակայն իմ հայրապետական օրհնության մեջ տրված է խոստում, որը միշտ խաղաղեցնում է իմ միտքը: Այս խոստումն օգնում է ինձ իմանալ, որ քանի դեռ ես ջանասիրաբար աշխատում եմ և հավատարիմ եմ մնում, ես կունենամ անհրաժեշտ միջոցներ՝ իմ ընտանիքի մասին հոգ տանելու և Եկեղեցին կառուցելու համար: Ես դեռ հաստատ չգիտեմ, թե կարիերայի որ ճյուղը կընտրեմ ապագայում, սակայն ունենալով այս խոստումը, ես հավատ ու վստահություն եմ զգում»:

Եթե դուք երբևէ խորհեք, թե որն է Երկնային Հոր կամքը ձեզ համար, դուք մենակ չեք լինի: Տերը հասկանում է, որ ձեր առջև կբացվեն զանազան ճանապարհներ, որոնցով դուք կարող եք շարունակել ձեր կյանքը, ուստի Նա տալիս է ձեզ անձնական քարտեզ, որը կօգնի համաձայնեցնել ձեր կյանքը Նրա ավետարանի հետ: Հայրապետական օրհնությունները չեն կարող մեր փոխարեն որոշումներ կայացնել, սակայն դրանք կարող են առաջնորդել մեզ դեպի մեր իսկ անձնական հայտնությունը: Մեր հայրապետական օրհնությունների միջոցով մեզ ցույց է տրվում, թե մենք ինչ տեղ ենք զբաղեցնում Իսրայելը հավաքելու Տիրոջ ծրագրում, երբ իմանում ենք մեր ցեղը. մեզ տրվում են անձնական խորհուրդներ, խրատներ և խոստումներ, և մենք սովորում ենք եզակի պարզևների և տաղանդների մասին, որոնք Երկնային Հայրը տվել է մեզ՝ Իրեն ծառայելու համար: Քանի դեռ դուք կփորձեք ապրել համաձայն ձեր հայրապետական օրհնության այդ բոլոր տարրերի, դուք կարող եք իմանալ, որ ձեր որոշումները համահունչ են ձեր կյանքի վերաբերյալ Տիրոջ կամքին: ■

*Ճեդիսակներն ապրում են Իլինոյսում (ԱՄՆ) և Նյու Յորքում (ԱՄՆ):*



**Տերը տալիս է ձեզ անձնական քարտեզ, որը կօգնի համաձայնեցնել ձեր կյանքը Նրա ավետարանի հետ:**

# Նախապատրաստվելով նոր ճամփորդության

## Կարինա Մարտինա Պերերա Քորրեա դե Լիմա

Իմ ամուսնությունից և տաճարային կնքումից մի քանի շաբաթ առաջ ես սկսեցի մի փոքր անհանգստանալ այն ամենի համար, ինչ ես պետք է անեի, նախքան իմ նոր ընտանիքի ստեղծումը: Չնայած այդ պահի ողջ ուրախությանը, ես լարված էի մեր նոր առօրյա գործերի, մեր ֆինանսների կարգավորման, մեր տան իրերի պահեստավորման և որպես տանտիրակի՝ իմ բոլոր նոր պարտականությունների համար: Ես ուզում է համոզված լինել, որ մենք սկսում էինք մեր ամուսնությունը ճիշտ ձևով՝ տեղ հասկացնելով մեր գործերում կարևոր բաներին, ինչպես օրինակ՝ պահել պատվիրանները և որպես ամուսիններ միասին ժամանակ անցկացնել, չնայած մեր զբաղված կյանքին:

Մինչ կմտտենար հարսանիքի օրը, ինձ զարմացրին մի շաբթ մղձավանջային երազները, որոնցում առկա էին ամեն տեսակի դժվարություններ, որոնք կարող էին ազդել ընտանիքի վրա: Քանի

որ ես մեծացել եմ սիրառատ, բայց բազմաչարչար ընտանիքում, ուր վախենում էին ուժեղ վիճաբանություններից և կոտրված սրտերից, վատ երազներն ավելի շատ էին ազդում ինձ վրա, քան պիտի ազդեին: Ուստի մի գիշեր, մի քանի այդպիսի մղձավանջներից հետո, ես արթնացա քրտինքի մեջ և որոշեցի հետևել Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահության Երկրորդ Խորհրդական Քույր Նիլ Ֆ. Մարիոթի խորհրդին, որը նա տվել էր իր «Ենթարկենք մեր սրտերը Աստծուն» ելույթում (*Հիստորիա*, նոյ. 2015, 30–32): Ես փակեցի աչքերս և աղոթեցի. «Միրելի Երկնային Հայր, ի՞նչ կարող եմ անել, որպեսզի իմ ընտանիքը հեռու պահեմ այս վատ բաներից»:

Պատասխանը տրվեց ինձ այնպես արագ և կտրուկ, կարծես ինչ-որ մեկը դուռ էր բացել զլխումս և դրել այդ միտքն այնտեղ: Հանդարտ, ցածր ձայնը հուշեց ինձ. «Ուղղակի արա այն, ինչ դու պետք է անես: Հավատարիմ եղիր յուրաքանչյուր քայլում»: Հոգին շնջաց ինչ-որ առանձնահատուկ խորհուրդ,

**Նեփիի նման,  
նավարկելով դեպի  
անհայտը, ես կարիք  
ունեի հավատք  
գործադրել առ  
Տերը՝ ընտանիք  
ստեղծելու համար:**

և ես զգացի, որ եթե ես անեի դրանք, ամեն ինչ լավ կլիներ»:

Ես ժպտացի և զգացի, ինչպես կրծքավանդակս լցվեց ջերմությամբ: Բոլոր տազնապները հանկարծ մոռացվեցին, որովհետև ես գիտեի, որ դա ճշմարիտ էր: Ես զգացել էի Սուրբ Հոգին նախկինում, բայց ոչ այդքան ուժեղ, ինչպես այդ գիշեր: Ես զգացի, թե ինչպես մեր Երկնային Հոր և մեր Փրկիչի սերը պարուրեցին ինձ, և ես իմացա, որ

իմ ընտանիքի հարմարավետությունը և փրկությունը նույնքան կարևոր էր Նրանց համար, որքան ինձ համար:

Որպես մի լրացուցիչ հավատալիացում, ես մտաբերեցի մի պատմություն սուրբ գրություններից, երբ Տերը հրամայեց Նեփիին նավ կառուցել. «Եվ եղավ այնպես, որ Տերը խոսեց ինձ հետ՝ ասելով. Դու պետք է մի նավ կառուցես՝ *այն ձևով, որ ես ցույց կտամ քեզ*, որ ես կարողանամ տանել քո ժողովրդին այս ջրերի մյուս կողմը» (1 Նեփի 17.8, շեշտադրումն ավելացված է):

Նեփին և Նրա ընտանիքը եղել էին անապատում տարիներ շարունակ, դիմանալով ամեն տեսակի նեղությունների: Նա կարող էր վախենալ սկսել ճամփորդությունը ծովի վրայով և թույլ տար, որ իր երկյուղներն ավելի ուժեղ դառնային, քան նրա հավատքը: Բայց նա չարեց այդ: Նա ընդունեց և հնազանդվեց Աստծո հրահանգներին: Նա ուներ հավատ, որ Իր խոստումները կկատարվեն: Տերը երբևէ Նեփիին չասաց, որ փոթորիկներ չէին լինելու կամ որ ալիքները չէին հարվածելու նավին: Բայց նա ասաց Նեփիին, որ եթե նա հետևեր իր ուղղորդմանը, կկարողանար իր ընտանիքին ապահով առաջնորդել օվկիանոսի վրայով դեպի խոստացված երկիր:

Ես հասկացա, որ ես նույնպես ճանապարհորդել էի անապատով

տարիներ շարունակ, բայց այժմ ես ծովի մոտ էի, պատրաստվելով նոր ճամփորդության՝ ամուսնության: Ես, և իմ կարծիքով բոլոր Վերջին Օրերի Սրբերի ընտանիքները կանչվել են կառուցել մի նավ՝ հետևելով Աստծո հրահանգներին:

Երբ մենք ամուսնացանք, սկսվեցին դժվարությունները: Ես հիվանդացա, և մենք պայքարում էինք մեր ֆինանսական գործերը հավասարակշռված պահել և գործի դնել բոլոր լավ սովորությունները, որոնց մենք որոշել էինք հետևել:


Բայց խորհուրդը, որը ես ստացել էի այդ գիշեր, մնաց իմ սրտում: Մենք փորձում էինք ամեն օր սովորել և արժեվորել Աստծո խոսքը մեր սրտերում, հետևելով մեր սիրելի առաջնորդների լավ օրինակներին, ներառյալ Քրիստոսին, և բարելավել մեր սեփական վարքը: Ես ձեռք բերեցի ավելի ուժեղ վկայություն աղոթքի վերաբերյալ և իսկապես ճաշակեցի Հոր սերը մեր հանդեպ: Ես սկսեցի ավելի շատ վստահել և ավելի քիչ վախենալ: Ես հասկացա, որ դժվարությունները, որոնց մենք դիմակայեցինք, դարձան քայլեր դեպի կատարելագործում: Այսօր մեր տունը թվում է երկնքի մի փոքրիկ կտոր:

Մենք դեռ մեր ճամփորդության սկզբում ենք, բայց ամուսնանալը և ընտանիք ստեղծելը լավագույն

ընտրությունն էր, որ ես երբևէ կատարել էի: Միբոց լի է ուրախությամբ, երբ ես մտածում եմ տաճարային արարողության մասին, որը մենք ստացանք և զիտեմ, որ այն կնքվեց Աստծո իշխանությամբ: Որքան ավելի շատ եմ հասկանում ընտանիքի կարևորությունը Երկնային Հոր ծրագրում և ուխտի սրբազանության մասին, որ մենք կապեցինք, ավելի շատ եմ ցանկանում օգնել ուրիշ ընտանիքների ստանալ նույն արարողությունը:

Ես սովորեցի, որ մենք չպիտի տագնապենք այն բանի համար, թե ինչ է պատահելու, որովհետև «Աստուած չտուավ մեզ երկչոտության հոգի, այլ զորության և սերի և զգաստության» (Բ Տիմոթեոս 1.7): Մենք պարզապես պետք է հնազանդ լինենք, հետևենք հրահանգներին, որոնք տրված են սուրբ գրությունների միջոցով և արդի օրերի մարգարեների խոսքերում ու աղոթքով խնդրենք ավելի շատ անձնական հրահանգներ: Եթե մենք անենք այս ամենը, մենք կարող ենք անցնել այս վերջին օրերի օվկիանոսը, վստահ լինելով, որ անկախ նրանից, թե ինչպիսի դժվարություններ են հարվածում մեզ, մեր սիրելիներն ապահով կլինեն: ■

*Հեղինակն ապրում է Փարանաքում (Բրազիլիա):*



ՆՈՒՍՏՈՒՄԸ © GETTY IMAGES

# Ինչպե՞ս կարող եմ սովորել **ԻՄ ՄՏՔՈՒՄ** և

Պարզեք, թե դուք ինչ կարող եք անել, երբ հարցեր ունենաք:

**Ի**՞նչ պետք է անեք, եթե հարց ունենաք վարդապետականի, պատմականի կամ անձնականի մասին: Ինչպե՞ս եք պատասխան գտնում: Տերը խոստանում է. «Ես կասեմ քեզ քո մտքում և քո սրտում, Սուրբ Հոգով» (Վևու 8.2): Ինչպե՞ս եք դուք օգտագործում ձեր միտքը և սիրտը ոգեշնչումը ճանաչելու համար: Ահա մի քանի գաղափարներ:

## ՄԻՏՔ

### **Ուսումնասիրեք, աղոթեք, լսեք**

Երեց Ռոբերտ Դ. Չելլըր Տասներկու Առաքյալների Քվորումից, ասել է, որ երբ մենք կայացում ենք «կյանքի համար գլխավոր որոշումներ...», Երկնային Հայրն ակնկալում է, որ մենք օգտագործենք մեր ազատ կամքը, մեր մտքում քննենք իրավիճակը ըստ ավետարանի սկզբունքների և աղոթքով Նրա առաջ բերենք մեր որոշումը» («Սուրբ Հոգին», *Լիսինգ*, մայիս 2016, 105):

Սա նույնն է ցանկացած հարցի վերաբերյալ: Երբ ուսումնասիրում եք, անկեղծորեն աղոթում պատասխանների համար, դուք այդ ընթացքում գտնում եք: Սուրբ Հոգին ձեզ հուշումներ կտա գաղափարների, մտքում պահված խոսքերի կամ այլ անձնական հիշեցումների միջոցով, որպեսզի առաջնորդի ձեզ դեպի հետագա պատասխանները, որոնց կարիքը դուք ունեք:

### **Օգտագործեք միջոցները**

Հետազոտեք սուրբ գրությունները, ներառյալ Սուրբ Գրքերի Ուղեցույցը և այլ ուսումնական ձեռնարկներ: Դուք կարող եք հետազոտել նաև այլ ՎՕՍ միջոցները, ինչպես օրինակ՝ գերագույն համաժողովի ելույթներ, ավետարանական թեմաներ՝ Gospel Topics on LDS.org-ում, Եկեղեցու ամսագրեր, Ջոզեֆ Սմիթի Թղթերը նախագիծը և այլն: (Տես Էջ 54. Եկեղեցու օգտակար միջոցների ցանկը:)

### **Խոսեք այդ մասին**

Մի վախեցեք օգնություն խնդրել: Երեց Ռոնալդ Ա. Ռագբառը Տասներկու Առաքյալների Քվորումից քաջալերել է. «Ես պատրաստվում եմ ձեզ մի մարտահրավեր նետել: ... Դուք պետք է մտածեք ինչ-որ մեկի մասին [ով կարող է օգնել ձեզ պատասխաններ գտնել]՝ վստահելի ընկեր, ծնող կամ ծնողներ, պապիկ տատիկներ, ուսուցիչ, եպիսկոպոսություն, [կամ] խորհրդատու ... և դուք պետք է այդ հարցերին պատասխաններ գտնեք» (Face to Face broadcast, Jan. 20, 2016): Փորձեք: Զրուցեք որևէ մեկի հետ ձեր հարցերի մասին, ում դուք վստահում եք և միասին գտեք պատասխանները:



Կարևոր: Գրեք ձեր հարցերը

# ԻՄ ՄՐՏՈՎ:



## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԱՍՏՈՒՑ

«Անկեղծ հարցեր ուղղելը հավատի կառուցման կարևոր մասն է, և մենք օգտագործում ենք թե մեր խելքը, թե մեր զգացմունքները: Փրկիչն ասել է. «Ես կասեմ քեզ քո մտքում և քո սրտում» [ՎևՈւ 8.2]: Ոչ բոլոր պատասխանները կզան անմիջապես, բայց հարցերի մեծ մասը կարող են լուծվել անկեղծ ուսումնասիրության և Աստծուց պատասխաններ որոնելու միջոցով»:

Երեց Նիլ Լ. Անդերսոն՝ Տասներկու Առաքյալների Քվիրումից, «Հավատքը պատահականության արդյունք չէ, այլ՝ ընտրության», *Լիահոնա*, նոյ. 2015, 66:

Ուսումնասիրելը

Ուսումնասիրելը

Աղոթելը

Լսելը

Համբերություն

## ՄԻՐՏ

### Ուսումնասիրելը, աղոթելը, լսելը

Սրանք կարևոր քայլեր են՝ ինչպես ձեր մտքում, այնպես էլ ձեր սրտում խորհրդածելու համար: Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական Նախագահ Դիտեր Ֆ. Ուիտորֆն ասել է. «Եթե դուք ցանկանում եք հասկանալ հոգևոր ճշմարտությունը, դուք պետք է օգտագործեք ճիշտ միջոցներ: Դուք չեք կարող հասկացողություն ձեռք բերել հոգևոր ճշմարտության մասին այնպիսի միջոցներով, որոնք անկարող են բացահայտել այն» («Ստանալ վկայություն լույսի և ճշմարտության մասին», *Լիահոնա*, նոյ. 2014, 22): Սուրբ Հոգին այն միջոցն է, որի օգնությամբ մենք սովորում ենք հոգևոր բաներ: Այսպիսով, երբ դուք աղոթում եք և լսում Հոգուն, ժամանակի ընթացքում դուք կկարողանաք պատասխաններ գտնել:

### Եղևք համբերատար

Նախագահ Ուիտորֆը բացատրել է նաև. «Որքան շատ ենք մենք մեր սրտերն ու մտքերը դեպի Աստված դարձնում, այնքան ավելի շատ երկնային լույս է իջնում մեր հոգիների վրա: ... Աստիճանաբար, այն բաները, որոնք նախկինում աղոտ, խավար և հեռավոր էին թվում, դառնում են պարզ, լուսավոր և ծանոթ մեզ համար» («Ստանալ վկայություն լույսի և ճշմարտության մասին», *Ensign* կամ *Լիահոնա*, նոյ. 2014, 22): Պատասխաններ որոնելը կարող է լինել երկար գործընթաց: Բայց, եթե դուք կամենում եք լսել պատասխանները, նույնիսկ, եթե դա ժամանակ է պահանջում, դուք կգտնեք դրանք:

### Կիրառելը հուշումները ճանաչելու միջոցը

Որքան ավելի լավ ճանաչեք հուշումները և պատրաստակամորեն գործեք, երբ Հոգին շնչա ձեր սրտին, ավելի հեշտ է դառնում ճանաչել հետագա հուշումները: Դուք գուցե «զգաք, որ դա ճիշտ է» կամ կզգաք «մտքի ընդարմացում», եթե դա ճիշտ չէ (տես ՎևՈւ 9.8-9): Դուք հավանաբար կզգաք նաև թեթև հիշեցում, խաղաղության զգացում կամ մեկ այլ զգացում, որը հատուկ է ձեզ: Տերը գիտի ձեզ, և Նա գիտի, թե դուք ինչպես կհասկանաք Հոգուն: Նա ձեզ սիրով առաջնորդություն կտա, որը հատուկ ձեզ համար է: Այսպիսով, շարունակեք լսել և շարունակեք կիրառել: ■

# ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՐԵՔ Ավետարանի ՁԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

*Օգտագործեք այս խորհուրդները ավետարանն ուսումնասիրելու և ձեր հոգևոր հարցերին պատասխաններ գտնելու համար:*

## **Բեթանի Բարթոլոմյու**

Եկեղեցու ամսագրեր

**Ի**նչպես եք դուք ուսումնասիրություն կատարում, երբ որևէ հոգևոր հարցի պատասխաններ եք որոնում կամ նույնիսկ, ուղղակի փորձում եք ավելի լավ հասկանալ սուրբ գրությունները: Նկատի ունեմ անհատապես ձեզ: Յուրաքանչյուրն ունի ուսումնական տարբեր սովորություններ սովորելու համար, բայց երբեմն մենք մոռանում ենք, որ կարող ենք անհատականացնել ավետարանի մեր ուսումնասիրությունը ևս: Հաջորդ անգամ, երբ դուք հոգևոր կամ վարդապետական հարց ունենաք, փորձեք այս խորհուրդներից մի քանիսը՝ պարզելու, թե որը կարող է լավագույնս ծառայել ձեզ:





## 1. ՄՏԵՂԾԵՔ

Կազմեք ցուցակ, աղյուսակ կամ քարտեզ: (Օրինակը տեսեք ստորև):

Ստեղծեք հետազոտական կայք: Գրի առեք խոսքեր և գաղափարներ, իսկ հետո միացրեք դրանք գծերով և շրջանակներով, ցույց տալով, թե ինչպես են դրանք կապված միմյանց հետ:

### ԿԱԶՄԵՑ ՑՈՒՑԱԿ, ԱՐՅՈՒՍԱԿ ԿԱՄ ԶԱՐԿԵԶ

Երբեմն օգտակար է տեսողական ձևով կազմակերպել ձեր մտքերը ավետարանի ուսումնասիրության ընթացքում, դրանք դնելով ցուցակում, աղյուսակում կամ որևէ տեսակի քարտեզում: Ահա մի օրինակ այնպիսի աղյուսակի, որը կարելի է ստեղծել, երբ ուսումնասիրում եք Պողոսի թղթերը Նոր Կտակարանում: Դուք կարող եք ստեղծել ձեր սեփական ցուցակը, աղյուսակը կամ քարտեզը՝ օգտագործելով այնպիսի ձևաչափ, որն ամենաշատը կօգնի ձեզ: Եղեք ստեղծագործ Գտեք հետաքրքիր եղանակներ ձեր ավետարանի ուսումնասիրությունը կազմակերպելու համար:

ՊՈՂՈՍԻ ԹՂԹԵՐԸ			
ԹՈՒՂԹ	ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ՇԵ՛Տ	ԳՐԵԼ ՈՐԵՎԷ ՏԵՂԻ՝Ց...	ԹՂԹԻ ՇԻՄՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ
Օրինակ՝ Ա Տիմոթեոս	Նշված չէ	Լադովիկէ (տես հղումը Ա Տիմոթեոս 6-ի վերջում)	Ճշմարիտ վարդապետություն, Փրկիչը, աղոթք հավատք և գթություն, առաջնորդ լինելու հատկանիշներ, ուրացություն, հոգ տանել աղքատներին հոգ, մնալ հավատարիմ, խուսափել աշխարհիկ հարստություններից

## 2. ԳՐԵՔ

Ուսումնական օրագրում արձանագրեք մտքերը և տպավորությունները, որոնք դուք ստանում եք սուրբ գրությունների ուսումնասիրության ընթացքում և հաճախակի վերանայեք այդ մտքերը:

Գրի առեք ձեր մտքերն ու տպավորությունները ձեր աղոթքներից հետո, եթե նույնիսկ տպավորություններն ուղղակիորեն կապված չեն այն թեմայի հետ, որը դուք ուսումնասիրում եք: Տեսեք, թե ինչ է Հոգին ուսուցանում ձեզ ժամանակի ընթացքում:

Գրի առեք ձեր հարցերը տեսրոում, ձեր հեռախոսի վրա, կամ ձեր մահճակալին կից նոթատետրում, որոնք կհիշեցնեն և կօգնեն ձեզ շարունակել մտածել այն ամենի մասին, որոնք դուք սովորում եք ամեն օր:



### 4. ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆ

Հետազոտեք օժանդակ նյութերը սուրբ գրություններում և առցանց (տես ՎՕՍ օգտակար աղբյուրների ցուցակը ստորև):

LDS.org-ում որոնեք տեսահոլովակներ և երգեր այն թեմայի վերաբերյալ, որը դուք ուսումնասիրում եք:

Համատեքստի ուսումնասիրություն Հետազոտեք թեմային կամ սուրբ գրության հատվածներին առնչվող պատմությունը կամ գլուխները, որոնք դուք ուսումնասիրում եք:



#### LDS.ORG-ՈՒՄ

- Սուրբ գրություններ (scriptures.lds.org)
- Գերագույն համաժողով (conference.lds.org)
- Ավետարանական թեմաներ (topics.lds.org)
- Ամսագրեր (iahona.lds.org)
- Եկեղեցու պատմություն (history.lds.org)
- Օժանդակ նյութեր (scriptures.lds.org)
- Դասեր և ուսուցողական ռեսուրսներ (lds.org/go/41754a)
- ՎՕՍ լրատվության գրադարան (lds.org/media-library)
- Օգնություն մարտահրավերների դեպքում (lds.org/go/41754b)

#### ԹՈՂ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐՆ ՕԳՆԵՆ ԶԵՉ

Սուրբ գրություններում և առցանց կան բազմաթիվ մատչելի աղբյուրներ, որոնք կօգնեն ձեզ, երբ ուսումնասիրեք կարևոր թեմաներ: Ահա որոշ աղբյուրների մի ցուցակ, որոնք մատչելի են ձեզ. որտեղ գտնել դրանք՝



#### ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

- Սուրբ գրքերի ուղեցույց
- Աստվածաշնչի ժամանակագրությունը (Հին և Նոր Կտակարանների իրադարձությունները դրեք ժամանակագրական կարգով մոտավոր տարեթվերով)
- Ավետարանների ներդաշնակությունը (Փրկիչի մասին Մատթեոսի, Մարկոսի, Դուկասի և Հովհաննեսի պատմությունները՝ խմբավորված իրադարձություններով, վայրերով և մոտավոր տարեթվերով)
- Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը
- Զարտեզներ և լուսանկարներ
- Հապավումների ուղեցույց



#### ԱՅՆ ԱՌՑԱՆՑ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Ընտանեկան պատմություն (familysearch.org)
- Մորմոնական ալիք (mormonchannel.org)
- Գերագույն համաժողովում մեջբերվող սուրբ գրությունների հատվածներ (scriptures.byu.edu)
- Մորմոնական լրատվական բաժին (mormonnewsroom.org)
- Միսիոներական աշխատանք և ավետարանի ուսուցում (mormon.org)
- Ջոզեֆ Սմիթի թղթերի նախագիծը (josephsmithpapers.org)

### 3. ԼՍԵՔ ԵՎ ՔՆՆԱՐԿԵՔ

Խոսեք ծնողի կամ վստահելի ղեկավարի հետ: Միասին մշակեք այն: Դա գուցե ժամանակ պահանջի, բայց դուք երկուսով էլ կաճեք այդ ընթացքում:

Ուսուցանեք մեկ ուրիշին: Հերթով կիսվեք նրանով, ինչը դուք *խոսկապես* գիտեք: Քննարկեք այն, ինչ սովորել եք միմյանցից:

Բարձրաձայն լսեք սուրբ գրության հատվածներ կամ այլ ՎՕՍ պատմություններ և աղբյուրներ:



## 5. ԿԱՏԱՐԵՔ

Բեմադրեք պատմություններ սուրբ գրություններից կամ այլ աղբյուրներից: Եթե ձեզ դնեք այդ մարդու փոխարեն, ինչպես դա կօգնի ձեզ ավելի լավ հասկանալ այն, ինչ ուսումնասիրում եք: Նմանատիպ իրավիճակներն ինչպե՞ս կդիտվեին ձեր կյանքում:

Կազմեք սուրբ գրությունների մի շղթա, որը կապում է այն պատասխանները, որոնք գտնում եք սուրբ գրություններում: (Օրինակը տեսեք ստորև:)

### ԿԱԶՄԵՔ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍՈՒՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐԹԱ

Երբեմն օգտակար է նշել սուրբ գրությունների մի քանի հատվածներ, որոնք վերաբերում են նույն թեմային: Ստուգեք Սուրբ Գրքերի Ուղեցույցը սուրբ գրությունների այն հատվածների համար, որոնք կապված են ձեր կողմից ուսումնասիրվող թեմայի հետ: Այնուհետև օգտագործեք ծանոթությունները և ենթատեքստը, սուրբ գրությունների հետ կապելով ավելի շատ տեղեկություններ այդ նույն թեմայի վերաբերյալ: Նախորդ սուրբ գրության հատվածի լուսանցքում գրեք սուրբ գրության այն հատվածը, որը շղթայում գալիս է հաջորդը և այդպես շարունակ: Դուք կարող եք նաև որոնել որոշակի թեմայով համաժողովների ելույթները՝ ձեր հետազոտությանն օգնելու համար: Հույսի թեմայի վերաբերյալ սուրբ գրությունների ուսումնասիրության շղթան հանդիսանում է օրինակներից մեկը:

### ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍՈՒՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐԹԱ

Սուրբ գրություններ հույսի վերաբերյալ.

Սկիզբ. Մորոնի 7.40
Փ
Եթեր 12.4
Փ
Մորոնի 7.3
Փ
Վարդապետություն և Ուխտեր 138.14
Փ
Մորոնի 7.41
Փ
<b>Վերջը.</b> Ավա 46.39 (Գրեք Մորոնի 7.40 այս սուրբ գրության լուսանցքի մուտ:)

Խոսվում է հույսի մասին.

- Եպիսկոպոս Դին Մ.Ղեյվիս, «Երկրպագության օրհնությունները», հոկ. 2016 գերագույն համաժողով:
- Երեց Փոլ Վ. Ջոնսոն, «Եվ չի լինի այլևս մահ», ապր. 2016 գերագույն համաժողով:
- Նախագահ Դիտեր Ֆ. Ուխտեր, Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական, «Նա կրնի ձեզ Իր ուսերին և տուն կտանի», Լիսիոնա, ապր. 2016, գերագույն համաժողով:
- Երեց Լ. Ուիթնի Զլեյթոն, «Ընտրեք հավատալ», ապր. 2015 գերագույն համաժողով:
- Նախագահ Բոյդ Զ. Փաքեր (1924-2015), «Մեր հույսի պատճառը» հոկ. 2014 գերագույն համաժողով:
- Նախագահ Հենրի Բ. Այրինգ «Հույսի անգին ժառանգությունը», ապր. 2014 գերագույն համաժողով: ■





**Երեց  
Զվենթին Լ. Զուրբ**  
Տասներկու  
Առաքյալների  
Զվորումից

# ԻՆՉՊԵՍ ԳՏՆԵԼ ԻՍԿԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

**Բ**արի մարդկանց երկնային ձգտումն ամենուրեք եղել է և միշտ էլ կլինի հասուն աշխարհի խաղաղության: Մենք երբեք չպիտի հրաժարվենք այս նպատակին հասնելու ձգտումից: Բայց, Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը (1838–1918) ուսուցանել է. «Խաղաղության և սիրո ոգին երբեք չի գա աշխարհ . . . մինչև մարդկությունը չընդունի Աստծո ճշմարտությունը և Աստծո ուղերձը . . . , և չճանաչի Նրա զորությունն ու իշխանությունը, որն աստվածային է»:

Մենք իսկապես հույս ունենք և ջերմեռանդ աղոթում ենք համաշխարհային խաղաղության համար, բայց անձնավորությունների և ընտանիքների շնորհիվ է, որ մենք հասնում ենք այն խաղաղությանը, որը խոստացված **պարզևս է արդարակնցության**: Այդ խաղաղությունը Փրկիչի ամառելիության և քավիչ զոհաբերության պարզևս է:

Խաղաղությունը ուղղակի ապահովության կամ պատերազմի, բռնության, կոնֆլիկտի և հակառակության բացակայությունը չէ: Խաղաղությունը գալիս է **այն գիտելիքից, որ Փրկիչը գիտի՝ ով ենք մենք և գիտի, որ մենք հավատք ունենք Իր հանդեպ, սիրում ենք Իրեն և պահում ենք Նրա պատվիրանները**, նույնիսկ և հատկապես, կյանքի կործանարար

փորձությունների և ողբերգությունների մեջ (տես Վևու 121.7–8):

«Որտե՞ղ հանգիստ գտնեմ Երբ բոլոր այլ միջոցները դադարում են ինձ ամոքել»: (Որտե՞ղ հանգիստ գտնեմ»: *Հիմներ*, հմր 129): **Պատասխանն է՝ Փրկիչը**, Նա է խաղաղության աղբյուրը և հեղինակը: Նա է «Խաղաղության Իշխանը» (Եսայիա 9.6):

**Խոնարհեցնելով ինքներս մեզ Աստծո առջև, միշտ աղոթելով, ապաշխարելով մեղքերը, մտնելով մկրտության ջրերը կտորված սրտով և ապաշխարող հոգով, և դառնալով Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտներ՝ արդարակնցության բացարձակ օրինակներ են, որոնք պարզևստրվում են մնայուն խաղաղությամբ:**

Եկեղեցին ապաստան է, որտեղ Քրիստոսի հետևորդները ձեռք են բերում խաղաղություն: Աշխարհում որոշ երիտասարդներ ասում են, որ իրենք հոգևոր են, բայց ոչ կրոնասեր: Հոգևոր զգալը ամառին լավ քայլն է: Սակայն Եկեղեցում է, որ մենք **ընկերանում ենք, ուսուցանվում և սնուցվում Աստծո բարի խոսքով**: Ամենակարևորը, Եկեղեցում քահանայության իշխանության միջոցով են կատարվում սուրբ արարողություններ և ուխտեր, որոնք կապում են ընտանիքները միասին և մեզանից յուրաքանչյուրին արժանի դարձնում



վերադառնալ Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի մոտ՝ սելեստիալ արքայություն: Այդ արարողությունները խաղաղություն են բերում, քանի որ դրանք ուխտեր են Տիրոջ հետ:

Տաճարներն այն վայրերն են, որտեղ տեղի են ունենում այս սրբազան արարողություններից շատերը, նրանք նաև խաղաղ ապաստան են աշխարհից: Նրանք, ովքեր **այցելում են տաճարի** տարածքները կամ մասնակցում տաճարների բաց դռներին, նույնպես, զգում են այս խաղաղությունը:

*Փրկիչն է իսկական խաղաղության աղբյուրը*: Կյանքի փորձություններով հանդերձ՝ Փրկիչի Քավության և Նրա ողորմածության շնորհիվ, արդար ապրելակերպը կպարզևստրվի անձնական խաղաղությամբ (տես Հովհաննես 14.26–27, 16.33): ■

2013թ. ապրիլի գերագույն համաժողովի կոչությից:

# Մոռացված գրքեր, հիշվող վկայություններ

Բոլորի աչքերն ուղղված էին ինձ վրա: Կարո՞ղ էի արդյոք պաշտպանել Եկեղեցին միայն իմ պարզ վկայությամբ:

## Աբիգեյլ Ֆերրեր

Մի տարի ես նպատակ էի դրել բարելավել իմ հոգևոր գիտելիքը: Ես ուր էլ գնայի, նույնիսկ դպրոցում ինձ հետ տանում էի Եկեղեցու գրքեր, գրքույկներ, ձեռնարկներ և սուրբ գրություններ, քանի որ ծարավ էի Աստծո խոսքին: Բայց իմ ջանքերը դանդաղեցին, երբ ես զբաղվեցի կայանալիք վիկտորինային պատրաստվելով:

Մի օր մեր ուսուցիչը մի քննարկում էր վարում, որի ժամանակ նա խնդրեց դասասանյակում գտնվող բոլոր ոչ կաթոլիկ ուսանողներին կանգնել: Դասարանում ես միակ Վերջին Օրերի Մուրբն էի: Մյուս վեց ուսանողները ևս կանգնեցին:

Այնուհետև, մեզ տրվեցին հարցեր. «Ո՞ր Եկեղեցուն ես դու պատկանում: Ո՞վ էր հիմնադիրը: Ինչպե՞ս է եկեղեցին հիմնադրվել?»:

Ես վերջինն էի պատասխանում: Ես անհանգստացա, երբ հասկացա, որ իմ Եկեղեցու գրքերը չէի բերել, բայց փորձեցի հիշել այն բաները, որոնք սովորել էի: Աստվածաշնչյան մի հատված եկավ միտքս.

«Տիրոջն ապավինիր քո բոլոր սրտովը, և քո հասկացողությանը մի վստահիր»:

Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նրան, և նա կուղղել քո ճանապարհները» (Մոսկաց 3.5–6):

Ես համարձակ կանգնեցի դասարանի դիմաց և մոռացա իմ երկյուղների մասին: Ես ասացի, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի

Եկեղեցու անդամ եմ: Ես կիսվեցի մի փոքր տղայի պատմությամբ, որի անունը Ջոզեֆ Սմիթ էր, ով տեսավ Աստծուն: Ես կրծքավանդակումս այրոց զգացի և արցունքներ հոսեցին աչքերիցս: Ես կիսվեցի նրանով, որ Եկեղեցին կազմավորվել էր 1830 թվականի ապրիլի 6-ին և վկայեցի, որ Աստծո մի մարգարե էր կանչվել և քահանայությունը վերականգնվել էր: Ես վկայեցի, որ գիտեի, որ այդ բոլորը ճշմարիտ էր:

Ավետարանը սովորելու բազում ժամերը իզուր չէին անցել: Այն օգնեց ինձ պաշտպանել հավատքս և կիսվել ավետարանով: Ես հպարտ էի, երբ մի քանի շաբաթ անց, իմ դասընկերներից չորսը միացան ինձ եկեղեցու:

Այդ փորձառությունն ուսուցանեց ինձ վկայության կարևորությունը: Սկզբում ես զարմացա, թե ինչու Տերը չէր հուշել ինձ այդ օրը բերել գրքերս: Դրանք ինձ կօգնեին գերազանց պատասխանել հարցերին, որոնք տրվեցին: Բայց հետո ես հասկացա, որ մենք չպիտի անգիր սովորենք ամեն ինչ Եկեղեցու մասին կամ հիմնվենք մեջբերումների վրա, մենք պետք է ուսումնասիրենք, ապրենք և կիսվենք ավետարանով, հիմնվելով Մուրբ Հոգու վրա: Գուցե գրքերս ինձ հետ չէին, բայց ես ունեի իմ վկայությունը: ■

*Հեղինակն ապրում է Կազպսկում (Ֆիլիպպիներ):*



ՆԱՄՆԵՐԸ: ԲՈՒՌԵՆ ԱՄՈՒՅՆ

# ՆՐԱՆՔ ՏԵՍԱՆ ՆՐԱՆ

Այս անձինք իսկապես տեսան  
հարություն առած Փրկիչին, բայց դուք  
նույնպես կարող եք լինել Քրիստոսի  
վկան ձեր ուրույն ձևով:

**Չ**եր կարծիքով, ի՞նչ զգացողություններ կունենաք, եթե տեսնեք հարություն առած Փրկիչին: Հիսուսի ժամանակաշրջանի շատ մարդիկ ստիպված չէին պատկերացնել դա, նրանք ականատես եղան դրան: Սուրբ գրությունները պատմում են առնվազն տասը գրառված դեպքեր Նոր Կտակարանում և մի քանի քանիսն էլ Մորմոնի Գրքում, երբ հարություն առած Տերը հայտնվել է մարդկանց: Այդ անձինք ականատես են եղել պատմության ամենամեծ հրաշքներից մեկին. Հիսուս Քրիստոսը հաղթահարում է մահը և հնարավոր է դարձնում, որ մեզանից յուրաքանչյուրը կրկին ապրի: Գրեթե անհավատալի է, ճի՞շտ է:

Այսպիսով, իրականում ի՞նչ է նշանակում լինել Քրիստոսի վկան: Եկեք քննենք սուրբ գրությունների այդ իրադարձություններից մի քանիսը և մտածենք, թե մենք ինչպես կարող ենք լինել Քրիստոսի վկաները և՛ անգամ առանց Նրան ֆիզիկապես տեսնելու:

## Մարիամ Մագդաղենացի

Մարիամ Մագդաղենացին առաջին վկան էր: Խաչելությունից հետո առաջին կիրակի օրը նա եկավ գերեզմանի մոտ մի քանի այլ կանանց հետ Տիրոջ մարմինն օժելու համար: Երբ Մարիամը հայտնաբերեց դատարկ գերեզմանը, նա լաց եղավ: Մեկը դիմեց նրան թիկունքից և հարցրեց. «Կին, ինչո՞ւ ես լաց լինում»: Պատկերացրեք, թե որքան մեծ էր նրա զարմանքը, երբ նա հասկացավ, որ դա մեռելներից հարություն առած Հիսուսն էր: (Տես Հովհաննես 20.1-18:)




PENNANT © ISTOCK/GETTY IMAGES



### Երկու աշակերտները Էմմաուսի ճանապարհին

Կղեւպասը և մեկ այլ աշակերտ քայլում էին Էմմաուսի ճանապարհով, երբ Նրանց մոտեցավ մի անձանոթ: Նրանք չճանաչեցին իրենց Նոր ընկերակցին, սակայն ընթրիքի ժամանակ անձանոթը կտրեց հացը: Այդ ժամանակ Նրանց աչքերը բացվեցին և նրանք հասկացան, որ ամբողջ ճանապարհն անցել էին Փրկիչի հետ: «Զէ՞ որ մեր սրտերը բորբոքվում էին մեզանում . . .», հարցնում էին նրանք միմյանց, խորհելով այն զգացմունքների մասին, որ ունեցան, մինչ Նա իսկապես իրենց հետ էր: (Տես Ղուկաս 24.13-34:)



### Տասը առաքյալները

Երկու աշակերտները, որոնք ճամփորդել էին դեպի Էմմաուս Քրիստոսի հետ, վերադարձան Երուսաղեմ և պատմեցին տասը առաքյալներին իրենց փորձառության մասին: Մինչ նրանք խոսում էին, Փրկիչն Ինքը հայտնվեց նրանց, ասելով. «Տեսե՛ք իմ ձեռքերը եւ իմ ոտները, որ ես ինքս եմ. շօշափեցե՛ք ինձ եւ տեսե՛ք. որովհետեւ ոգին մարմին եւ ոսկերք չունի, ինչպես ինձ էք տեսնում որ ունիմ»: (Տես Ղուկաս 24.36-41, 44-49:)


«ՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Է ՄՈՒՆ», ԸՍՏ՝ ԳՐԵԳ Զ. ՕՍՏԵՆ, ԶԲԱԶՄՅԵՆ  
«ԷՄՄԱՈՒՍԻ ԸՆԿԵՐԱԿՑԻՆ», ԸՍՏ ԶՈՆ ՄԱԹԻՈՒՇԸՆԻ  
«ՏԵՍԵՔ ԻՄ ԶԵՈՒՅԵՐՆ ՈՒ ՈՏԵՐԸ», ԸՍՏ՝ ՀԱՐՈՒ ԱՆԴԵՐՈՒՄԻ

## **Թովմաս Առաքյալը**

Թովմաս Առաքյալը ներկա չէր, երբ Փրկիչն առաջին անգամ հայտնվեց մյուս Առաքյալներին, ուստի նա չհավատաց, որ Քրիստոսը հարություն էր առել։ Մի շաբաթ անց Քրիստոսը կրկին հայտնվեց Առաքյալներին։ Այս անգամ Թովմասն այնտեղ էր, և քանի որ նա տեսավ Քրիստոսին, հավատաց, որ նա հարություն էր առել։ Փրկիչը խրատեց Թովմասին այն բանի համար, որ հավատաց միայն տեսնելուց հետո. «Որովհետև տեսար ինձ՝ հաւատացիր. երանի նորանց, որ չեն տեսել եւ հաւատում են»։ (Տես Հովհաննես 20.24-29.)



Թովմասը նստելու ընդհանուր պատկեր



## **Տասնմեկ Առաքյալները Տիբերեայի ծովի մոտ**

Հարությունից քիչ ժամանակ անց մի օր Առաքյալներից մի քանիսը գնացին Տիբերեայի ծովում ձուկ բռնելու, սակայն մեծ հաջողություն չունեցան։ Հաջորդ առավոտ Փրկիչը հայտնվեց և խորհուրդ տվեց նրանց զցել ցանցը նավակի աջ կողմում։ Երբ նրանք արեցին այդ, ցանցի մեջ այնքան շատ ձուկ լցվեց, որ դժվարությամբ կարողացան ներս քաշել այն։ Ընթրելուց հետո Փրկիչն ուսուցանեց ուրիշներին ծառայելու կարևորության մասին, ասելով. «Արածեցրու իմ ոչխարները»։ Իրենց կյանքի մնացած մասն Առաքյալներն անցկացրին միայն դա անելով՝ սովորեցնելով մարդկանց Քրիստոսի մասին. որոշ դեպքերում նրանք նույնիսկ տվեցին իրենց կյանքը հանուն այդ գործի։ (Տես Հովհաննես 21.1-22.)

«ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄՈՒՆ ԺՈՒՄՆԵՐԸ ԿՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՆՈՒՄԻ ՎԵՐԱԿԱՆՑՈՒՄԸ»





«ՄԻ ՇՄԻՎԿԱՆՍՆԵՐ»

### Նեփիացիները Ամերիկա մայրցամաքներում

Խաչելության ժամանակ Ամերիկա մայրցամաքների երկրներն ավերվեցին երկրաշարժերի, հրդեհների, այլ բնական աղետների պատճառով, և երեք օր ողջ երկրին տիրեց խավարը, որը Փրկիչի մահվան նշանն էր: Ավելի ուշ Քրիստոսը իջավ երկնքից և այցելեց 2500 հոգանոց բազմությանը, որ հավաքվել էր Լիառաատ տաճարի մոտ: Նա հրավիրեց մարդկանց շոշափել Իր ավերի, ուղբերի և կողի վերքերի նշանները, քարոզեց նրանց և մեկ առ մեկ օրհնեց նեփիացիների երեխաներին: Հաջորդ օրը էլ ավելի շատ մարդիկ հավաքվեցին, և Փրկիչն այցելեց ու ուսուցանեց նրանց: Աշակերտներն, ի վերջո, կազմավորեցին Քրիստոսի Եկեղեցին, և նեփիացիները ստացան այնպիսի զորեղ վկայություն, որ նրանք և նաև լամանացիները դարձի եկան դեպի Տերը: (Տես 3 Նեփի 11-18, տես նաև 3 Նեփի 8-10, 4 Նեփի 1:)

### Վկաներն այն ժամանակ և այժմ

Քրիստոսը հայտնվեց նաև շատ ուրիշ մարդկանց ներառյալ մի քանի կանանց, ովքեր գերեզմանի մոտ էին եկել օգնելու Մարիամ Մագդաղենացուն օծել Քրիստոսի մարմինը, 500-ից ավելի տղամարդկանց մի խմբի, Հակոբոսին և Պողոսին: (Տես Մատթեոս 28.9, Գործք 9.4-19, Ա Կորնթացիս 15.6-7, տես նաև 3 Նեփի 19, 26.13:)

Մենք երևի հնարավորություն չունենանք տեսնելու Փրկիչին, ինչպես այս վկաները տեսան, սակայն դուք կարող եք այնուամենայնիվ լինել Քրիստոսի վկան: Դուք կարող եք անձամբ փնտրել Փրկիչին՝ Նրա մասին ավելին սովորելով, ինչպես Մարիամն արեց, երբ գնաց գերեզմանի մոտ: Կամ դուք կարող եք կիրառել Նրա հանդեպ ձեր ունեցած հավատը՝ պահելով պատվիրանները և հետևելով մարգարեների խորհրդին: Կամ դուք կարող եք տեսնել Փրկիչի օրհնությունները ձեր կյանքում, ինչպես արեցին Էմմաուս գնացող երկու աշակերտները: Չատիկի այս օրերին խորհեք այն մասին, թե ի՞նչ է նշանակում լինել Քրիստոսի վկա: Այդ մարդիկ բառացիորեն վկաներ էին, ովքեր իրականում տեսան հարություն առած Քրիստոսին, սակայն դա միակ ուղին չէ, որով դուք կարող եք վկայել Նրա մասին ձեր կյանքում: ■



### ՍՈՎՈՐԵՔ ՆՐԱՆԻՑ

«Երբ դուք զգում եք Սուրբ Հոգու վկայությունը [Քրիստոսի] մասին, ձեր հոգու համար հաստատված և վերահաստատված բազմաթիվ տարբեր փորձառություններում և իրադրություններում, երբ դուք ամեն օր ձգտում եք բարձր պահել Նրա օրինակի լույսը ձեր կյանքում, և երբ դուք բերում եք վկայություն ուրիշներին և օգնում նրանց սովորել ու հետևել Նրան, դուք Հիսուս Քրիստոսի վկան եք»:

Տասներկու Առաքյալների Թվորումից Երեց Դ. Թող Քրիստոֆերսոն, «Դառնալով Քրիստոսի վկա», *Լիահոնա*, մարտ 2008, 63:

# ՄԵՐ ՏԱՐԱԾՔԸ

## ԱՍՏՎԱԾ ՄԵՋ ԳՈՐԾԻՔՆԵՐ Է ՏԱԼԻՍ

**Հ**որեղբայրս արվեստագետ է: Նա պատրաստում է փոքրիկ շփայտյա նավակներ ապակյա շշերի մեջ: Դրանց պատրաստումը պահանջում է շատ ժամանակ, կենտրոնացում և ջանքեր:

Մի օր ես տեսա նրա բոլոր գործիքները և նկատեցի, թե ինչպես է դրանցից յուրաքանչյուրն օգտագործվում որոշակի դետալի կամ նավի համաձուլվածքի համար: Մինչ դիտում էի նրան աշխատելիս, ես զարմացած էի, թե ինչպես էր նա օգտագործում գործիքները այս նավերը պատրաստելու համար: Դա ինձ հիշեցրեց նավ կառուցելու Նեփիի պատմությունը (տես 1 Նեփի 17–18): Նա կառուցեց այն Տիրոջ ձևով, ոչ թե մարդուն հայտնի ձևով: Աստված տալիս է մեզ գործիքներ՝ կառուցելու մեր սեփական նավերը Իր ձևով: Սուրբ գրությունները, հավատը և Աստծո սերը գործիքներ են, որոնք ես պետք է օգտագործեմ իմ իսկ կյանքում, որպեսզի զգուշությամբ կառուցեմ իմ սեփական նավն առանց որևէ ճաքի: Ամեն օր ես սովորում եմ լինել Տիրոջ աշակերտը: ■

Մարիա Մերսեդես Գ., Մոնագաս (Վենեսուելա)



## ԶԳԱԼ ՄԻԱՅՆԱԿ

**Դ**անիայում ցուրտ գարուն էր: Ես հոր էի սկսել իմ լիաժամկետ միսիան, և իմ վկայությունը մաքառումների մեջ էր: Ես ընդամենը 19 ամսվա նորադարձ էի, և ինձ լիովին անապահով էի զգում օտար երկրում, չէի կարողանում սովորել նոր լեզուն, և ինձ մոլորված էի զգում լաբիրինթոս հիշեցնող փողոցներում: Մի ժամանակ երախտագիտությամբ լցված իմ աղոթքները շուտով դարձան սուր մեղադրանքներ. «Աստված, ինչո՞ւ ես ինձ մենակ թողել»:

Մի առավոտ ես աղոթքով դիմեցի Նրան: Մակայն իմ սրտում բարկություն ունենալով «ինչո՞ւ» հարցն ուղղելու փոխարեն ես աղերսեցի

Նրան տալ ինձ վկայություն ավետարանի ճշմարտության վերաբերյալ և ցրել իմ կասկածները:

Աղոթքից հետո ես սկսեցի թերթել իմ սուրբ գրությունները: Ես բացեցի Երկրորդ Օրինաց 31.6-ը. «Ուժովացրեք եւ քաջ եղէք, մի վախենաք եւ նորանց երեսիցը մի գարհուրիք. որովհետեւ քո Եհովայ Աստուածն ինքն է քեզ հետ գնում. նա քեզ չի թողիլ եւ քեզ չի ձգիլ»:

Իմ սիրտը լցվեց ուրախությամբ, քանի որ ես ստացա իմ աղոթքի պատասխանը. Աստված միշտ իմ կողքին է եղել: Նա պարզապես սպասում էր անկեղծ աղոթքի, այլ ոչ թե լքելու մեղադրանքների:

Աստված երբեք չի թողնի ինձ մենակ, եթե նույնիսկ ամեն բան անհույս է թվում: Եվ մենք կարող ենք զգալ Նրա լույսը աղոթքի և Նրա սուրբ գրությունների միջոցով: ■

Զլեյթոն Ի., Տեխաս (ԱՄՆ)

## ԱՅԺՄ ԶԵՐ ՇԵՐՈՒՆ Է

Լիառնան ողջունում է ավետարանով ապրելու ձեր փորձառությունները և մտքերը: Ներկայացրեք ձեր պատմությունը [liahona.lds.org](http://liahona.lds.org) կայքին կամ է-փոստով ուղարկեք [liahona@ldschurch.org](mailto:liahona@ldschurch.org): Խնդրում ենք ներառել ձեր անունը, ազգանունը, ծուխը կամ ճյուղը և ծնողի թույլտվությունը:



# ԱՌԱՋ, ՔՐԻՍՏՈՍԻ ԶԻՆՎՈՐՆԵՐ

«Տղամարդիկ և կանայք, ովքեր ցանկանում են տեղ ունենալ սելենստիալ  
արքայությունում, կհասկանան, որ պետք է պայքարեն ամեն օր»:

*(Teachings of Presidents of the Church: Brigham Young [1997], 294)*



# «Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ Աստված լսում է իմ աղոթքները»:

**Ա**ղոթքը մեծ օրհնություն է և մեզ խոստացված է, որ Երկնային Հայրը միշտ լսում է, սակայն երբեմն որոշ ժամանակ է պահանջվում Նրա պատասխանները հասկանալու համար:<sup>1</sup> Խորհեք հետևյալի շուրջ. կամ Աստված լսում է ձեզ, կամ Նա չի լսում: Եթե Նա չի լսում, ապա իհարկե, աղոթելն անիմաստ է: Բայց եթե Նա լսում է (և Նա անշուշտ լսում է), մենք պետք է հասկանանք, թե ինչպես *իսկապես* հաղորդակցվենք Նրա հետ աղոթքով, հասկանանք պատասխանները և հավատքով առաջ շարժվենք:

Եթե մեզ թվում է, թե Նա չի լսում, միգուցե մենք պետք է որոշակի անձնական զարգացում ապրենք: Դուք կարող եք ձեզ ուղղել մի քանի հարց. Արդյո՞ք ես մաքուր եմ: Արդյո՞ք ունեմ արժանի մղումներ: Արդյո՞ք ես պատրաստ եմ անել այն, ինչ Նա խնդրում է:<sup>2</sup> Եթե այս հարցերից յուրաքանչյուրն ունի դրական պատասխան, դուք կարող եք վստահ լինել, որ «Տերը՝ քո Աստվածը . . . կպատասխանի քո աղոթքներին» (ՎՆՈւ 112.10): Հիշեք, որ երբեմն պատասխանները գալիս են աննկատ կամ անսպասելի ձևով:

Եթե դուք բացասական պատասխան եք տվել այս հարցերից որևէ մեկին, երբեք շատ ուշ չէ: Ձեր կյանքում կատարեք անհրաժեշտ փոփոխություններ, որպեսզի կարողանաք ունենալ Հոգին: Հոժարակամ եղեք գործել ըստ ձեր ստացած հուշումների:

Եվ մի մոռացեք, որ ամեն ոք տարբեր ձևով է պատասխաններ ստանում: Աղոթեք, որ Սուրբ Հոգին ուսուցանի ձեզ, թե ինչպես *դուք* կարող եք հասկանալ պատասխանները: Սկզբում հեշտ չի լինի հասկանալ դրանք, սակայն դա նման է ցանկացած այլ հմտության. փորձերի շնորհիվ կատարելագործվում ենք: Ունեցեք հավատ և վստահություն, որ Երկնային Հայրը *միշտ* լսում է:

### ՀՐՈՒՆԵՐ

- 1. Տես Մատթեոս 7.7, Հակոբոս 1.5-6, Սմնա 33.4-11, Վարդապետություն և Ովստեր 8.1-2:
- 2. Տես Ռիչարդ Գ. Սքոթ, «Սովորենք հասկանալ աղոթքների պատասխանները», *Ensign*, նոյ. 1989, 32:



### Լսնք Հոգուն

Փորձեք լսել Սուրբ Հոգուն: Մարդիկ տարբեր ձևերով են լսում Սուրբ Հոգուն, ուստի, միգուցե դուք փորձում եք լսել մեղմ, հանգիստ ձայն այն դեպքում, երբ հուշումը կարող է գալ զգացողության միջոցով: Ես գիտեմ, որ Սուրբ Հոգին կասի ձեզ այն ամենը, որ դուք պետք է իմանաք. դուք պարզապես պետք է լսեք:

Էլիզ Գ., 13 տարեկան, Ալբերտա (Կանադա)

### Պատասխաններ Եկեղեցում

Մի անգամ ես մեծ կասկած ունեի մի հարցի շուրջ՝ գնալ հանդիպման ոչ անդամի հետ, թե ոչ: Մի կիրակի օր հաղորդության ժողովի ժամանակ մի քույր ելույթ ունեցավ, որը կարծես ուղղված էր անձամբ ինձ: Այդ պահին ես հավաստիացում ստացա, որ Տերը պատասխանեց իմ աղոթքին: Մինչ այդ ես շփոթված էի և չգիտեի ինչ անել, բայց հետո Սուրբ Հոգին մխիթարեց ինձ և լցրեց իմ սիրտը ուրախությամբ ու քաջությամբ: Աստված պատասխանում է մեզ զգացմունքների, մտքերի, սուրբ գրությունների և նույնիսկ եկեղեցու խոսնակների միջոցով:

Կարեն Վ., 19 տարեկան, Միսսս ժերայս (Բրազիլիա)



### Հիշե՛ք՝ ով եք դուք

Ես գիտեմ, որ Աստված լսում է մեզ, քանի որ աղոթքի արդյունքում իմ սրտում զգում եմ լաղաղություն, մխիթարություն և սեր: Ես տեսնում եմ, որ Նա օրեցօր ազատում է ինձ բազմաթիվ վտանգներից, Նա պաշտպանում է իմ ընտանիքին, և ես ինձ սիրված եմ զգում Նրա կողմից: Նախքան դպրոց գնալը ես միշտ ասում եմ Երիտասարդ Կանանց կարգախոսը.

դա օգնում է ինձ հիշել, որ ես Երկնային Հոր դուստրն եմ, ով սիրում է ինձ: *Նիկոլ Մ., 19 տարեկան, Լիմա (Պերու)*



**Երեխայի աղոթքը**  
Ես գիտեմ, որ Երկնային Հայրը լսում է իմ աղոթքները, քանի որ Երեխաների Միության «Երեխայի աղոթքը»

(*Children's Songbook*, 12) երգի բառերն ասում են. «Երկնային Հայր, Դու իրոք այդտե՞ղ ես: Եվ դու լսում և պատասխանո՞ւմ ես ամեն երեխայի աղոթքին: Ասում են՝ երկինքը հեռու է, բայց այն մտտ է թվում, երբ աղոթում եմ»: Երբ ես հիշում եմ այդ երգը, ես գիտեմ, որ Նա լսում է, քանի որ ես զգում եմ Հոգին և իմ հանդեպ Նրա անսահման սերը: Երբ ես հիշում եմ, որ Նա սիրում է ինձ, ես մխիթարություն եմ զգում և իմանում, որ Նա լսում է իմ աղոթքները:

*Էլնա Բ., 16 տարեկան, Հյուսիսային Կարոլինա (ԱՄՆ)*

### Վստահե՛ք Նրան

Երկնային Հայրը միշտ լսում է մեր աղոթքները, սակայն երբեմն թվում է, թե Նա չի պատասխանում մեր աղոթքներին, քանի որ Նա միգուցե չի պատասխանում այնպես կամ երբ մենք ենք ուզում, որ Նա պատասխանի: Մենք պետք է պատրաստակամ ենթարկենք մեր կամքը Նրա կամքին և հավատանք, որ Նա գիտի, թե որն է լավագույնը մեզ համար: Երկնային Հայրը սիրում է մեզ և միշտ կփորձի օգնել մեզ սովորել և աճել մինչ կպատասխանի մեր հարցերին:

*Մոսիա Մ., 17 տարեկան, Յուտա (ԱՄՆ)*

### Խնդրե՛ք և կատանաք

Մուրբ գրությունների միջոցով մենք ուսուցանվել ենք, որ Աստված միշտ կլսի մեր աղոթքները և կպատասխանի, եթե մենք դիմենք Նրան

հավատքով և անկեղծ միտումով: Մեր սրտերում մենք կզգանք հաստատում, որ Նա իրոք լսում է մեզ և կունենանք խաղաղության և հանգստության զգացում: Մենք կարող ենք նաև զգալ, որ ամեն բան լավ կլինի, երբ մենք հետևենք Հոր կամքին: Եթե մենք կասկածներ ունենք, թե Նա չի լսում, մենք պետք է առաջնորդություն փնտրենք սուրբ գրություններում և ապա հարցնենք, թե արդյոք մեր կարդացած բաները ճիշտ են:

*Կոնստանցա Լ., 20 տարեկան, Բիո Բիո (Չիլի)*

### Գտիր այն

Մի անգամ ես խորհում էի այն մասին, թե արդյոք Աստված լսում է իմ աղոթքները, իսկ հետո ես զգացի պատասխանն իմ սրտում: Ես աղոթքի վերաբերյալ լսեցի մեկի վկայությունը և կարողացա զգալ Մուրբ Հոգին: Իմ մյուս խորհուրդը կլինի՝ հարցնել ծնողներին, եպիսկոպոսին կամ ձեր ծխի այլ անդամների: Դուք կարող եք նաև աղոթել այս թեմայի շուրջ օգնության համար:

*Ջոշուա Մ., 13 տարեկան, Օրեգոն (ԱՄՆ)*

### Անկեղծ աղոթել

Ձեր աղոթքից հետո դուք կարող եք ուշադրություն դարձնել



### ԱՆՉՆԱՏՈՒՐ ՄԻ ԵՂԵՔ

«Եղեք հնազանդ, հիշեք այն ժամանակները, երբ դուք զգացել եք Հոգին

անցյալում և խնդրեք հավատքով: Ձեր պատասխանը կգա, և դուք կզգաք Փրկիչի սերն ու խաղաղությունը: Դա կարող է չգալ այնքան արագ կամ այն ձևով, ինչպես դուք եք կամենում, բայց պատասխանը կգա: Անձնատուր մի եղեք»:

*Յոթնասուրհից Երեց Ջեյմս Բ. Մարտինո, «Դիմեք Նրան և պատասխանները կգան», Լիսիոնա, նոյ. 2015, 59:*

զգացմունքներին և մտքերին, որոնցով լցվում է ձեր սիրտը: Դրանցից մեկը կարող է լինել ձեր հարցի պատասխանը: Երբ մենք աղոթում ենք մաքուր սրտով և անկեղծ միտումով, մեր Երկնային Հայրն արձագանքում է համաձայն այն հավատի, որը մենք ունենք Նրա հանդեպ: Նա չի պատասխանում ուղղակի մեր հետաքրքրասիրությունը բավարարելու համար:

*Ջեն-Ջյատու Ն., 16 տարեկան, Կենտրոնական Կասայ (Կուբայի Դեմոկրատական Հանրապետություն)*

## ՀԱՋՈՐԴ ՀԱՐՑԸ

«Ինչպե՞ս ես կարող եմ խնդրել ընկերներիս չարությամբ կամ անպատշաճ ձևով չխոսել ուրիշների մասին»:

Ձեր պատասխանը և, ցանկության դեպքում, բարձրորակ լուսանկարը ներկայացրեք մինչև 2017 թվականի մայիսի 15ը [Iiahona.lds.org](http://Iiahona.lds.org) կայքին (սեղմեք «Ներկայացնել հոդված») կամ ուղարկեք է-փոստով [Iiahona@ldschurch.org](mailto:Iiahona@ldschurch.org):

Խնդրում ենք ներառել հետևյալ տվյալները՝ (1) անունը, ազգանունը, (2) ծննդյան թիվը, (3) ծովալճ կամ ճյուղը, (4) ցիցը կամ շրջանը, (5) ձեր գրավոր թույլտվությունը, և եթե դուք 18 տարեկանից ցածր եք, ձեր ծնողի գրավոր թույլտվությունը (է-փոստն ընդունելի է) ձեր պատասխանը և լուսանկարը տպագրելու համար:

Պատասխանները կարող են խմբագրվել ծավալի ու պարզության համար:

# Անդրեյը և վատ բառը

Ջուլիա Ա. Դոնալդսոն

Հիմնված է իրական պատմության վրա

«Կոորդնեմ ապաշխարեյ, ավելի լավը լինեյ, աղոթեյ» (Children's Songbook, 98):

«Դու կարծում ես, որ բոլորից լավն ես, Բքանի որ չես հայհոյում», - ասաց Նիկոլայը դասամիջոցին:

«Դա ճիշտ չէ», - ասաց Անդրեյը:

«Ապա ինչո՞ւ մի հայհոյական խոսք չես ասում:

Միայն մեկը: Դա քեզ չի սպանի:

Բոլորն էլ հայհոյում են»:

Անդրեյը թոթվեց ուսերը: «Ես պարզապես չեմ ուզում»:

Անդրեյը գիտեր, որ հայհոյելը վատ բան է և հեռացնում է Սուրբ Հոգին: Անդրեյն ուզում էր, որ Սուրբ Հոգին լիներ իր հետ: Ուստի նա չհայհոյեց:

Անդրեյը նոր աշակերտ էր վեցերորդ դասարանում, և առայժմ Նիկոլայը միակն էր, ով ցանկանում էր լինել նրա ընկերը:

Մական Նիկոլայն անընդհատ նրա հետ խոսում էր հայհոյելու մասին:

Եվ օրեցօր Անդրեյը ավելի ու ավելի էր հոգնում ոչ ասելուց: Բացի այդ, Անդրեյը վախենում էր, որ Նիկոլայն այլևս ընկերություն

չէր անի իր հետ, և նա մենակ կմնար:

«Ասա միայն մեկ հայհոյանք», -

ասաց Նիկոլայը դասերից հետո:

«Դրանից հետո ես քեզ հանգիստ կթողնեմ»:

Ի վերջո, Անդրեյն այնքան հոգնեց այդ ամենից, որ ընդամենը մի հայհոյանք ասաց, հայհոյանք, որն *աղոթան էլ* վատ բառերից չէր կազմված:

Նիկոլայը

գլխով արեց: «Լավ, այժմ դու մեզանից մեկն ես»:

Դրանից հետո Նիկոլայի մյուս ընկերները նույնպես խոսեցին Անդրեյի հետ: Կեսօրին նրանք միասին նախաճաշեցին, իսկ դասամիջոցին նրա հետ ֆուտբոլ խաղացին:

Մական Նիկոլայի ընկերների խմբում լինելը նման էր տորոն ավազի





վրա քայլելուն: Որքան շատ էր Անդրեյը շփվում նրանց հետ, այնքան շատ էր նա խոսում և գործում նրանց նման: Իսկ նրանք բոլորն էլ հայհոյում էին: Շատ: Նրանք ծաղրում և վիրավորում էին միմյանց: Նրանք կոպիտ բառեր էին օգտագործում իրենց ուսուցիչների մասին խոսելիս: Նրանք հաճախ էին բարկանում և անազնիվ արարքներ գործում: Աստիճանաբար Անդրեյը սկսեց ավելի հաճախակի բարկություն զգալ և ավելի ու ավելի շատ պատճառներ գտնել հայհոյելու համար:

Մի երեկո, երբ մայրիկն ու հայրիկը տանը չէին, Անդրեյը և իր ավագ քույր Կատյան սկսեցին վիճել, թե որ հաղորդումը պիտի դիտեն: Անսպասելիորեն մի հայհոյանք դուրս թռավ Անդրեյի բերանից:

Կատյան ապշած նայեց նրան: «Ես կասեմ մայրիկին»:

Անդրեյը վազեց իր սենյակ և աղմուկով փակեց դուռը: Ի՞նչ էր կատարվում բոլորի հետ: Ինչո՞ւ էին բոլորն անընդհատ բարկացնում իրեն: Երբ նրա ծնողները տուն եկան, Անդրեյը կիսով չափ բացեց իր դուռը և լսեց, թե ինչպես Կատյան ասաց. «Մայրիկ, Անդրեյը հայհոյեց ինձ»:

«Ի՞նչ»: Մայրիկը զարմացած էր: «Անդրեյը երբեք չի հայհոյի»:

Անդրեյը փակեց դուռը և ընկավ իր անկողնու վրա: Նա սկսեց մտածել այն մասին, թե որքան էր փոխվել այն պահից սկսած, երբ սկսել էր հայհոյել: Նա վաղուց չէր զգացել Մուրք Հոգին:


Անդրեյը ծնկի իջավ իր անկողնու մոտ և աղոթեց: «Միբե՛լի երկնային Հայր, ներիր ինձ իմ վատ պահելանքի և բարկության համար: Կներես, որ սկսել եմ հայհոյել: Ես այլևս չեմ անի նման բաներ»:

Մինչ Անդրեյն աղոթում էր, նրա սիրտը լցվեց ջերմ զգացումներով: Ինչ նա սկսել էր հայհոյել, առաջին անգամնա իրեն երջանիկ զգաց: Նա գիտեր, որ Աստված սիրում է իրեն և կարողացավ զգալ Մուրք Հոգին: Նա իրեն ներված զգաց և գիտեր, որ կարող էր փոխվել և դառնալ ավելի լավը:

Իր աղոթքից հետո նա մայրիկին պատմեց ճշմարտությունը և ներողություն խնդրեց Կատյայից: Դրանից հետո Անդրեյն իրեն ավելի լավ զգաց: Ապաշխարությունը լավ զգացողություններ արթնացրեց նրա մեջ:

Հաջորդ օրը դպրոցում Անդրեյը չնախաճաշեց Նիկոլայի խմբի հետ: Այլ նստեց մի քանի երեխաների կողքին, որոնց չէր ճանաչում: Ժամանակ կպահանջվեր, սակայն Անդրեյը գիտեր, որ կգտներ լավ և ուրախ ընկերներ, որոնք չէին հայհոյում: Ճիշտ իր պես: ■

*Հեղինակն ստորոմ է Յոսուպոմ (ԱՄՆ):*



## ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

«Ես պատկառանքով կօգտագործեմ երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի անունները: Ես չեմ հայհոյի և կոպիտ խոսքեր չեմ օգտագործի» (Ավետարանի իմ չափանիշները):

Թերթիկի մի կողմում գրեք կամ նկարեք, թե լավ բառերն ինչ զգացողություններ են առաջացնում: Մյուս կողմում գրեք կամ նկարեք, թե վատ բառերն ինչ զգացողություններ են առաջացնում:

Կարդացեք Դևտացոց 19:12: Ինչո՞ւ է կարևոր պատկառանքով օգտագործել երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի անունները:

Հարցրեք ձեր ծնողներից կամ ղեկավարներից մեկին, թե մենք ինչու պիտի օգտագործենք լավ բառեր, և ինչպես է դա օրինել նրանց:

Ես մարտահրավեր եմ հղում ինձ . . .

---



---



---





Երեց Դենվիդ Ա. Բեդեկյան  
Տասներկու  
Առաքյալների  
Քվորում

# Ինչպե՞ս կարող եմ օգնել իմ ընտանիքին ուժեղ լինել:



Ասեք ձեր ընտանիքին, որ սիրում եք  
իրենց, և ցույց տվեք դա ձեր գործերով:



Բերեք ձեր վկայությունը այն բաների մասին,  
որոնց ճշմարտության մասին գիտեք Սուրբ  
Հոգու միջոցով: Կիսվեք ձեր վկայությամբ այն  
մարդկանց հետ, ում առավել շատ եք սիրում:



Պատրաստակամությամբ մասնակցեք  
ընտանեկան աղոթքին և սուրբ գրքերի  
ուսումնասիրությանը: Ակտիվորեն  
մասնակցեք ընտանեկան երեկոյին  
և այն զվարճալի դարձրեք:



Հավատարմորեն սովորեք Հիսուս  
Քրիստոսի վերականգնված ավետարանը,  
ապրեք դրանով և սիրեք այն:



Քույր Ջոյ Դ. Ջոնս

Երեխաների  
խմբի գերագույն  
նախագահ

# Պատրաստվեք ՏԱՃԱՐԻՆ ամեն օր

Երբ ես ինը տարեկան էի, Երեխաների Խմբում ունեի Երաշալի ուսուցիչ՝ Քույր Կոհլերը: Ես շատ ամաչկոտ էի, սակայն այնքան քնքշանք կար նրա մեջ, որ ինձ դուր էր գալիս լինել նրա հետ: Մի օր նա մեզանից յուրաքանչյուրին տվեց մի թերթիկ: Մենք բոլորս գրեցինք, թե ինչ էինք ուզում անել, երբ մեծանանք: Ես գրեցի. «Գնալ քոլեջ և ամուսնանալ տաճարում»: Իմ թերթիկը ես ամրացրի զգեստապահարանիս դռանը: Գիշերը փողոցի լապտերի լույսը ներս էր թափանցում իմ պատուհանից: Ես նայեցի իմ թերթիկին: Այն հիշեցրեց ինձ, որ ես ցանկանում էի գնալ տաճար:

Այդ ժամանակ աշխարհում կար ընդամենը 12 տաճար: Ես ցանկանում էի լինել դրանցից յուրաքանչյուրում:

Մայրս ու հայրս արձակուրդներին մեզ միշտ տաճար էին տանում: Մենք ապրում էինք Օրեգոնում (ԱՄՆ): Ամենամոտ տաճարը գտնվում էր 600 մղոն (965 կմ) հեռավորության վրա Քարոլսթոնում (Ալբերտա, Կանադա): Մեր մեքենան չունեի օդորակիչ: Ես, եղբայրս ու քույրս նստում էինք հետևի նստարանին: Մեքենայի պատուհանից մենք խոնավ սրբիչ էինք կախում: Ապա այն դնում էինք մեր ծնկներին հովանալու համար:

Մեծ ոգևորություն էր տիրում, երբ մենք վերջապես տեսանք տաճարը: Ես շատ բան չգիտեի այն ամենի մասին, թե ինչ էր կատարվում այնտեղ, սակայն ծնողներս միշտ ուրախ էին լինում, երբ դուրս էին գալիս այնտեղից: Ես գիտեի, որ տաճարը շատ կարևոր էր: Ես գիտեի, որ դա Տիրոջ տունն է: (Լուսանկարում ե՛ս եմ՝ սպիտակ վերնաշապիկով):



12 տարին բոլորելուց հետո ես տաճարային մկրտություններ կատարեցի մի շաբթ տաճարներում: Ապա, երբ հանդիպեցի իմ սպազա ամուսնուն, պարզեցի, որ նա նույնպես սիրում էր տաճարը: Մենք ամուսնացանք Մանթի Յուտա Տաճարում:

Դուք կարող եք պատրաստվել տաճարին ամեն օր: Գնացեք տաճար, երբ հնարավորություն ունեք: Դիպչեք դրա պատերին: Երբ թոռնիկը՝ Ջերրեթը, 11 տարեկան էր, նա ամեն շաբաթ օր աշխատում էր ընտանեկան պատմության վրա իր հայրիկի հետ միասին: Նա գտավ շատ նախնիների անուններ: Այժմ, երբ նա 12 տարեկան է, նա տաճարում մկրտություններ է կատարում այդ նախնիների համար:

Երբ դուք տաճարում եք, դուք կարող եք քայլել այնտեղ, որտեղ Հիսուսն է քայլում: Դա Նրա տունն է: Հուսով եմ, դուք կաղոթեք Երկնային Հորն ամեն օր, որ օգնի ձեզ պատրաստվել մտնելու տաճար և զգալ Նրա սերը: ■

ՆԱԽՈՒՆԵՐ: ԿՐԻՍՏԻՆ ԼՈՒԵՅԵՐ

# Մթառը շողում է

## Ջեյն ՄաքԲրայդ

Հիմնված է իրական պատմության վրա

«Հաճելի է ձեզ հետ լինել այստեղ Երեխաների խմբում» (Երեխաների երգարան, 254):

Մթառը քաջքշում էր իր զգեստը: Այնուամենայնիվ նրա համար տարօրինակ էր եկեղեցում զգեստ կրելը: Իր հին եկեղեցում կիրակի օրը աղջիկները հագնում էին տաքատ կամ կիսավարտիք: Բայց ոչ իր նոր եկեղեցում: Նա և իր մայրը հենց նոր էին մկրտվել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում:

Մթառը հառաչեց, երբ նայեց հայելու մեջ: Քանի որ առաջին անգամն էր որպես պաշտոնական անդամ եկեղեցի գնում, նա հուզված էր և անհանգիստ: Նախկինում նա ամբողջ ժամանակ եկեղեցում մայրիկի հետ էր մնում: Բայց այս անգամ նա գնում էր Երեխաների խումբ:

Մթառը կկոցեց աչքերը՝ նայելով իր արտացոլանքին: Իսկ ի՞նչ կլիներ, եթե չհարմարվեր: Ի՞նչ կլիներ, եթե ինքը դուր չգար մյուս երեխաներին:

«Մթառ: Դու պատրաստ ես»: Կանչեց մայրը:



Մթառը վայր իջավ աստիճաններով: «Տեսքս լա՞վ է, նա հարցրեց:

Մայրը ժպտաց: «Դու գեղեցիկ տեսք ունես»:

Մթառը ծամածոց դեմքը: «Դու ստիպված ես այդպես ասում: Դու իմ մայրիկն ես»:

«Դու իրավացի ես: Ես *խկսայես* պետք է ասեմ այդ: Որովհետև դա ճիշտ է»:

Մթառը թույլ ժպտաց: Մայրիկը միշտ ինչ-որ ձևով ստիպում էր նրան ավելի լավ զգալ: Բայց նրա մեջ դեռևս կասկածներ

կային: Ի՞նչ կլիներ, եթե երեխաներից ոչ մեկը չցանկանար խոսել իր հետ: Նա ընկերներ ուներ դպրոցում, բայց նրանք իր նոր եկեղեցու անդամները չէին: Նա կցանկանար, որ գոնե մի ընկեր իր հետ եկեղեցի գար: «Հենց նոր մի բան հիշեցի, որ պիտի անեմ», ասաց նա իր մայրիկին:

Նա աստիճաններով վերև վազեց և ծնկի իջավ մահճակալի կողքին: «Միտելի Երկնային Հայր, խնդրում եմ, օգնիր ինձ ընկերներ գտնել: Ես հավատում եմ, որ այն, ինչ միտնեմքերն ուսուցանեցին, ճշմարիտ է, բայց ես վախենում եմ»:

Մթառը մնաց ծնկի իջած և սկսեց լսել: Մի պահ անց նա զգաց մի քաղցր, խաղաղ զգացում և այլևս այնքան էլ անհանգիստ չէր:





Եկեղեցում Մթարը և մայրիկը նստեցին երեք փոքրիկ աղջիկներ ունեցող մի ընտանիքի հետ: Ծնողները ծանոթացան միմյանց հետ և մայրիկի հետ սկսեցին զրուցել մինչև ժողովի սկսվելը: Մթարն օգնեց աղջիկներին գունազարդել Հիսուսի նկարը:

Եպիսկոպոս Անդրյուսը մոտեցավ նրանց: «Քույր Քանինգհամ: Մթար: Ուրախ եմ ձեզ տեսնել այսօր»: Նա ջերմորեն ժպտաց նրանցից յուրաքանչյուրին և սեղմեց նրանց ձեռքը: Մթարը մոռացել էր, թե բոլորն ինչքան սիրալիկ էին եկեղեցում: Գուցեն, ի վերջո, նա կարողանար ընկերանալ ինչ-որ մեկի հետ:

Հաղորդության ժողովից հետո Մթարը գնաց Երեխաների խումբ: Երբ նստում էր, նա մի անհանգիստ հայացք ձգեց մյուս երեխաների վրա: Նրանք խոսում էին միմյանց հետ և, թվում էր, չնկատեցին նրան: Մթարի սիրտը նվաղեց: Ի վերջո, նա կարող էր և մենակ նստել:

Հենց այդ պահին Մթարի հասակակից մի աղջիկ ներս մտավ սենյակ: «Նա էլ է անհանգիստ», մտածեց Մթարը: «Ես կարող եմ գնալ և խոսել նրա հետ»:

Մթարը խորը շունչ քաշեց, ապա քայլեց դեպի աղջիկը: «Ողջույն, իմ անունը Մթար է: Ես նորեկ եմ: Կցանկանայի՞ք նստել իմ կողքին: Մթարը պահեց շունչը: Արդյո՞ք աղջիկը կկամենար լինել իր ընկերուհին:

Աղջկա դեմքին կիսաժպիտ հայտնվեց: «Ես Սառան եմ: Ես էլ եմ նորեկ: Իմ ընտանիքը հենց նոր է տեղափոխվել Օնտարիոյից»:

«Մայրիկս և ես երկու շաբաթ առաջ ենք մկրտվել», ասաց Մթարը: «Վստահ չեմ, թե ինչ պետք է անեմ»:

Սառայի ժպիտը լայնացավ: «Մենք միասին գլուխ կհանենք այդ ամենից»:

Մթարը և Սառան նստեցին իրենց դասարանի հետ: Երբեմն Մթարը բռնում էր Սառայի հայացքը և ժպտում: Սառան պատասխանում էր ժպիտով: Մթարը հանգիստ և երջանիկ էր զգում: Նա գիտեր, որ Երկնային Հայրը պատասխանել էր իր աղոթքին և օգնել էր իրեն ընկեր գտնել:

Դասարանում ուսուցիչը խնդրեց Մթարին և Սառային ներկայանալ:

Մթարը ոտքի կանգնեց: «Իմ անունը Մթար Քանինգհամ է: Մայրս և ես մկրտվեցինք երկու շաբաթ առաջ: Նա կանգ առավ և մի ժպիտ փայլեց նրա դեմքին, երբ նայեց իր նոր ընկերուհուն: «Իսկ սա իմ ընկերուհի Սառան է»: ■

*Հեղինակն ստյում է Կոլորադոյում (ԱՄՆ):*

## ՄՏԱԾԵՔ ԱՅԴ ՄԱՍԻՆ

Ինչպե՞ս կարող եք ողջունել որևէ մեկին, ով նոր անդամ է եկեղեցում:

# Լույս եղեք

Էլիզաբեթ Փիկերոու

Սիրեք

Մի՛ բամբասեք

Ներեք

Աջակցեք

Խրախուսեք

Հրավիրեք

Լսեք

Ընկերացեք

*«Բարձր պահեք ձեր լույսը, որպեսզի այն լույս տա աշխարհին: Միս, ե՛ս եմ լույսը, որը դուք պետք է բարձր պահեք» (3 Նեփի 18.24):*

**Մ**ենք կարող ենք լույս լինել ուրիշների համար՝ ճշմարիտ ընկեր լինելով: Կարողացեք ստորև տրված մտքերը և ավելացրեք ձեր սեփական մտքերը: Ամեն անգամ, երբ գրում եք մեկի անունը, ում հանդեպ սեր եք ուզում ցուցաբերել, ներկեք արևի մի հատվածը:

1. **Սիրեք ուրիշներին.** Դուք կարող եք շատ բան փոխել նրանց կյանքում: Քրիստոսը սիրում է նրանց, ուստի, փորձեք ցույց տալ նրանց այդ սերը:

Ո՛ւմ. \_\_\_\_\_

2. **Ներեք.** Եթե մեկը ձեզ ցավ է պատճառում, փորձեք տեսնել իրերը նրանց տեսանկյունից: Դուք, եթե ներեք, կարող եք օգնել, որ նրանց սիրտը փափկի:

Ո՛ւմ. \_\_\_\_\_

3. **Քաջալերեք.** Հաճոյախոսեք ձեր ընկերներին՝ նշելով նրանց ուժեղ կողմերը: Տեսեք նրանց մեջ լավագույնը, նույնիսկ, եթե նրանք պետք է բարելավեն որոշ գծեր: Երբ դուք փորձում եք լինել լավագույնը, դա նրանց նույնպես օգնում է:

Ո՛ւմ. \_\_\_\_\_

4. **Լսեք Սուրբ Հոգուն.** Չեր խոսքերը կարող են վատ իրադրությունը փոխել դեպի լավը: Սուրբ Հոգին կարող է օգնել մեզ իմանալ, թե ինչ ասել և ինչպես բարություն ցուցաբերել:

Ո՛ւմ. \_\_\_\_\_

5. **Երբեք մի բամբասեք.** Անբարյացակամ խոսքերը կարող են ցավ պատճառել: Ներեք ուրիշներին իրենց սխալները և անտեսեք վատ մտքերը:

Ո՛ւմ. \_\_\_\_\_

6. **Աջակցեք ձեր ընկերներին.** Պարզապես ներկա գտնվելով ձեր ընկերոջ սպորտային խաղին կամ դպրոցի միջոցառմանը, կարող եք օգնել նրանց զգալ ձեր սերը:

Ո՛ւմ. \_\_\_\_\_

7. **Հրավիրեք ուրիշներին սովորել ավետարանի մասին.** Եթե նրանք նույնիսկ չընդունեն ձեր ասածը, դուք ցույց կտաք, որ բավականաչափ հոգում եք և ուզում եք կիսվել:


Ո՛ւմ. \_\_\_\_\_

8. **Ընկերացեք տարբեր մարդկանց հետ.** Մարդկանց մեջ շատ բարություն կա, որով կարող են կիսվել: Քրիստոսն օգնում և սիրում էր բոլոր մարդկանց՝ անկախ ամեն ինչից:

Ո՛ւմ. \_\_\_\_\_

# Ավետարանի տարածումը

Օգտագործեք սրանք՝ կիսավերու Եկեղեցու պատմության վերաբերյալ պատմվածքներով:



Սեմյուել Սմիթ



Հայրում Սմիթ



Փարլի Պ. Պրատ

**Եկեղեցու կազմավորումից հետո Երկնային Հայրը ցանկացավ, որ բոլորը լսեն ավետարանի մասին: Առաջին միսիոները եղավ Ջոզեֆ Սմիթի եղբայր Սեմյուելը: Հայրումը՝ Ջոզեֆի մեծ եղբայրը, նույնպես, ուսուցանում էր ուրիշներին ավետարանի մասին: Մի օր Փարլի Պ. Պրատ անունով մի մարդ ասաց Հայրումին, որ ամբողջ օրն անցկացրել էր Մորմոնի Գիրքը կարդալով: Հայրումը նրան ավելի շատ բան ուսուցանեց Եկեղեցու մասին, և նա մկրտվեց: Հետո Փարլին ծառայեց միսիայում: Նա դարձավ Եկեղեցու ղեկավար:**

Գտեք Եկեղեցու պատմության ավելի շատ գործիչներ սուրբ գրություններում [iahona.lds.org](http://iahona.lds.org)-ում:

ՆԱԿԱՐԵՐ: ԲԵՑ ՎԻՅԵՆԱ



# Մտածել Հիսուսի մասին

## Լինդսի Թաններ

Հիմնված է իրական պատմության վրա:

Միան շատ ոգևորված էր: Նա առաջին անգամ էր եկեղեցի գալիս: Միսիոներները նրա ընտանիքին պատմել էին այս եկեղեցու մասին: Նրանք որոշել էին գալ:

Միան նայում էր իր շուրջը: Մեղանին նա տեսավ սպիտակ սփռոց: Դրա տակ ինչ-որ բան կար:

«Ի՞նչ կա այդ սփռոցի տակ»: Միան հարցրեց միսիոներներից մեկին:

Քույր Հենսոնը ժպտաց: «Դա հաղորդությունն է»:

*Հաղորդություն:* Դա մի առանձնահատուկ բան էր: Միան լսել էր, թե ինչպես էին միսիոներները պատմել դրա մասին մայրիկին ու

հայրիկին: Բայց նա վստահ չէր, թե ինչ է դա:

Բուրրը մի երգ երգեցին: Երկու տղամարդ բարձրացրին սպիտակ սփռոցը: Դրա տակ սկուտեղներով հաց էր դրված: Միան նայում էր, թե ինչպես էին նրանք մանրացնում հացը:

Երգից հետո մի մարդ աղոթք ասաց: Մեկ ուրիշը հացը բաժանեց բոլորին:

«Հացն օգնում է մեզ հիշել Հիսուսի մարմինը», - շնջաց Քույր Գարսիան:

Միան վերցրեց մի կտոր հաց: Նա պատկերացրեց, թե Հիսուսը կանգնած է իր առջև:



Ապա հնչեց մեկ այլ աղոթք: Մի մարդ փոխանցեց փոքրիկ ջրի բաժակներով սկուտեղը:

«Ջուրն օգնում է մեզ հիշել Հիսուսի արյունը», - շնչաց Քույր Գարսիան: «Նա մահացավ մեզ համար, քանի որ Նա սիրում է մեզ»:

Միան վերցրեց մի բաժակ ջուր: Նա մտածեց այն մասին, թե որքան է Հիսուսը սիրում իրեն: Նա այնպիսի զգացողություն ունեցավ, ասես Հիսուսն ամուր գրկում էր իրեն:


Ավելի ուշ Քույր Հենսոնը Միան տվեց Հիսուսի փոքրիկ նկարը: «Մենք ուտում ենք հացը և խմում ենք ջուրը, որ հիշենք Հիսուսին և խոստանանք հետևել Նրան»: Նա ժպտաց: «Ի՞նչ ես դու մտածում հաղորդության մասին»:

Միան նայեց Հիսուսի նկարին: Նա հիշեց իր ունեցած ջերմ զգացումը: Նա ժպտաց: «Դա հրաշալի էր: Ես սիրում եմ Հիսուսին»: ■

*Հեղինակն ստորում է ԱՄՆ-ի Կաթիֆորնիսա նահանգում:*

# Հիսուսը տվեց մեզ հաղորդությունը

Քիմ Վեբ Ռայդ




Հիսուսը գիտեր, որ երկրի վրա Իր ժամանակը գրեթե ավարտված էր: Նա հավաքեց Իր Առաքյալներին Վերջին Ընթրիքին: Նա տվեց նրանց հաղորդությունը և խնդրեց միշտ հիշել Իրեն:



Հիսուսը գնաց պարտեզ աղոթելու: Նա ցավ կրեց բոլոր մեղքերի և ամեն մարդու կյանքում տեղ գտած տխուր բաների համար: Հետո Նա մահացավ խաչի վրա և դրվեց գերեզման:

Հիսուսի մահանալուց հետո կիրակի օրը առավոտյան մի քանի կանայք եկան գերեզմանի մոտ: Քարը գերեզմանից հեռու էր գլորված, իսկ գերեզմանը դատարկ էր: Որտե՞ղ էր Հիսուսը:



Նա կրկին ապրում էր: Մարիամ Մագդաղենացին տեսավ Հիսուսին: Նա այցելեց Իր Առաքյալներին, որպեսզի նրանք պատրաստ լինեին ուսուցանել ավետարանը, երբ Նա վերադառնար երկինք:



Երբ ես հաղորդություն եմ ընդունում, ես հիշում եմ  
Հիսուսին: Ես հիշում եմ, որ Նա ապրեց, մահացավ և  
հարություն առավ, որպեսզի ես կարողանամ կրկին  
ապրել: ■



# Զատիկի շուշանները

Զատիկի գեղեցիկ ճերմակ շուշանները կարող են հիշեցնել մեզ այն հրաշալի օրվա մասին, երբ Հիսուսը հարություն առավ: Հինգ ճերմակ շուշաններ են թաքցված այս նկարում: Ամեն անգամ, երբ գտնեք մեկը, ասեք մի բան, որը դուք սովորել եք Հիսուսի մասին:





Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի (1915–1985) Տասներկու Առաքյալների Բվորումից

# ԱՍՏԾՈ ՋՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հավատը զորություն է, իսկ զորությունը՝ քահանայություն:

Աստված Աստված է, քանի որ Նա է մարմնավորում ողջ հավատը, և ողջ զորությունը, և ողջ քահանայությունը: Կյանքը, որը Նա ապրում է, կոչվում է հավերժական կյանք:

Իսկ թե որքանով մենք կնմանվենք Նրան, կախված է այն բանից, թե որքանով մենք ձեռք կբերենք Նրա հավատը, կստանանք Նրա զորությունը և կկիրառենք Նրա քահանայությունը: Եվ երբ մենք լիարժեք և իսկական իմաստով նմանվենք Նրան, ապա մենք նույնպես կունենանք հավերժական կյանք:

Հավատը և քահանայությունը անբաժանելի են: Հավատը զորություն է, իսկ զորությունը՝ քահանայություն: Հավատ ձեռք բերելուց հետո մենք ստանում ենք քահանայություն: Ապա, քահանայության միջոցով մենք աճում ենք հավատքում, և ունենալով ողջ զորությունը, դառնում ենք մեր Տիրոջ նման:

Այս մահկանացու կյանքի մեր ժամանակը սահմանված է որպես մի փորձաշրջան: Մինչ այստեղ ենք, մենք արտոնություն ունենք կատարելագործել մեր հավատը և զարգանալ քահանայության զորության մեջ:

Ենովքի օրերում սուրբ քահանայությունն ավելին է արել մարդկանց կատարելագործման համար, քան որևէ այլ ժամանակաշրջանում: Այն ժամանակներում Ենովքի կարգի (տես Վևու 76.57) հայտնի զորությամբ էր, որ նա և նրա ժողովուրդը փոխակերպվեցին: Եվ նրանք փոխակերպվեցին, քանի որ հավատ



ունեին և կիրառում էին քահանայության զորությունը:

Ենովքի հետ էր, որ Տերը հավերժական ուխտ կապեց, որ բոլորը, ովքեր կստանային քահանայությունը, զորություն կունենային հավատի միջոցով, կառավարելու և վերահսկելու ամեն բան երկրի վրա, կործանելու աշխարհի բանակները և փառքի ու վեհացման մեջ կանգնելու Տիրոջ առջև:

Մելքիսեդեկը նման հավատ ունեցող մարդ էր, «Եվ նրա ժողովուրդն արդարություն գործեց, և հասավ երկինք, և փնտրեց Ենովքի քաղաքը» (Ձոզեֆ Սմիթի Թարգմանություն, ՏՆնդոց 14.34): . . .

Ուրեմն, ո՞րն է քահանայության վարդապետությունը: Եվ մենք ինչպե՞ս պիտի ապրենք որպես Տիրոջ ծառաներ:

Վարդապետությունը հետևյալն է. Աստված՝ մեր Հայրը, փառավորված, կատարելագործված և վեհացված էակ է, ով ունի ողջ ուժը, ողջ

զորությունը և ողջ տիրապետությունը, ով գիտի բոլոր բաները, և անսահման են Նրա բոլոր հատկանիշները, և ով ապրում է ընտանեկան միավորում:

Դա նշանակում է, որ մեր Հավերժական Հայրը վայելում է փառքի, կատարելության և զորության այս բարձր վիճակը՝ շնորհիվ Իր կատարյալ հավատի և Իր անսահմանափակ քահանայության:

Դա նշանակում է, որ քահանայությունը հենց Աստծո զորության անունն է, և եթե մենք ուզում ենք դառնալ Նրա նման, մենք պետք է ստանանք և կիրառենք Նրա քահանայությունը կամ զորությունը, ինչպես Նա է դա կիրառում: . . .

Դա նշանակում է, որ մենք հավատքով զորություն ունենք կառավարելու և վերահսկելու բոլոր բաները՝ թե աշխարհիկ և թե հոգևոր, գործելու հրաշքներ և կատարելագործելու կյանքեր, կանգնելու Աստծո ներկայության մեջ և լինելու Նրա նման, քանի որ մենք ձեռք ենք բերել Նրա հավատը, Նրա կատարյալ կողմերը և Նրա զորությունը, կամ այլ խոսքերով ասած՝ Նրա քահանայության լրիվությունը:

Միա, ուրեմն սա է քահանայության վարդապետությունը, և չկա և չի կարող լինել ավելի մեծ բան: Մա այն զորությունն է, որը մենք կարող ենք ձեռք բերել հավատի և արդարակեցության շնորհիվ . . .

Իսկապես, քահանայության մեջ կա զորություն, զորություն, որը մենք ձգտում ենք ձեռք բերել և օգտագործել, զորություն, որն ըստ մեր ջերմեռանդ աղոթքի, թող հանգչի մեր և մեր սերունդների վրա հավիտյան: ■

Քահանայության գերագույն նիստի ելույթ, որի վերնագիրն է «Քահանայության Վարդապետությունը», Ensign, May 1982, 32–34, ողջագրությունը ստանդարտացված է:



**ԵՍ ՈՒՆԵՄ ՈՒՐԻՇ ՈՉԽԱՐՆԵՐ,  
ԷԼՍՓԵՅՑ ՅԱՆԳ**

Հարություն առած Տերն այցելեց Իր «ուրիշ ոչխարներին» (3 Նեփի 15.21) Ամերիկա մայրցամաքներում և այլ վայրերում: Նեփիացիները «շոշափեցին բևեռների նշանները նրա ձեռքերի ու նրա ոտքերի վրա. և դա նրանք արեցին, առաջ գալով մեկ առ մեկ, մինչև որ նրանք բոլորն առաջ եկան և տեսան իրենց իսկ աչքով, և շոշափեցին իրենց ձեռքերով, և իմացան անկասկած ու վկայեցին, որ այդ նա էր, որի մասին գրվել էր մարգարեների կողմից, որ պիտի գար» (3 Նեփի 11.15):

# Նաև այս համարում

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶՈՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### Հասկանալ հայրապետական օրհնությունը

Հայրապետական օրհնություններում չի ասվում ամեն բան, որ տեղի կունենա մեր կյանքում, սակայն դրանք անձնական քարտեզ են հանդիսանում մեզ համար, որ կարող են առաջնորդել մեզ դեպի մեծ երջանկություն, որ Երկնային Հայրը պատրաստել է մեզանից յուրաքանչյուրի համար:



Էջ 44

## ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Էջ 58

### ՆՐԱՆՔ ՏԵՍԱՆ ՆՐԱՆ

Նրանք հարություն առած Քրիստոսի վկաներն էին: Ինչպե՞ս կարող ենք մենք այսօր լինել վկաներ:

## ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### Հիսուսը տվեց մեզ հաղորդությունը

Մենք ամեն շաբաթ ընդունում ենք հաղորդությունը: Բայց արդյո՞ք ձեր երեխաները գիտեն, թե ինչու:



Էջ 76



ՀԻՍՈՒՍ  
ՔՐԻՍՏՈՍԻ  
ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ  
ԵԿԵՆՅՑԻ